Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1962 - Լ որոշման

ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐՔՈ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026-2035 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է Փարիզյան համաձայնագրի ներքո իր Ազգային մակարդակով սահմանված հանձնառությունները (ԱՍՀ 3.0) 2026-2035 թվականների համար: Փաստաթուղթը մշակվել է ըստ Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի 2-րդ, 9-րդ և 11-րդ մասերի, ինչպես նաև 1/CP.21 որոշման 23 և 24 կետերի, Փարիզյան համաձայնագրի այլ համապատասխան դրույթների՝ առաջնորդվելով առաջին գլոբալ գնահատման 1/CMA.5 որոշման արդյունքներով:

2. Լինելով դեպի ծով ելք չունեցող լեռնային երկիր՝ մոտ 3 միլիոն բնակչությամբ՝ Հայաստանը կլիմայի փոփոխությունների առանձնահատուկ և բազմաշերտ խնդիրների է առերեսվում: 1929-2016 թթ. ընթացքում Հայաստանում միջին ջերմաստիճանը աճել է 1.23°C-ով, իսկ ըստ կանխատեսումների մինչև 2050-ականներն այն կավելանա ևս 2.8°C-ով: Ջերմաստիճանի բարձրացմանը զուգահեռ դարեվերջին տեղումները կարող են նվազել մինչև 8.3 %-ով: Կլիմայի փոփոխություններն արդեն իսկ հանգեցնում են ավելի հաճախակի երաշտների, ջերմային ալիքների և ծայրահեղ եղանակային երևույթների, ներառյալ ջրհեղեղներն ու կարկուտները, որոնք լուրջ ռիսկեր են ստեղծում բնակչության, տնտեսության, հողերի դեգրադացիայի և պարենային անվտանգության համար: Ջերմաստիճանի բարձրացման և տեղումների քանակի փոփոխության պատճառով գյուղատնտեսության և հիդրոէներգետիկայի համար կենսական նշանակություն ունեցող ջրային ռեսուրսներն սպառվում են, ինչի հետևանքով գետերի հոսքը նվազում է, և կանխատեսվում է, որ մինչև 2050 թվականը որոշ ավազաններում չբավարարված ջրի պահանջարկը կգերազանցի 50%-ը:

3. Հայաստանի անցումը ցածրածխածնային տնտեսության և կլիմայի փոփոխությանը դիմակայուն զարգացման առավել բարդանում է դեպի ծով ելք չունենալու իրողությունից, փակ սահմաններից և ներմուծվող հանածո վառելիքից ունեցած բարձր կախվածությունից (2023 թվականին էներգիայի 73.5%-ն ստացվել է ներմուծված հանածո վառելիքից): Այս կախվածությունը սահմանափակում է ոչ միայն երկրի տնտեսական և էներգետիկ անվտանգությունը, այլ նաև համայնքներում ջեռուցման մատչելի տարբերակները:

4. Չնայած ջերմոցային գազերի (ՋԳ) գլոբալ արտանետումներում ունեցած ընդամենը 0.02% մասնաբաժնին՝ Հայաստանը հանձնառու է կրճատել ՋԳ արտանետումները՝ միաժամանակ ամրապնդելով հարմարվողականության կարողությունները՝ հաղթահարելու երկրի կլիմայական խոցելիությունը: Հայաստանի արտանետումների կրճատման նպատակներին համապատասխան՝ սահմանվել են ոչ պայմանական և պայմանական միջոցառումները: Ոչ պայմանական են այն միջոցառումները, որոնք Հայաստանը հանձնառու է իրականացնել՝ օգտագործելով ներքին և միջազգային նույնականացված ռեսուրսները՝ գործող ազգային և ոլորտային ռազմավարությունների, քաղաքականությունների և նախատեսված ներդրումների շրջանակներում: Պայմանական միջոցառումներն ուղղված են 2035 թվականի արտանետումների կրճատման առավել հավակնոտ նպատակի ապահովմանը, որն անհնար է իրականացնել առանց լրացուցիչ միջազգային միջոցների ներգրավման:

5. Հիմնվելով Փարիզյան համաձայնագրի շրջանակներում նախկին հանձնառությունների վրա՝ Հայաստանի ԱՍՀ 3.0-ն արտացոլում է երկրի կլիմայական հավակնությունների զգալի

առաջընթացը: Տնտեսության ողջ ծավալի ընդգրկումով՝ այն 2035 թվականի համար նախատեսում է ՋԳ արտանետումների կրճատում 1990 թվականի մակարդակի համեմատ՝ ոչ պայմանական 44% և պայմանական 52% չափով (Աղյուսակ 1):

6. Առաջնորդվելով ազգային և միջազգային առաջնահերթություններով՝ ԱՍՀ 3.0-ն ներառում է մեղմման միջոցառումներ հիմնական ոլորտներում, ինչպես նաև հարմարվողականության միջոցառումներ՝ ուղղված կլիմայական ռիսկերի նվազեցմանը և կայուն զարգացման ապահովմանը:

7. ԱՍՀ 3.0-ն առաջնահերթություն է տալիս հարմարվողականությանը՝ որպես ազգային հրամայական, և համատեղում է մեղմման միջոցառումները՝ մարտահրավերները փոխարինելով հնարավորությունների: Առանցքային ոլորտներում հարմարվողականության գործողությունները նպաստում են կլիմայական փոփոխությունների նկատմամբ Հայաստանի խոցելիության նվազեցմանը, ինչպես նաև հնարավորություն տալիս անցնելու զարգացման ցածր արտանետումներով ուղու:

8. Հայաստանն իր ԱՍՀ 3.0-ի շրջանակում ներառում է գենդերային բաղադրիչը՝ համահունչ Փարիզյան համաձայնագրի մարդու իրավունքների և գենդերային հավասարության սկզբունքներին և ներառելով տարբեր կառույցների և քաղաքացիական հասարակությանը՝ արձագանքելու կանանց, աղջիկների և խոցելի խմբերի վրա կլիմայական փոփոխությունների անհամաչափ ազդեցություններին, այդ թվում՝ ծայրահեղ եղանակային երևույթների ընթացքում գենդերային բռնության ռիսկերի աճին:

9. ԱՍՀ 3.0-ն արտահայտում է անցումն առավել թափանցիկ, հաշվետու և արդյունքահեն կլիմայական կառավարման: Այն համահունչ է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի և ոլորտային ռազմավարությունների, ինչպես նաև ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ), Գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը, Մեթանի գլոբալ պարտավորության և Կոնվենցիայի կողմերի 28-րդ նստաշրջանում ընդունված «Ատոմային էներգիայի մասին» հռչակագրի հետ: ՀՀ կառավարությունը հաստատում է, որ ԱՍՀ-ում ներկայացված հանձնառություններն արտացոլում են երկրի ռազմավարական ուղղվածությունը կլիմայական գործողությունների ոլորտում:

10. ԱՍՀ 3.0-ն ընդգծում է Հայաստանի հանձնառությունը՝ ապահովելու արդար անցում, ամրապնդված դիմակայունություն և ցածրածխածնային զարգացում՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների, ոլորտային միջոցառումների և ներդրումների համակարգված պլանավորման և իրագործման համադրությամբ:

11. ԱՍՀ 3.0 մշակման գործընթացն իրականացվել է ներառական և համակարգված կառավարման միջոցով՝ ապահովելով պետական կառավարման համակարգի համապատասխան մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, գիտակրթական հաստատությունների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների մասնակցությունը:

Աղյուսակ 1. ՋԳ արտանետումների կրճատման պայմանական և ոչ պայմանական թիրախներ

1990 թ. բազային տարվա ՋԳ արտանե-տումներ (Գգ CO_2 համ.)	**Ոչ պայմանական**		**Պայմանական**	
	2035 թ. թիրախ (Գգ CO_2 համ.)	2035 թ. արտանետումների կրճատումը 1990 թ. մակարդակից (%)	2035 թ. թիրախ (Գգ CO_2 համ.)	2035 թ. արտանետումների կրճատումը 1990 թ. մակարդակից (%)
26,014	**11,404**	**44%**	**13,516**	**52%**

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՍՀ 3.0) ՀՍՏԱԿՈՒԹՅԱՆ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՈՒ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Քանակապես որոշելի տեղեկատվություն հղումային տարվա վերաբերյալ (ներառյալ ելակետային տարին՝ ըստ անհրաժեշտության)	
ա) Հղումային տարի(ներ), ելակետային տարի(ներ), հղումային ժամանակաշրջան(ներ) կամ այլ մեկնարկային կետ(եր)	ԱՍՀ 3.0-ի թարմացված տարբերակի համար ելակետային տարին տնտեսության բոլոր ուղղություններով ՋԳ արտանետումների նվազեցման նպատակների համար 1990 թվականն է: Օգտագործվել են 1990-2022 թթ. արտանետումների վիճակագրական տվյալները՝ ըստ ազգային գույքագրման վերջին հասանելի արդյունքների: Որպես ՋԳ արտանետումների կանխատեսման մեկնարկային տարեթիվ՝ օգտագործվել է 2022 թվականը:
բ) Հղումային ցուցանիշների վերաբերյալ քանակական տեղեկատվություն, դրանց արժեքները հղումային տարի(ներ)ում, ելակետային տարի(ներ)ում, հղումային ժամանակաշրջան(ներ)ում կամ այլ մեկնարկային կետ(եր)ում և, ըստ անհրաժեշտության, նպատակային տարում	**Ելակետային տարվա՝ 1990 թվականի ընդհանուր ՋԳ արտանետումները** (ներառյալ հողօգտագործում, հողօգտագործման փոփոխություն և անտառտնտեսություն՝ ՀՕՀՕՓԱՏ) կազմում են **26,014 Գգ CO_2 համարժեք:** Քաղաքականության փոփոխությունների և բարելավված տվյալների հասանելիության պարագայում Հայաստանը կարող է 2030 թվականին վերանայել արտանետումների ծավալները:
գ) Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի 6-րդ պարբերության մեջ հիշատակվող ռազմավարությունների, ծրագրերի և գործողությունների կամ ԱՍՀ-ների բաղադրիչ հանդիսացող քաղաքականությունների և միջոցառումների համար, որոնց դեպքում վերևում նշված 1(բ) պարբերությունը կիրառելի չէ, Կողմերը պետք է ներկայացնեն համապատասխան այլ տեղեկատվություն - **Կիրառելի չէ:**	
դ) Հղման ցուցանիշի նկատմամբ թիրախ՝ արտահայտված թվային տարբերակով, օրինակ՝ տոկոսային կամ կրճատման	• **Ոչ պայմանական թիրախ՝ 44%** ՋԳ նվազում 1990 թվականի մակարդակի համեմատ մինչև 2035 թվականը (11,404 Գգ CO_2 -ին համարժեք նվազում) • **Պայմանական թիրախ՝ 52%** ՋԳ-ների նվազում 1990 թվականի մակարդակի համեմատ՝ մինչև 2035 թվականը (13,516 Գգ CO_2-ին համարժեք նվազում)

չափով	
ե) Հղումային ելակետերի չափման համար օգտագործված տվյալների աղբյուրները	• 1990 թ. արտանետումները՝ ըստ Ազգային կադաստրի տվյալների • Պատմական Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) և կանխատեսում՝ ՀՀ վիճակագրական կոմիտե (ԱՐՄՍՏԱՏ) և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Համաշխարհային տնտեսական հեռանկարների զեկույց (2025 թ. ապրիլ) • Բնակչություն՝ ԱՐՄՍՏԱՏ և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ • Էներգետիկայի և արտանետումների տվյալներ՝ Հայաստանի էներգետիկ հաշվեկշիռ, Հայաստանի երկամյա առաջընթացի երրորդ զեկույց (ԵԱՋ), ՋԳ-ՑԱՋԵՌ
զ) Տեղեկատվություն այն պայմանների մասին, որոնց դեպքում Կողմը կարող է թարմացնել հղումային ցուցանիշների արժեքները	Ելակետային տարվա (1990 թ.) արժեքը կարող է ենթարկվել վերահաշվարկի և տեխնիկական ճշգրտումների՝ քաղաքականության փոփոխություններին արձագանքելու, տվյալների հավաքագրման համակարգերի բարելավման, գիտական լավագույն հասանելի արդյունքների և Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (ԿՓՓՄԽ) մեթոդաբանությունների և Թափանցիկության ընդլայնված շրջանակի պահանջներին համապատասխանեցման արդյունքում: Թարմացումները կարող են կապված լինել նաև ներդրվող Չափումների, հաշվետվողականության և հավաստագրման (ՉՀՀ) համակարգերի կատարելագործմամբ: Ելակետային տարվա թարմացված արժեքները կարտացոլվեն հետագա Երկամյա թափանցիկության զեկույցներում և Ազգային կադաստրի հաշվետվություններում:
2. Իրագործման ժամկետները և իրագործման ժամանակահատվածները	
Ժամկետը և իրագործման ժամանակահատվածը	Հայաստանի ԱՍՀ 3.0-ի իրագործման ժամանակահատվածն է 2026–2035 թթ.: Այդ տասնամյա ժամանակահատվածն արտացոլում է Հայաստանի համար Փարիզյան համաձայնագրով սահմանված մեղմման և հարմարվողականության միջոցառումների պլանավորման հեռանկարը:
Թիրախը մեկ տարվա՞ է, թե՞ բազմամյա	Հայաստանի ԱՍՀ 3.0-ն սահմանում է մեկ տարվա թիրախ՝ 2035 թվականի համար նախատեսելով տնտեսության բոլոր ուղղություններով ՋԳ արտանետումների **44%** (ոչ պայմանական) և **52%** (պայմանական) կրճատում 1990 թ. մակարդակի համեմատ:
3. Ոլորտը և ընդգրկման շրջանակը	
ա) Թիրախի ընդհանուր	Հայաստանի թարմացված ԱՍՀ 3.0-ը կարևոր առաջընթաց է երկրի կլիմայական հավակնության իմաստով՝ 2026–2035 թթ. համար սահմանելով հստակ, ամբողջ տնտեսությունը ներառող մեղմման և հարմարվողականության նպատակներ: Փաստաթուղթը սահմանում

Նկարագրությունը	է ՋԳ արտանետումների կրճատման ինչպես ոչ պայմանական, այնպես էլ՝ պայմանական թիրախներ 1990 թվականի մակարդակի համեմատությամբ՝ արտահայտելով Հայաստանի ռազմավարական անցումը ցածր արտանետումներով և կլիմայադիմակայուն զարգացող մոդելի՝ հանձնառու հասնելու Փարիզյան համաձայնագրով սահմանված գլոբալ տաքացման 1.5°C-ից ցածր նպատակին: Հանձնառությունը ներառում է մեղմման միջոցառումներ արտանետող բոլոր հիմնական ոլորտներում և հարմարվողականության պլանավորում առաջնահերթ ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, ջրային ռեսուրսները և ենթակառուցվածքները: Այս մոտեցմամբ ընդլայնվում է կլիմայական կառավարման համակարգը՝ համահունչության, բարելավված միջոլորտային փոխկապակցվածության և կատարելագործված հաշվետվողականության միջոցով: ***Համապատասխանեցում միջազգային քաղաքականություններին*** Հայաստանը հետևողականորեն զարգացրել է կլիմայական և բնապահպանական իր հանձնառությունները՝ որպես կողմ ակտիվ մասնակցելով միջազգային բազմաթիվ համաձայնագրերի, մի շարք միջազգային և տարածաշրջանային բնապահպանական կոնվենցիաների, այդ թվում՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիային (ԿՓՇԿ) (1993 թ.), Փարիզյան համաձայնագրին (2017 թ.), Կիոտոյի արձանագրությանը (2002 թ.) և դրա՝ Դոհայի ուղղմանը: Հայաստանը վավերացրել է նաև ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիան (1993 թ.), ՄԱԿ-ի՝ «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիան (1994 թ.), Մոնրեալի արձանագրության մի շարք հիմնական ուղղումները և Կիգալիի փոփոխությունը, ինչպես նաև Բազելի, Ռոտերդամի և Ստոկհոլմի կոնվենցիաները: Տարածաշրջանային մակարդակում Հայաստանը ստորագրող կողմ է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի շրջանակներում ընդունված մի շարք կոնվենցիաների՝ «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիան (1997թ.), Էսպոյի կոնվենցիան՝ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» (1996թ.), Օրհուսի կոնվենցիան՝ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին»(2001թ.),, և Ռամսարի կոնվենցիան՝ «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» (1993թ.): Բացի սրանցից Հայաստանը կենսաբազմազանության պահպանման ոլորտում պարտավորություններ է ստանձնել նաև Բեռնի «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» և միգրացիայի տեսակների վերաբերյալ Բոննի «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիաների շրջանակներում: Այս անդամակցությունները լրացվում են Հայաստանի՝ 2024 թվականին Մեթանի գլոբալ խոստմանը միացմամբ, որը նպատակ ունի մինչև 2030 թվականը մեթանի արտանետումները 2020 թվականի մակարդակից նվազեցնել 30%-ով, ինչպես նաև 2023 թ. «Ատոմային էներգիայի եռապատկման մասին» հռչակագրին աջակցությամբ: Ազգային մակարդակով սահմանված գործողությունների (ԱՍԳ 2) 2021-2030 թվականների համար ընդունումը 2021 թվականին և ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ իրականացումը լրացուցիչ ինստիտուցիոնալ հիմք են ապահովել համաշխարհային և տարածաշրջանային բնապահպանական կառավարման շրջանակներում Հայաստանի բնապահպանական կառավարման համար: ***Ազգային կլիմայական ռազմավարություններ և քաղաքականություններ*** ԱՍՀ 3.0-ն հիմնված է Հայաստանի կլիմայական քաղաքականության զարգացող շրջանակի վրա: «Կլիմայի մասին» օրենքը իրավական հիմք է ապահովում երկրում մեղմման և հարմարվողականության միջոցառումների իրականացման համար՝ ներառյալ

	Թափանցիկության ընդլայնված շրջանակին համահունչ ՉՀՀ համակարգի ստեղծումը: Կառավարության կողմից 2023 թվականին հաստատված ՋԳ-ՑԱՋԵՌ-ն նախատեսում է մինչև 2050 թ. ՋԳ արտանետումները նվազեցնել մինչև 2.07 տ CO_2 համ./մեկ շնչի հաշվով: Հայաստանի ԱՍԳ 2-ը սահմանել էր արտանետումների 40% կրճատման հանձնառություն մինչև 2030 թ.: Հայաստանի 2021-2025 ՀԱԾ-ը սահմանում է 7 առաջնահերթ ոլորտ՝ ջրային ռեսուրսներ, գյուղատնտեսություն, էներգետիկա, առողջապահություն, ենթակառուցվածքներ և բնակավայրեր, անտառային տնտեսություն, զբոսաշրջություն: Հաջորդ՝ 2026–2030 թթ. ՀԱԾ-ը կշարունակի ինստիտուցիոնալացնել դիմակայունությունը զարգացման պլանավորման շրջանակներում:
բ) ԱՍՀ-ում ընդգրկված ոլորտները, գազերը, կատեգորիա-ներն համահունչ Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի ուղեցույցների	• **Ոլորտներ (ԿՓՓՄԽ կատեգորիաներ)** ○ Էներգետիկա ○ ԱՊԱՕ ○ Գյուղատնտեսություն ○ ՀՕՀՕՓԱՏ ○ Թափոններ • **Գազեր**[1] ○ Ածխածնի երկօքսիդ (CO_2) ○ Մեթան (CH_4) ○ Ազոտի ենթօքսիդ (N_2O) ○ Ֆտորացված գազեր (F-գազեր) **Ոլորտային ռազմավարություններ և քաղաքականություններ** Հայաստանն իր կլիմայական հանձնառությունները սահմանել է մի շարք ռազմավարական և կարգավորիչ գործողությունների միջոցով. ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը, ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը (մինչև 2040 թ.), Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագիրը, Աղբահանության համակարգի ռազմավարության կիրարկումն ապահովող 2025-2032 թվականների միջոցառումների ծրագիրը, ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն, ՋԳ-ՑԱՋԵՌ, ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ և դրա ճանապարհային քարտեզը և այլ փաստաթղթեր: Հայաստանի ԱՍՀ 3.0-ն կառուցվում է այդ ոլորտային ռազմավարությունների և քաղաքականությունների հիման վրա՝ համահունչ դրանց նպատակներին, ժամանակացույցին և միաժամանակ բարձրացնելով հավակնությունները:

[1] Մեթոդաբանություն՝ հիմնված է 2006 թ. ԿՓՓՄԽ ուղեցույցների և համապատասխան թարմացումների վրա:

	1. Էներգետիկա • **Ոչ պայմանական թիրախ -** 56% նվազում • **Պայմանական թիրախ** - 62% նվազում **Էներգետիկայի ոլորտը ՋԳ արտանետումների խոշորագույն աղբյուրն է՝ կազմելով Հայաստանի ընդհանուր ՋԳ արտանետումների 66%-ը 2022 թվականին (զուտ արտանետումների 65%-ը):** Էներգետիկ ոլորտից արտանետումները 1990-2022 թթ. նվազել են ավելի քան 3 անգամ, ինչը պայմանավորված է տնտեսության կառուցվածքային փոփոխություններով, հետխորհրդային շրջանում արդյունաբերական ակտիվության անկումով, ածխի և մազութի փոխարեն բնական գազի օգտագործման աճով, ինչպես նաև Հայաստանի ատոմակայանի վերագործարկմամբ: 2023 թվականի դրությամբ էլեկտրաէներգիայի արտադրության ամենամեծ մասնաբաժինը (42.2%) ընկնում է ջերմաէլեկտրակայաններին, ապա՝ ատոմային էներգիային (30.7%), որոնք մնում են հիմնական բազային գեներացիոն աղբյուրները: Ջրային պաշարների կրճատման և ենթակառուցվածքների մաշվածության հետևանքով հիդրոէներգիայի մասնաբաժինը նվազել է՝ հասնելով 18.7%-ի: Արագորեն աճում է արևային էներգիայի օգտագործումը, մինչդեռ քամու էներգիայի մասնաբաժինը մնում է աննշան. երկուսը միասին կազմում են էներգիայի արտադրության 8.4%-ը: Վերջնական սպառման համար առկա ընդհանուր էներգիայի (2,858.9 տոննա նավթային համարժեք (կտ ն.հ.)) 3%-ը (165.1 կտ ն.հ.) կազմել են բաշխման և փոխանցման կորուստները: Հայաստանը ներգրավված է տարածաշրջանային էլեկտրաէներգիայի առևտրում՝ հիմնականում Իրանի և Վրաստանի հետ: 2023 թվականին Հայաստանը փոխանակման համաձայնագրով Իրան է արտահանել ավելի քան 1,095.6 միլիոն կիլովատտ-ժամ (կՎտժ) էլեկտրաէներգիա, Վրաստան՝ 144.7 միլիոն կՎտժ: Իրանից և Վրաստանից ներմուծումները սահմանափակ են և հիմնականում ուղղված են սեզոնային հավասարակշռման ապահովմանը: Հայաստանը գիտակցում է, որ վերականգնվող էներգիայի աղբյուրների արդյունավետ ինտեգրումն ապահովելու և հուսալի, կլիմայադիմակայուն էներգամատակարարում ապահովելու համար էլեկտրաէներգետիկ ցանցի ենթակառուցվածքներն արդիականացման և տեխնիկական վերազինման կարիք ունի: Չնայած Հայաստանի տնտեսական աճին և աղքատության նվազեցման գործում առաջընթացին՝ երկիրը դեռևս առերեսվում է ուղղակի ներդրումների սահմանափակությամբ և ցածր կապակցվածությամբ պայմանավորված մարտահրավերների: Որպես հանածո վառելիքի պաշարներ չունեցող երկիր՝ Հայաստանը զգալիորեն կախված է ներմուծվող էներգիայից. 2023 թվականին էներգիակիրների 73.5%-ը ներմուծվել է: Երկաթուղային փոխադրումները սահմանափակված են՝ պայմանավորված Ադրբեջանի և Թուրքիայի հետ երկաթուղային կապերի անգործունակությամբ: Հայաստանի ՀՆԱ էներգատարությունը (մեկ միավոր ՀՆԱ-ի վրա օգտագործվող էներգիայի չափը) 2019 թվականից ի վեր (բացառությամբ 2020 թվականի) նվազման միտում ունի: 2023 թվականին գրանցվել է 13.4% նվազում (կապված տնտեսական կառուցվածքի փոփոխություններով և վերականգնվող էներգետիկայի զարգացմամբ)՝ պայմանավորված ՀՆԱ-ի 11.3% աճով: Սա էներգաարդյունավետության մակարդակի բարելավման միտում է, սակայն ԱՍՀ 3.0-ի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ են կառուցվածքային և տեխնոլոգիական հավելյալ բարեփոխումներ: Հանածո վառելիքից խիստ կախվածությունը բացասաբար է ազդում ոչ միայն ՋԳ արտանետումների վրա, այլև վնասում է Հայաստանի անտառային տարածքներն ու ազդում հանրային առողջության վրա: 1991–1995 թթ. էներգետիկ շրջափակման ընթացքում լայնածավալ անտառահատումները վնասել են անտառային էկոհամակարգերը: Հետագա տարիներին գազիֆիկացման և տնտեսական աճի

	արդյունքում փայտանյութի օգտագործման ծավալները զգալիորեն նվազել են, սակայն համայնքներում բնակչության խոցելի խմբերը դեռ ապավինում են վառելափայտին՝ որպես տաքացման միջոց: 2018–2023 թթ. տնային տնտեսությունների կողմից վառելափայտի սպառումը մնացել է կայուն՝ կազմելով 47.3 կտ ն.հ.: Ներսենքային օդի աղտոտման առաջացրած առողջական խնդիրների նկատմամբ առավելապես խոցելի են կանայք և երեխաները, որոնք կրում են վառելափայտի օգտագործման հետևանքների մեծ մասը: ԱՍՀ 3.0-ի համար Հայաստանի էներգետիկայի ոլորտի մեղմման միջոցառումներն ուղղված են արեգակնային էներգիայի օգտագործման մասնաբաժնի ավելացմանը և փախուստային արտանետումների կրճատմանը՝ հիմք ընդունելով ազգային և ոլորտային փաստաթղթերը: **Ոչ պայմանական միջոցառումներ** ● Նվազեցնել ՋԳ արտանետումները փախուստային մեթանի աղբյուրներից՝ ներդրումներ կատարելով բնական գազի տեղափոխման, բաշխման ցանցերի և պահեստավորման օբյեկտներում: ● Ընդլայնել վերականգնվող էներգիայի արտադրության մասնաբաժինը և խթանել վերականգնվող էներգետիկայի լայնածավալ տեղակայմանը՝ կարևորելով արևային ֆոտովոլտային հզորությունների զարգացումը (**1,200 ՄՎտ** տեղակայված հզորություն մինչև 2035 թվականը): ● Ապահովել կուտակիչ հզորությունների իրագործելիության գնահատումը և մինչև 150 ՄՎտ կուտակիչ հզորությամբ կայան/կայանների կառուցումը: ● Բարելավել համընդհանուր էներգաարդյունավետությունը (ԷԱ)՝ առաջնահերթություն տալով առանցքային ներդրումներին, այդ թվում՝ բնակելի և հանրային շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանը (**159** բազմաբնակարան շենք, **50** առողջապահական հաստատություն, **800** դպրոց ու մանկապարտեզ մինչև 2035 թվականը): ● Ինտեգրել կայուն քաղաքային շարժունակություն՝ խթանելով էլեկտրական փոխադրամիջոցների օգտագործումը, այդ թվում՝ հանրային տրանսպորտային ցանցում (ցածրածխածնային քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացում Երևանում, այդ թվում՝ վերգետնյա էլեկտրական տրանսպորտային պարկի արդիականացում տրոլեյբուսների և մինչև **250** 18 մետրանոց հոդակապված նոր էլեկտրական ավտոբուսների ներմուծմամբ, Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանների կառուցման, գնացքների և ենթակառուցվածքների արդիականացման միջոցով): ● Խթանել անցումը էլեկտրական փոխադրամիջոցների (**172,000** էլեկտրատրանսպորտային միջոցների ներմուծում մինչև 2035 թվականը): ● Գյուղատնտեսության ոլորտում բարձրացնել էներգիայի և ջրի օգտագործման արդյունավետությունը՝ արդիականացնելով ոռոգման համակարգերը և գործելակերպերը (**50,000** հեկտար բարելավված ոռոգման գործելակերպ մինչև 2035 թվականը): **Պայմանական միջոցառումներ** ● Ընդլայնել վերականգնվող էներգետիկայի ներդրումը՝ ավելացնելով արևային ֆոտովոլտային հզորությունները (**1,375 ՄՎտ** տեղակայված հզորություն մինչև 2035 թվականը)՝ լրացուցիչ ներդրումների և միջազգային աջակցության միջոցով:

- Խթանել հիդրոէներգիայի զարգացումը՝ ներառյալ պոմպային պահեստային կայանների իրագործելիության գնահատումը և կառուցումը՝ էլեկտրական ցանցի ճկունության և կուտակման կարողությունների բարձրացման նպատակով:
- Զարգացնել հողմային էներգիայի արտադրությունը՝ ֆինանսավորման ներգրավման և միջազգային աջակցության միջոցով (**200 ՄՎտ** տեղակայված հզորություն մինչև 2035 թվականը):

Փախուստային արտանետումներ

Հայաստանը սահմանափակ էներգետիկ ռեսուրսներով երկիր է, որտեղ հիմնական էներգակրի՝ բնական գազի սպառումն ամբողջությամբ ապահովվում է ներմուծման միջոցով՝ հիմնականում Ռուսաստանից և որոշ չափով՝ Իրանից:

Մեթանի փախուստային արտանետումների կրճատումը էներգետիկ ոլորտի մեղմման քաղաքականության առաջնահերթություններից է՝ կենտրոնանալով գազի տեղափոխման, բաշխման և պահեստավորման համակարգերում կորուստների նվազեցման վրա: Մեթանի արտանետումների կրճատման քաղաքականության մշակման հիմքում ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) 2023 թվականի 32-Ն որոշումն է և ՀԾԿՀ-ի կողմից հաստատված «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) մոտ 363 միլիոն ԱՄՆ դոլար ներդրումային ծրագրի շրջանակում 2025-2029 թթ. հիմնական միջոցառումները, որոնք նախատեսում են Աբովյանի ստորգետնյա գազի պահեստի ընդլայնում, գազի տեղափոխման և բաշխման ցանցերի վերակառուցում և արդիականացում, ինչպես նաև՝ նոր բաժանորդների միացում:

Տեխնիկական միջոցառումներին զուգահեռ ՀԾԿՀ-ն նույն որոշման շրջանակում ներդրել է արդյունքների վրա հիմնված կարգավորող մեխանիզմ՝ սահմանելով գազի կորուստների ընդունելի շեմեր՝ ելնելով սակագնային քաղաքականությունից: Եթե փաստացի կորուստները գերազանցում են սահմանված շեմը, դրանց ծախսը կրում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն, իսկ եթե կորուստները ցածր են, ապա խնայողությունները մնում են որպես ընկերության շահույթ: Մինչև 2025 թվականի օգոստոս ընդունելի գազի ընդհանուր կորուստները սահմանվել են ներմուծված գազի 5.07%-ի չափով, այդ թվում՝ փոխադրման ցանցում 3.54%, բաշխման ցանցում 1.53%: 2025 թվականից այս շեմը կնվազեցվի՝ կազմելով 3.9%՝ ներառյալ 2.4% փոխադրման և 1.5% բաշխման ցանցերի համար: Սկսած 2030 թվականից՝ կորուստների ընդունելի մակարդակը կորոշվի ըստ ներմուծված գազի փաստացի ծավալների՝ սահմանելով 2.0% մինչև 3 մլրդ մ^3 փոխադրման համար և 1.5%՝ 3 մլրդ մ^3 գերազանցող քանակի համար, իսկ բաշխման ցանցի մասով՝ 1.4%:

Վերականգնվող էներգետիկա

Հայաստանը նպատակադրել է կառուցել մաքուր, կայուն և էներգապես անկախ ապագա՝ նվազեցնելով կախվածությունը ներկրվող վառելիքից և դիվերսիֆիկացնելով էներգիայի իր աղբյուրները: Հայաստանը նախատեսում է մինչև 2030 թվականը ընդլայնել արևային էներգիան մինչև 1,000 ՄՎտ հզորության և էլեկտրաէներգիայի սպառման մեջ վերականգնվող աղբյուրների մասնաբաժինը հասցնել առնվազն 15%-ի՝ ամրապնդելով ազգային էներգետիկ անվտանգությունը:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի արագ զարգացումն իրականացվել է տեղական և միջազգային աջակցության միջոցով: Առաջին քայլերն ուղղված էին ինստիտուցիոնալ կառույցների և համագործակցության մեխանիզմների ստեղծմանը: Օրենսդրական փոփոխությունները ևս խթանեցին զարգացումը, մասնավորապես՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-262-Ն օրենքով փոփոխության միջոցով բարձրացվեց ինքնավար էներգաարտադրողների տեղակայանքների դրվածքային հզորության շեմը 150 կՎտ-ից մինչև 500 կՎտ՝ թույլ տալով բնակիչներին ավելցուկային էլեկտրաէներգիան վաճառել ցանցին: Սակայն 2022 թ. օգոստոսին

	օրենսդրական փոփոխություններով շեմը նորից նվազեցվել է՝ սահմանելով 150 կՎտ: Այս փոփոխություններն ուղեկցվում են շուկայի ազատականացման գործընթացներով: Այս քաղաքականությունը բերեց մասնավոր հատվածի ակտիվ ներգրավման և ներդումների: Բացի դրանից, վերականգնվող էներգետիկայի ներդրումները զարգացնելու նպատակով Հայաստանն ընդունել է վերականգնվող էներգետիկայի խթանման գործողությունների ծրագրեր, մաքուր տեխնոլոգիաների ներմուծման արտոնյալ պայմաններ, ֆինանսավորման ու վարկային մեխանիզմներ: **Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել արևային ֆոտովոլտային կայանների ոլորտում՝ ներառյալ վերջին ներդրումները արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 և Մասրիկ-2 կայանների շահագործման, ինչպես նաև Այգ-1 կայանի կառուցման ուղղությամբ:** Այս նախագծերը մոտեցնում են Հայաստանը 1,000 ՄՎտ տեղակայված հզորության նպատակին: Այնուամենայնիվ, առկա են ենթակառուցվածքային խոչընդոտներ՝ ցանցի ընդունման սահմանափակումներ, կարգավորման դժվարություններ, կուտակիչ հզորությունների բացակայություն և հարևան երկրների հետ սահմանափակ փոխկապակցվածություն: Այս խոչընդոտների պատճառով ԱՍՀ 3.0-ի ոչ պայմանական միջոցառումներում մինչև 2035 թվականը նախատեսվում է չափավոր աճ (առանց հիմնական ենթակառուցվածքային խոչընդոտների հաղթահարման): **Հայաստանը նախատեսում է զարգացնել քամու էներգիան՝ որպես երկարաժամկետ դիվերսիֆիկացման ռազմավարության մաս:** Թեև տեխնիկական ներուժը գերազանցում է 1,000 ՄՎտ, տնտեսական տեսանկյունից 500 ՄՎտ գնահատվում է իրագործելի: Ներկայումս շահագործվում է միայն 3,6 ՄՎտ դրվածքային հզորությամբ հողմակայաններ: Քամու էներգիայի լայնածավալ զարգացում ակնկալվում է 2032 թվականից հետո՝ մինչև 2035 թվականը ունենալով 200 ՄՎտ տեղակայված հզորություն: Սա պահանջում է հիմնական խոչընդոտների հաղթահարում՝ ներառյալ սարքավորումների տեղափոխման և ցանցային ինտեգրման հարցերը: Արտաքին աջակցության դեպքում հողմային էներգիան կարող է զգալի դեր ունենալ Հայաստանի կլիմայական և էներգետիկ նպատակների իրականացման գործում՝ ԱՍՀ 3.0 շրջանակներում: **Ի տարբերություն վերոնշյալի՝ հիդրոէներգիայի մասնաբաժինը պատմականորեն գերակշռել է, սակայն հետագայում նվազել է՝ 2015 թվականի 33% մասնաբաժնի համեմատ 2023 թվականին կազմելով 19%:** Այս փոփոխությունը պայմանավորված է ջրային պաշարների նվազմամբ և ենթակառուցվածքների մաշվածությամբ: Այս պայմաններում վերականգնվող էներգիայի պոտենցիալի լիարժեք օգտագործումն ու ցանցի կայունության ապահովումը պահանջում են կուտակման նոր լուծումների զարգացում: Դրանց շարքում պոմպային կուտակիչ հիդրոէլեկտրակայանները ճանաչվել են որպես առավել հասունացած, արդյունավետ և հուսալի երկարաժամկետ լուծում: Դրանք կօգնեն կուտակել արևային և հողմային ավելցուկային էներգիան, բարելավել ցանցի կարգավորումը և ապահովել պահուստային հզորություն: **Հայաստանը ատոմային էներգիան դիտարկում է որպես ցածր արտանետումներով էներգետիկ ռազմավարության առանցքային հենասյուն, որն ապահովում է էներգետիկ անվտանգությունը և կլիմայական նպատակները:** Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացումը մինչև 2036 թ. առանցքային դեր ունի այս մոտեցման համար: Հայաստանը սերտ համագործակցում է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ և պարբերաբար ստուգումներ անցկացնելու միջոցով պահպանում է միջազգային անվտանգության չափանիշները: ԿՓՇԿ Կողմերի 28-րդ համաժողովի շրջանակներում Հայաստանը միացել է «Ատոմային էներգիայի եռապատկման հռչակագրին» մինչև 2050 թ. և այժմ քննարկում է հետագա ատոմային հզորությունների ներդրման հնարավորությունները 2036 թվականից հետո՝ կառավարության կողմից ստեղծված աշխատանքային խմբի միջոցով:

	Էներգաարդյունավետություն **ԷԱ-ն Հայաստանի էներգետիկ անցման ռազմավարական առաջնահերթություններից է:** Հայաստանի ԷԱ քաղաքականությունը ձևակերպվել է դեռևս 2004 թվականին և շարունակել է զարգանալ ազգային ծրագրերի, իրավական նորմատիվային դաշտի բարեփոխումների և ստանդարտների միջոցով: Շենք-շինությունների ոլորտում քաղաքականության հիմնական գործիքները ներառում են նոր և վերանորոգվող շենքերի էներգետիկ սպառման արդյունավետության չափանիշների պարտադիր շինարարական նորմերը և ազգային ստանդարտները, որոնցով մասնավորապես կարգավորվում է էներգետիկ աուդիտի, էներգետիկ անձնագրերի և պիտակավորման գործընթացը: Խիտ կառուցապատված քաղաքային հատվածներում աճող ջերմաստիճանը մեծացրել է հովացման պահանջարկը՝ հանգեցնելով քաղաքային ջերմային կղզու էֆեկտի ի հայտ գալուն: Այս միտումները ևս մեկ անգամ ընդգծում են կլիմայադիմակայուն քաղաքային պլանավորման, շենքերում ու տրանսպորտային ենթակառուցվածքներում կայուն սառեցման լուծումների ներդրման անհրաժեշտությունը: Որպես ներմուծվող վառելիքից խիստ կախվածություն ունեցող երկիր՝ բոլոր ոլորտներում էներգիայի օգտագործման արդյունավետության բարելավումը ոչ միայն ամրապնդում է էներգետիկ անվտանգությունը, այլև բերում է ֆինանսական խնայողությունների և նվազեցնում ՋԳ արտանետումները: Չնայած համեմատաբար ցածր էներգատարությանը՝ Հայաստանում էներգաարդյունավետության չօգտագործված ներուժը մնում է բարձր՝ հատկապես տրանսպորտի, շենքերի և արդյունաբերության ոլորտներում: Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թթ. ազգային ծրագիրն ապահովում է երկարաժամկետ շրջանակ՝ կուտակային 931 կտ ն.հ. արժեքով էներգախնայողության հասնելու համար: Ամենամեծ խնայողությունը կանխատեսվում է տրանսպորտի ոլորտում՝ 744 կտ ն.հ., որին հետևում են բնակարանային, արդյունաբերության, գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտները: Հայաստանի շինարարական ոլորտում էներգաարդյունավետությունը զգալի հնարավորություն է էներգիայի պահանջարկի և արտանետումների կրճատման համար: Բնակելի շենքերի մեծ մասը, որոնց միայն 2-3%-ն է նորակառույց, չունի պատշաճ մեկուսացման և էներգախնայողության միջոցառումներ, ինչի արդյունքում տարեկան միջինում էներգիայի սպառումը կազմում է 170-180 կՎտժ/մ^2: Վերանորոգման աշխատանքները կարող են կրճատել այս ցուցանիշը ավելի քան կեսով՝ մինչև 70-80 կՎտժ/մ^2: Հանրային շինությունները, այդ թվում՝ մանկապարտեզները, գրադարանները և մշակութային կենտրոնները, ներկայումս տարեկան սպառում են մոտ 270-280 կՎտժ/մ^2, իսկ վերանորոգման ներուժը կարող է սպառումը կրճատել մինչև 120 կՎտժ/մ^2: Հայաստանը հաստատել է թիրախային աջակցության ծրագիր՝ բնակարանների և անհատական բնակելի տների ԷԱ բարձրացմանն ուղղված վերանորոգումները խթանելու համար: Ծրագիրը տրամադրում է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում՝ Էներգախնայողության միջոցառումների առաջնահերթության դեպքում, ինչպիսիք են ջերմամեկուսացումը, արդյունավետ ջեռուցման համակարգերը, պատուհանների ու դռների փոխարինումը: Սկսած 2022 թվականից՝ բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիրը տրամադրում է տոկոսադրույքի սուբսիդավորում՝ սահմանային և լեռնային բնակավայրերում՝ 14%, ոչ սահմանային գյուղական բնակավայրերում՝ 12%, ոչ սահմանային համայնքային բնակավայրերում՝ 11%, Երևանում՝ 9%: Հայաստանն իրականացնում է դպրոցական, մանկապարտեզային և առողջապահական ենթակառուցվածքների արդիականացման լայնամասշտաբ ծրագիր, որը մեկնարկել է 2015 թվականին: Նախաձեռնությունը ներառում է 300 դպրոցների, 500

մանկապարտեզների և 50 առողջապահական հաստատությունների կառուցում և վերանորոգում: 2023 թվականի դրությամբ այս նախաձեռնության համար ներգրավվել է ավելի քան 170 միլիոն ԱՄՆ դոլար, որոնք ուղղվել են նաև 46 դպրոցների սեյսմակայունացմանը, աղետներին նախապատրաստվածության բարելավմանը և ինստիտուցիոնալ կարողությունների ուժեղացմանը:

Հանրային ենթակառուցվածքներում իրականացվում են էներգախնայողության մասշտաբային միջոցառումներ: Ավելի քան 100,000 մ² հանրային շինություններում ներդրվել են ջերմամեկուսացման համակարգեր, արդյունավետ կաթսաներ, արևային ջրատաքացուցիչներ և ԼԵԴ լուսավորություն: Երևանում 2020-2024 թթ. ընթացքում անարդյունավետ նատրիումական լամպերը փոխարինվել են մոտ 10,000 ԼԵԴ լամպերով՝ արդյունքում տարեկան էլեկտրաէներգիայի սպառումը կրճատվելով 7.8 ԳՎտժ-ով:

Ընթացիկ ծրագրերի շրջանակում էներգախնայող չափանիշներին են համապատասխանեցվում գրեթե 6,000 անհատական տուն, 290 բազմաբնակարան շենք և ավելի քան 170 հանրային շինություն: Այս ծրագրերից օգտվում է ավելի քան 210,000 մարդ, և կանխվում է մոտ 1.4 միլիոն տոննա ՋԳ արտանետում:

Էներգախնայողության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացումը, հատկապես երեխաների և երիտասարդների շրջանում՝ դպրոցների և համայնքային ծրագրերի, վարքագծային փոփոխությունների միջոցով կարևոր բաղադրիչ է: Իրազեկ ընտանիքները, ուսանողները և համայնքները առավել հավանական է, որ որդեգրեն կայուն գործելակերպեր, ապահովեն վերանորոգված շենքերի պատշաճ օգտագործումը և նպաստեն արտանետումների երկարաժամկետ նվազեցմանը:

Հայաստանը պետական սուբվենցիոն ծրագրերի միջոցով շարունակում է աջակցել քաղաքային և համայնքներում ԷԱ բարելավմանը՝ նպատակ ունենալով խթանել էներգախնայողությունը և կայուն ենթակառուցվածքների զարգացումն ամբողջ երկրով:

Այս միջոցառումները կյանքի են կոչվում միջազգային զարգացման գործընկերների աջակցությամբ:

Կայուն տրանսպորտային համակարգ

Հայաստանի տրանսպորտային ոլորտում արտանետումների կրճատման ռազմավարությունը հիմնված է ազգային և տեղական քաղաքականությունների վրա, որոնք առաջնահերթություն են տալիս ցածր արտանետումներով շարժունակությանը, հանրային տրանսպորտի արդիականացմանն ու ենթակառուցվածքների զարգացմանը: Ազգային քաղաքականությունները՝ ներառյալ արտոնությունները և արտահանման առավելությունների ռեժիմները, էականորեն խթանել են Հայաստանում էլեկտրական տրանսպորտային միջոցների շուկայի զարգացումը՝ հանգեցնելով տրանսպորտային ոլորտում ՋԳ արտանետումների կրճատման: ԱՍՀ 3.0-ն ներառում է ոչ պայմանական միջոցառումներ տրանսպորտի ոլորտում՝ հիմնված ազգային ռազմավարությունների, քաղաքային մակարդակի բարեփոխումների, ճանապարհային ենթակառուցվածքների բարելավման և միջազգային համագործակցության վրա՝ արտացոլելով գործնական և արդյունքի վրա հիմնված մոտեցում: Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի նախագիծը կնվազեցնի տրանսպորտային արտանետումները՝ բարելավելով տարածաշրջանային կապը և ապահովելով ավելի կարճ ու արդյունավետ երթուղի Երևանի, Վրաստանի և սևծովյան նավահանգիստների միջև: Հայաստանը զգալի սահմանափակումների է բախվում երկաթուղային տրանսպորտի ընդլայնման հարցում՝ շարունակվող տարածաշրջանային հակամարտությունների և սահմանային հիմնական երթուղիների փակման պատճառով:.

Էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների խթանում

Նկատելի քայլեր են ձեռնարկվում էլեկտրիֆիկացումը խթանելու ուղղությամբ: Այդ նպատակով Հայաստանը (ԵԱՏՄ շրջանակներում)

	սահմանել է հարկային և մաքսային արտոնություններ՝ տարեկան մինչև 8,000 էլեկտրական մեքենաների (ԷՄ) ներմուծման համար, այդ թվում՝ մաքսատուրքից ազատում: Այդ քվոտայի շրջանակում մինչև 3,000 ԷՄ կարող են ներմուծել դիլերներն ու դիստրիբյուտորները, իսկ մինչև 5,000-ը՝ մնացած ներմուծողները: **2017-2023 թթ. Հայաստան է ներմուծվել 24,692 ԷՄ, որոնցից 11,688-ը՝ մարդատար, իսկ 70-ը՝ բեռնատար, ինչը վկայում է շուկայի բարձր հետաքրքրության մասին:** Հաշվի առնելով շարունակական աջակցությունը՝ կանխատեսվում է, որ մինչև 2035թ. Հայաստանի ճանապարհներով կընթանա ավելի քան 170,000 ԷՄ՝ նպաստելով ԱՍՀ 3.0-ի շրջանակում ՋԳ զգալի կրճատմանը: Հանրային գնումները առաջնահերթություն են տալիս էլեկտրական և հիբրիդային տրանսպորտային միջոցների ձեռքբերմանը: Թեև Հայաստանում ԷՄ-ների լիցքավորման ենթակառուցվածքը դեռևս սահմանափակ է, սակայն ցանցն աստիճանաբար ընդլայնվում է: 2025 թվականի մայիսին այդ ենթակառուցվածքների զարգացման նպատակով իրականացվել են հավելյալ ներդրումներ: Տրամադրված միջոցներն ուղղվում են «կանաչ» տեխնոլոգիաների մասշտաբային ներդրմանը, ներառյալ ԷՄ-ները և լիցքավորման կայանները: *Էլեկտրական շարժունակության բարելավումը Երևանում* Երևանի մետրոն և քաղաքային տրանսպորտային համակարգերը ենթարկվում են լայնածավալ արդիականացման՝ խթանելու կայուն շարժունակությունը: Երևանի մետրոյի Աջափնյակ կայարանի կառուցումը նպատակ ունի մեծացնել ուղևորահոսքն ու թեթևացնել խցանումները: Երևանի քաղաքային տրանսպորտի զարգացման ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվում է մինչև 250 18 մետրանոց հոդակապված էլեկտրական ավտոբուսի գնում և էլեկտրատրանսպորտի դեպոների արդիականացում: Բարեփոխումները ներառում են՝ ավտոպարկի նորացում, թվային տոմսային համակարգի ներդրում և աշխատանքի պայմանների բարելավում՝ ապահովելու հուսալի, ցածր արտանետումներով հանրային տրանսպորտ: Կայուն շարժունակությունը խթանելու նպատակով Երևանի քաղաքապետարանը ԷՄ-ների համար ներդրել է անվճար կայանման արտոնություններ: Միաժամանակ՝ ուսումնասիրություններ են իրականացվում քաղաքային շարժունակության և միկրոշարժունակության խթանման ու ենթակառուցվածքների ադապտացման համար: *Ավանդական տրանսպորտի օգտագործման կրճատում* Հայաստանը ակտիվորեն ներդնում է հեծանիվների օգտագործումը՝ որպես կայուն քաղաքային շարժունակության և արտանետումների կրճատման քայլ: Հեծանվային երթևեկությունը խթանելու նպատակով կառուցվում են հատուկ հեծանվային ուղիներ, իրականացվում են իրազեկման արշավներ և ակտիվ շարժունակության խրախուսում: Աջակցող ենթակառուցվածքները՝ անվտանգ հեծանվակայաններ, անվտանգության նշաններ և հանրային տրանսպորտի հետ կապեր, բարելավվում են ինչպես Երևանում, այնպես էլ՝ մարզերում: ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ***առողջ ապրելակերպի խրախուսման և երթևեկության այլընտրանքային*** ձևերի խթանման ծրագիր: 2025թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2027թ. դեկտեմբերի 31-ը **բարձրագույն ուսումնական հաստատությունների և մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների** ուսանողները և աշխատակիցները հեծանիվ ձեռք բերելու համար կարող են ֆինանսական աջակցություն ստանալ: Կառավարությունը կսուբսիդավորի վարկերի տոկոսադրույքները մինչև 16%. վարկի առավելագույն չափը՝ 800 ԱՄՆ դոլար: Այս նախաձեռնության նպատակն է խթանել հեծանվային շարժը, նվազեցնել քաղաքային խցանումները և ձևավորել այլընտրանքային տրանսպորտի մշակույթ: Տրանսպորտի այլընտրանքային միջոցների խրախուսումը միաժամանակ կբերի հանրային առողջության բարելավման՝ նվազեցնելով օդի աղտոտվածությունը Երևանում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) գնահատմամբ՝ Հայաստանում 2024 թվականին օդի որակի միջին ցուցանիշը PM2.5

	կոնցենտրացիայի համար 4.9 անգամ ավելի բարձր էր, քան ուղեցույցի արժեքը:[2] ***Խաչաձև միջոցառումներ*** *Էներգաարդյունավետ ոռոգման զարգացում* Հայաստանը ներդրումներ է կատարում էներգաարդյունավետ ոռոգման գործընթացներում՝ կառավարության սուբսիդավորման և միջազգային ֆինանսավորման (վարկեր և դրամաշնորհներ) միջոցով: 2023 թվականին ոռոգման համակարգերում էլեկտրաէներգիայի սպառումը կազմել է մոտավորապես 236.2 մլն կՎտժ (26.2 մլն ԱՄՆ դոլար)՝ 2022թ. 238.8 մլն կՎտժ (27.2 մլն դոլար) համեմատ: Սա վկայում է ոռոգման համար օգտագործված էլեկտրաէներգիայի փոքր՝ 0.8% նվազման մասին: Մատակարարված ջրի 1մ^3 համար էներգատարությունը բարելավվել է՝ ցույց տալով ջրի ավելի արդյունավետ օգտագործումն ըստ էլեկտրաէներգիայի մեկ միավորի: ՀԲ ֆինանսավորմամբ իրականացվող «Ջրամատակարարման և ոռոգման ծառայությունների բարելավման» (WISE) ծրագիրը նպատակ ունի ՀՀ համայնքներում բարձրացնելու ոռոգման և ջրամատակարարման ծառայությունների հուսալիությունն ու կլիմայի փոփոխությանը դիմակայունությունը: 180 մլն դոլար արժողությամբ ծրագիրը օգուտ կբերի շուրջ 24,000 տնային տնտեսությունների և կբարելավի ոռոգման ծառայությունները 16,000 հեկտարի չափով՝ նվազեցնելով ջրի կորուստներն ու էներգիայի ծախսերը: Հայաստանը նաև իրականացնում է մեծածավալ ջրամբարաշինական նախագծեր: Ներկայիս ներդրումների շնորհիվ հնարավոր կլինի մոտ 2,280 հա տարածքում մեխանիկական ոռոգումը փոխարինել **գրավիտացիոն ոռոգմամբ**՝ տարեկան խնայելով շուրջ 1.3 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: ԱՍՀ 3.0-ի շրջանակում ոռոգմանն ուղղված միջոցառումները հիմնված են Հայաստանի կառավարության ռազմավարական առաջնահերթությունների վրա և աջակցություն են ստանում ընթացիկ միջազգային ծրագրերից: Ոչ պայմանական մեղմման միջոցառումը միտված է արդյունավետ ոռոգման համակարգերի արդիականացմանը և ընդլայնմանը, ջրի և էներգիայի կորուստների նվազեցմանը, գյուղատնտեսության արտադրողականության բարձրացմանը և կլիմայական փոփոխություններով պայմանավորված երաշտների նկատմամբ կայունության ամրապնդմանը: **2. Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում (ԱՊԱՕ)** • **Ոչ պայմանական թիրախ** - 294% աճ • **Պայմանական թիրախ** - 230% աճ ԱՊԱՕ ոլորտը կարևորվում է Հայաստանի ՋԳ արտանետումների կրճատման նպատակների իրագործման տեսանկյունից՝ արդյունաբերական արժեշղթայի սարքավորումների և տեխնոլոգիական գործընթացների արդիականացման միջոցով: Վերջինս նաև առանցքային ոլորտ է նոր սահմանված հիդրոֆտորածխածինների (ՀՖԱ) արտանետումների կրճատման նպատակներն իրականացնելու համար՝ համաձայն Կիգալիի փոփոխության:[3] Հայաստանը 2021 թվականին վավերացրել է Կիգալիի փոփոխությունը և արդեն սկսել է միջոցառումները (ՀՀ Կիգալիի իրականացման ծրագիր (Առաջին փուլ)) ՀՖԱ կրճատման ուղղությամբ, որոնք 2019

[2] IQAir, Հայաստանի օդի որակի ինդեքսը (AQI) և օդի աղտոտվածության մասին տեղեկատվություն, մայիսի 5, 2025, https://www.iqair.com/armenia.
[3] Կիգալիի փոփոխության վավերացումը Հայաստանում, https://saveozone.am/en/post/azh-n-vaveracrel-e-kigalii-popokhoutyouny

	թվականին կազմել են ԱՊԱՕ ոլորտի արտանետումների շուրջ 75%-ը և երկրի ընդհանուր արտանետումների մոտ 9%-ը: «Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքով սահմանվել են ՀՖԱ ներմուծման արտոնագրման պահանջներ և քվոտաներ՝ սկսած 2024 թվականից: Իրականացվում են ծրագրեր՝ ՀՖԱ ներմուծման, օգտագործման և հեռացման մշտադիտարկումը և վերահսկողությունը ուժեղացնելու ուղղությամբ: Կառավարության նպատակն է աջակցել ոլորտային կարողությունների զարգացմանը՝ անցնելու ավելի ցածր արտանետումներ ունեցող սառնագենտների: Հիմնական գործողություններն են մինչև 2027 թվականը բարձր Գլոբալ տաքացման պոտենցիալ (ԳՏՊ) ունեցող սառնագենտներով սարքավորումների արգելքը, արտոնագրման համակարգերի ընդլայնումը և տեխնիկների ու մաքսային աշխատակիցների վերապատրաստումը: **Ոչ պայմանական միջոցառումներ** ● Սարքավորումների արդիականացում և տեխնոլոգիական գործընթացների բարելավում՝ հիմնականում ցեմենտի արտադրության մեջ: **Պայմանական միջոցառումներ** ● 2020-2022 թթ-ին արձանագրված ՀՖԱ ներմուծման նկատմամբ **10%** կրճատում: ● Մինչև 2029 թ. սպասարկման ոլորտում գործողությունների առնվազն **50%**-ի տեղափոխում ցածր ԳՏՊ այլընտրանքների վրա: ● Առնվազն երկու նոր այլընտրանքային սառնագենտների ներմուծում՝ առևտրային և արդյունաբերական նպատակներով: **3. Գյուղատնտեսություն** ● **Ոչ պայմանական թիրախ** - 1% աճ ● **Պայմանական թիրախ** - 23% նվազում **2022 թ. տվյալներով՝ գյուղատնտեսական ոլորտը Հայաստանի ՋԳ արտանետումների 2-րդ ամենամեծ աղբյուրն է՝ կազմելով ընդհանուր արտանետումների 14%-ը:** Արտանետումների մեծ մասն առաջանում է խոշոր եղջերավոր անասունների աղիքային խմորումից և գոմաղբի կառավարումից: Մեթանի արտանետումները, որոնք հիմնականում առաջանում են խոշոր եղջերավոր անասունների աղիքային խմորման հետևանքով, և ազոտի ենթօքսիդի արտանետումները, որոնք առաջանում են կառավարվող հողերից ու պարարտանյութերի օգտագործումից, շարունակում են մնալ գյուղատնտեսական արտանետումների հիմնական աղբյուրները: Չնայած կենսազանգվածի այրումից և վարելահողերից արտանետումները համեմատաբար ցածր են, հողի անարդյունավետ կառավարման պայմաններում դրանք ևս կարող են աճել: 1990-ականների սկզբին Հայաստանում անասունների քանակի, հետևաբար և համապատասխան արտանետումների կտրուկ նվազում է արձանագրվել՝ պայմանավորված նախկին պետական տնտեսությունների մասնավորեցմամբ: 2000-ականների սկզբին տնտեսական վերականգնումը հանգեցրեց անասնաբուծության վերելքի և արտանետումների աճի: Սակայն 2016-2019 թթ. գյուղատնտեսական արտանետումները նվազման միտում են ունեցել՝ պայմանավորված անասնագլխաքանակի նվազմամբ: Վերջին տվյալները (2019-2024 թթ.) վկայում են անասնագլխաքանակի շարունակական տատանումների մասին, որոնք պայմանավորված են գյուղատնտեսական պրակտիկայի փոփոխությամբ, տնտեսական ճնշումներով, կլիմայական ռիսկերով, COVID-19 համավարակով և տարածաշրջանային հակամարտության ազդեցությամբ: Այսպիսով, Հայաստանի գյուղատնտեսական արտանետումների դինամիկան կախված է

	բազմագործոն ազդեցություններից, որոնք ներառում են տնտեսական վերելքներն ու ճգնաժամերը, կառուցվածքային փոփոխությունները գյուղատնտեսության մեջ և արտաքին շոկերը՝ ընդգծելով ոլորտում կայուն և կանխատեսելի կլիմայական քաղաքականությունների անհրաժեշտությունը: Գյուղատնտեսության ոլորտի 2020-2030 թթ. ռազմավարությունը սահմանում է 7 սկզբունք՝ խթանելու ներառական աճը, գենդերային հավասարությունը և ինստիտուցիոնալ կայունությունը. 1) ագրեգացիա, 2) առևտրայնացում, 3) կողմնորոշում դեպի որակ, 4) երիտասարդության ներգրավում, 5) դիվերսիֆիկացում և ռիսկերի կառավարում, 6) հարմարվողականություն կլիմայի փոփոխությանը, դիմակայունություն և շրջակա միջավայրի կայունություն, 7) տեխնոլոգիապես կենտրոնացած արդիականացում: Այս նպատակները վերածվում են հստակ առաջնահերթ միջոցառումների: Կենդանիների հետ կապված միջոցառումները կարող են ուղղակիորեն ազդել աղիքային խմորումից առաջացող արտանետումների վրա, իսկ հողի կառավարմանն առնչվող միջոցառումները, օրինակ՝ հողերի միավորումը և թունաքիմիկատների կարգավորումը, կարող են անուղղակիորեն ազդել հողի հետ կապված արտանետումների վրա՝ կախված իրականացման արդյունավետությունից: Հայաստանը նպատակ ունի գյուղատնտեսության ոլորտում կայուն ներդրումներ խթանմամբ իրականացնել համապարփակ աջակցության միջոցառումներ: ՀՀ կառավարության կողմից հաստատվել են անասնաբուծության բարելավման ծրագրեր, ներառյալ՝ 1) խոշոր եղջերավոր կենդանիների բուծում, 2) ոչխարների և այծերի բուծում, 3) «խելացի անասնաշենքեր», 4) արհեստական սերմնավորման պիլոտային ծրագիր: Անասնաբուծության և արհեստական սերմնավորման ծրագրերը կարող են ազդել աղիքային խմորման արտանետումների վրա՝ գենետիկական բազմազանության ապահովման միջոցով, իսկ «խելացի անասնաշենքերի» ծրագիրը հնարավորություն կտա նվազեցնելու գոմաղբի կառավարման հետ կապված արտանետումները: 2023 թվականին Հայաստանը սահմանել է անասնաբուծության և թռչնաբուծության գոմաղբի կառավարման կարգավորումներ՝ ուղղված մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանը և մեթանի արտանետումների կրճատմանը: Նոր կանոնակարգերը նպատակ ունեն պահեստավորման, մշակման և տեղափոխման բարելավված գործելակերպերի միջոցով նվազեցնել գոմաղբից առաջացող մեթանի արտանետումները: Աջակցման ծրագրերը պահանջում են նաև գոմաղբի կառավարման տեխնոլոգիաների կիրառում խելացի տնտեսություններում: **Ոչ պայմանական միջոցառումներ** ● Մինչև 2035 թ. ներմուծել բարձրարժեք ցեղերի **8000** խոշոր եղջերավոր կենդանի, ինչը կբարձրացնի մթերատվությունն ու արտանետումների նվազեցման միտումները : ● Խթանել կլիմայական առումով խելացի անասնապահական գործելակերպեր՝ հիմնելու գոմաղբի կառավարման առաջադեմ համակարգերով **100** «խելացի անասնագոմ», ինչը կնպաստի մինչև 2035 թվականը հասնել **4000** խոշոր եղջերավոր կենդանիների գոմաղբով պայմանավորված արտանետումների **100%**-ով կրճատման: ● Աջակցել անասնաբուծության գենետիկ բարելավմանը՝ մինչև 2035 թվականը արհեստական սերմնավորման ենթարկելով **100 000** խոշոր եղջերավոր կենդանու: ● Բարելավել հողի առողջությունը և նվազեցնել սինթետիկ պարարտանյութերի օգտագործումը՝ մինչև 2035 թվականը դրանց **10%**-ը փոխարինելով օրգանական այլընտրանքներով:

- Վերացնել բուսական մնացորդների բաց այրումը՝ արգելքի և վերահսկման մեխանիզմների ներդրմամբ՝ ապահովելով այդ արտանետումների **100%** կրճատում:

Պայմանական միջոցառումներ

- Մինչև 2035 թվականը ներմուծել **50 000** բարձրարժեք խոշոր եղջերավոր կենդանի:
- Ամրապնդել մեթանի արտանետման նվազեցման ազգային մեղմման միջոցառումները՝ կիրառելով գոմաղբի կառավարման առաջադեմ համակարգեր 40 անասնագոմերի համար մինչև 2035 թվականը՝ կլիմայի ֆինանսավորման և տեխնոլոգիաների հասանելիության պայմանով:

4. Հողօգտագործում, հողօգտագործման փոփոխություն և անտառտնտեսություն (ՀՕՀՕՓԱՏ)

- **Ոչ պայմանական թիրախ** - CO_2 կլանման 21% բարելավում
- **Պայմանական թիրախ** - CO_2 կլանման 36% բարելավում

2015 թվականին Հայաստանի պետական անտառային հողերի ընդհանուր մակերեսը կազմել է 334.20 հազար հեկտար, ինչը վկայում է նախորդ տարիների անկումից հետո որոշակի կայունացման մասին:[4] 2023 թ. դրությամբ այս ցուցանիշը փոքր-ինչ նվազել է՝ կազմելով 333.84 հազար հեկտար՝ 8 տարվա ընթացքում գրանցելով 0.33 հազար հեկտարի նվազում: Չնայած այդ նվազումն աննշան է (0.1%-ից պակաս), այն, այնուամենայնիվ, փաստում է, որ այդ ժամանակահատվածում անտառածածկի էական աճ չի գրանցվել, և ընդհանուր տարածքը մնացել է գրեթե անփոփոխ: **Հայաստանը գիտակցում է անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքների ծավալների ընդլայնման, մշտադիտարկման բարելավման և հողերի դեգրադացիայի դեմ պայքարի միջոցառումների իրականացման հրատապությունը:**

Հայաստանը սահմանել է անտառածածկի ավելացման իր տեսլականը մինչև 2030 թվականը՝ հիմնվելով անտառների կառավարման ծրագրերի վրա: 2019–2024թթ. պետական անտառային հողերում հիմնադրվել են շուրջ 1100 հեկտար անտառմշակույթներ և առկա է շուրջ 9700 հեկտար պոտենցիալ տարածք՝ մինչև 2030 թվականը անտառապատման աշխատանքների իրականացման համար: Համապատասխան ֆինանսավորման առկայության դեպքում վերը նշված տարածքներում «Հայանտառ» ՊՈԱԿ-ը կարող է իրականացնել անտառապատման աշխատանքներ: Բացի այդ, ավելի քան 65 համայնքներից ստացված տվյալները վկայում են, որ 2,636 հեկտար համայնքային հողեր պիտանի են անտառապատման համար: Անտառապատման ամենաբարձր ներուժն արձանագրվել է Վայոց ձորի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում: Շատ տարածքներ մոտ են բնակավայրերին, ապահովված են ավտոճանապարհներով, ինչը կնպաստի երկարաժամկետ արդյունավետ կառավարմանը:

Հայաստանում իրականացվում է կայուն անտառապատման ծրագիր՝ ուղղված անտառածածկի ընդլայնմանը, ածխածնի կլանման բարելավմանը, կենսաբազմազանության և էկոհամակարգերի կայունության բարձրացմանը: Զուգահեռաբար աշխատանքներ են տարվում անտառների առողջության բարելավման ուղղությամբ՝ ներառյալ վերականգնում, հրդեհներից պաշտպանություն և կլիմայի

[4] ՀՀ վիճակագրական կոմիտե, Հողային ռեսուրսներն ու ոռոգվող հողերը ըստ նպատակային նշանակության, տեսակների և տարիների, http://statbank.armstat.am/pxweb/en/ArmStatBank/ArmStatBank__8%20Environment__(E,F)%20Land%20and%20Agriculture/EE-f1.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb

	փոփոխությանը համարժեք կառավարման միջոցառումների ներգրավում, որոնք ուղղակիորեն նպաստում են կլիմայի մեղմմանն ու էկոհամակարգերի վերականգնմանը: Անտառների և հողերի դեգրադացիայի հաղթահարման գործընթացում ներգրավված են մի շարք կարևոր դերակատարներ (ՀԿ-ներ, միջազգային կազմակերպություններ, մասնավոր հատված և այլն): Հսկողության մեխանիզմների ամրապնդման շրջանակում Հայաստանը գործարկել է էկոպարեկային ծառայությունը՝ որպես պետական ծառայության առանձին տեսակ: Ծառայությունը պետական լիազոր մարմին է, որը իրականացնում է պետական հսկողության գործառույթներ պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում, ինչպես նաև վերահսկում է անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքները: Այս ծառայությունն առանցքային դեր ունի ապօրինի անտառահատումների կանխարգելման, հողի կայուն կառավարման խթանման և երկրի ավելի լայն հարմարվողականության ու կենսաբազմազանության պահպանության նպատակների իրականացման գործում: Ծառայության գործունեությունը լրացվում է ինստիտուցիոնալ բարեփոխումներով, որոնք միտված են անտառային կառավարման բարելավմանը, թափանցիկության ապահովմանը և համապատասխան կառույցների միջև համակարգման բարձրացմանը: **Հայաստանը պաշտոնապես հանձնառություն է ստանձնել պայքարել հողերի դեգրադացիայի դեմ՝ ընդունելով «Հողերի դեգրադացիայի չեզոքացման (LDN) ծրագիրը»**: Այս որոշումը համահունչ է ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի և ԿԶՆ 15.3 նպատակներին, որոնք միտված են մինչև 2030 թվականը դադարեցնել և կանխել հողերի դեգրադացիան: Այս հանձնառության շրջանակներում Հայաստանը կամավոր կերպով նպատակ է սահմանել մինչև 2040 թվականը հողերում օրգանական ածխածնի պարունակությունը ավելացնել 1.5%-ով 2015 թվականի մակարդակի համեմատ: Նշված նպատակին հասնելու համար նախանշվել են մի շարք գործողություններ՝ անցում ագրոէկոլոգիական գործելակերպի, դեգրադացված արոտավայրերի և անտառային հողերի վերականգնում, ոռոգման և հողօգտագործման արդյունավետության բարելավում, մշտադիտարկման համակարգերի կատարելագործում և իրավական դաշտի ուժեղացում: Ծրագիրն ընդգծում է ոլորտների միջև համագործակցության, հանրային իրազեկման և ֆինանսական ռեսուրսների ապահովման կարևորությունը թե՛ ներքին, թե՛ արտաքին աղբյուրներից: **Ոչ պայմանական միջոցառումներ** • **25 000** հեկտար կայուն անտառապատում և անտառների վերականգնում մինչև 2035 թվականը • **4 000** հեկտար դեգրադացված գյուղատնտեսական նշանակության հողերի վերականգնում մինչև 2035 թվականը • Դեգրադացված անտառային տարածքների առնվազն **20%**-ի կայուն կառավարում և վերականգնում մինչև 2035 թվականը **Պայմանական միջոցառումներ** • **50 000** հեկտար անտառապատում և անտառների վերականգնում մինչև 2035 թվականը • Դեգրադացված անտառային տարածքների առնվազն **40%**-ի կայուն կառավարում և վերականգնում մինչև 2035 թվականը **5. Թափոններ** • **Ոչ պայմանական թիրախ**-66% աճ • **Պայմանական թիրախ**-59% աճ

	2022 թվականի տվյալներով՝ թափոնների ոլորտից ՋԳ արտանետումները կազմել են Հայաստանի ՋԳ արտանետումների 6%-ը՝ հիմնականում պայմանավորված մթնոլորտում մեթանի արտանետումներով, որոնք առաջանում են աղբավայրերում օրգանական նյութերի անաէրոբ քայքայման և կեղտաջրերի արտահոսքի հետևանքով: Աղբահանության համակարգի ռազմավարության կիրարկումն ապահովող 2025-2032 թթ. միջոցառումների ծրագիրն ընդգրկում է աղբի առանձին հավաքման և վերամշակման մեխանիզմների ներդրումը ողջ երկրում մինչև 2028 թվականը՝ նպատակ ունենալով նվազեցնել աղբավայրերի ծավալները և խթանել նյութերի վերականգնումը: Այն նաև նախատեսում է թափոնների ինտեգրված կառավարման համակարգերի փուլային զարգացում հյուսիսային (Շիրակ, Լոռի, Տավուշ), կենտրոնական (Արագածոտն, Արարատ, Արմավիր, Վայոց ձոր) և հարավային (Սյունիք) մարզերում: Ծրագրի նպատակն է մինչև 2032 թվականը էականորեն բարելավել շրջակա միջավայրի պահպանությունը, նվազեցնել մեթանի արտանետումները և ամրապնդել կայուն թափոնների կառավարման ինստիտուցիոնալ հիմքերը: Թափոնների կառավարման արդյունավետ համակարգի ապահովման նպատակով այժմ Հայաստանում ներդրվում է միջազգային չափանիշներին համապատասխան ինստիտուցիոնալ համակարգ: Գործողություններն իրականացվում են ամբողջ երկրի մասշտաբով՝ ապահովելու բնակավայրերում թափոնների պատշաճ հավաքումը և կանխելու կուտակումները: Նաև մշակվում են թափոնների հեռացման և վերամշակման ծրագրեր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ, ինչն ամրապնդում է Հայաստանի կարողությունները թափոնների կայուն կառավարման ոլորտում (այդ թվում՝ «Աղբավայրային գազի հավաքագրման և էլեկտրաէներգիայի արտադրության նախագիծը» Երևանում): **Ներկայումս կեղտաջրերից ՋԳ արտանետումների մեղմման միջոցառումները սահմանափակ են: Հայաստանում գործում է կեղտաջրերի մաքրման 6 կայան (ԿՄԿ), սակայն բոլորն էլ իրականացնում են միայն մեխանիկական մաքրում՝ կախված և պինդ մասնիկների հեռացման նպատակով**: Հայաստանի կեղտաջրերի հիմնական մասը մնում է չմաքրված կամ ոչ բավարար մաքրված՝ հանգեցնելով մեթանի արտանետումների: Գոյություն ունեցող խնդիրները հաղթահարելու, ծառայությունների որակը բարելավելու և ջրային ավազանների պաշտպանությունն ապահովելու նպատակով Հայաստանը նախատեսում է միջազգային աջակցության միջոցով պայմանական միջոցառումների շարք իրականացնել: Հատուկ ուշադրություն է դարձվում Սևանա լճի ավազանում կեղտաջրերի մաքրման համակարգերի բարելավմանը: Հայաստանը կարևորում է միջազգային գործընկերների կողմից ցուցաբերված աջակցությունը և ընդծում դրա շարունակականության անհրաժեշտությունը: **ԱՍՀ 3.0-ում կոշտ թափոններով պայմանավորված արտանետումների մեղմման միջոցառումները ներառում են թափոնների ինտեգրված կառավարման ենթակառուցվածքների փուլային զարգացումը հյուսիսային, կենտրոնական և հարավային մարզերում, այդ թվում՝ աղբավայրերի կառուցում, փոխաբեռնման կայաններ և հետագա վերամշակման կայաններ:** Վերջերս ավարտվեց Հրազդանի սանիտարական աղբավայրի կառուցումը (Կոտայքի և Գեղարքունիքի մարզերը սպասարկող տարածաշրջանային խոշոր թափոնների կառավարման նախագիծ): Այն նպաստելու է այս համայնքներում թափոնների հավաքման, տեսակավորման, վերամշակման համակարգերի ներդրմանը և տեղական ձեռներեցների համար նոր հնարավորությունների ստեղծմանը: Կանխատեսվում է, որ նախագիծը բնապահպանական և սոցիալական օգուտներ կապահովի 500,000 մարդու համար և կսպասարկի 12 համայնք: Կոշտ թափոններով պայմանավորված արտանետումների կրճատմանն աջակցող նախաձեռնություններ են «Մաքուր Հայաստան» ծրագիրը և առանձին թափոնների տարաների ներդրումը: «Մաքուր Հայաստան»-ի շրջանակում պահպանման են հանձնվել 1792 չկառավարվող կամ 83% հաշվառված աղբավայրերը: Երևանի տարածքում տեղադրվել են 400 առանձին հավաքման

	տարաներ, իսկ Երևանի քաղաքապետարանը նախատեսում է դրանց ընդլայնում: **Ոչ պայմանական միջոցառումներ** ● Հրազդանի սանիտարական աղբավայրի շահագործման մեկնարկ ● Երևանում գործող աղբանոցների փակում և բնապահպանական, քաղաքաշինական և սանիտարական նորմերին համապատասխան նոր աղբավայրի կառուցում (Նուբարաշենում) ● Հայաստանի բոլոր մարզերը ընդգրկող բնապահպանական, քաղաքաշինական և սանիտարական նորմերին համապատասխան **4** նոր աղբավայրերի կառուցում **Պայմանական միջոցառումներ** ● Կեղտաջրերի մաքրման կայաններում կենսագազի հավաքում և օգտագործում
գ) Ինչպես է Կողմը հաշվի առել 1/CP.21 որոշման 31-րդ կետի գ) և դ) ենթակետերը	Հայաստանը երաշխավորում է, որ ԱՍՀ 3.0-ն ներկայացնում է հավակնությունների և ընդգրկման ընդլայնված շրջանակ ԱՍԳ 2 համեմատ (31-րդ պարբերություն, կետ գ): ԱՍՀ 3.0-ն ընդգրկում է տնտեսության բոլոր ոլորտները՝ համապատասխան 31-րդ պարբերության գ) կետի: Այն արտացոլում է Հայաստանի հնարավոր ամենաբարձր հավակնությունը՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները (31-րդ պարբերություն, կետ դ), սահմանելով առավել հավակնոտ ոչ պայմանական և պայմանական թիրախներ և ընդգրկելով ԿՓՓՄԽ բոլոր հիմնական ոլորտները: ԱՍՀ 3.0-ն հիմնվում է նախորդ տեղեկատվության վրա՝ արտահայտելով հավակնությունների աճ (40%-ի փոխարեն՝ 44%): Նպատակները հստակեցվել են՝ ներառելով ոլորտային ավելի լայն շրջանակ, քանակական արտանետումների կրճատման նպատակներ և հարմարվողականության համատեղ օգուտների ինտեգրում առաջնահերթ ոլորտներում, ինչպիսիք են՝ էներգետիկան, գյուղատնտեսությունը և թափոնների կառավարումը: Համաձայն 31-րդ պարբերության դ) կետի՝ ԱՍՀ 3.0-ն հստակ առաջընթաց է Հայաստանի նախորդ հանձնառության նկատմամբ՝ մասնավորապես ոչ պայմանական և պայմանական միջոցառումների ներմուծման, ինստիտուցիոնալ կառույցների ամրապնդման, իրագործման թափանցիկության բարձրացման և ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ուղիների հետ համահունչ շնորհիվ: Այս բարելավումները վկայում են Հայաստանի հանձնառության մասին՝ բարձրացնել հավակնությունը՝ միևնույն ժամանակ ապահովելով ազգային հնարավորությունների և ԿՋՆ համապատասխանություն: ՋԳ արտանետումները և կլանման բոլոր աղբյուրներն ու կատեգորիաները ներառվել են միջոցառումների ձևավորման գործընթացում՝ համաձայն ՋԳ արտանետումների ազգային ամենավերջին գույքագրման:
դ) Կողմերի հարմարվողականության գործողությունների և	ԱՍՀ 3.0-ն առաջնահերթություն է տալիս հարմարվողականությանը՝ որպես ազգային հրամայական, և ըստ հնարավորության համատեղում է մեղմման բազմաթիվ առավելությունները: Առանցքային ոլորտներում հարմարվողականության գործողությունները նպաստում են կլիմայական փոփոխությունների նկատմամբ Հայաստանի խոցելիության նվազեցմանը, ինչպես նաև հնարավորություն տալիս անցնելու զարգացման ցածր արտանետումներով ուղու: Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի անցումը կլիմայադիմակայուն և ցածրածխածնային տնտեսության նախատեսված է համապարփակ

տնտեսական դիվերսիֆիկացման ծրագրերից բխող մեղմման ընդհանուր օգուտները, ներառյալ կոնկրետ ծրագրերի, միջոցառումների և նախաձեռնությունների նկարագրությունը	և ներառական զարգացման արդյունքներ ապահովելու համար: Դա կկրճատի էներգետիկ աղքատությունը, կբարելավի հանրային առողջությունը և կուժեղացնի հարմարվողականության կարողություններն ըստ ոլորտների ու համայնքների: Ուշադրություն է դարձվում հատկապես կանանց, երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց և գյուղական բնակչության պաշտպանությանն ու ներառմանը՝ ապահովելով, որ որևէ խումբ դուրս չմնա կլիմայի փոփոխության նկատմամբ երկրի արձագանքից: **Ջրային անվտանգություն և գյուղատնտեսություն.** Ոռոգման ենթակառուցվածքների արդիականացումը, այդ թվում կաթիլային ոռոգման կիրառումը, անձրևաջրերի հավաքումը և կեղտաջրերի կրկնակի օգտագործումը նվազեցնում են ջրի պոմպերի կիրառման և բաշխման էներգետիկ պահանջարկը: Կլիմայական խելացի գյուղատնտեսական գործելակերպերը՝ ճշգրիտ գյուղատնտեսություն, սինթետիկ պարարտանյութերի օգտագործման կրճատում և ագրոանտառտնտեսության ընդլայնում, նվազեցնում են ՋԳ արտանետումները և բարձրացնում ածխածնի կլանումը հողի կողմից: Անասնաբուծության բարելավումը («խելացի ֆերմաներ», բիոգազի օգտագործում, անասնացեղերի օպտիմալացում) ևս նվազեցնում են մեթանի արտանետումները: **Հողերի և անտառտնտեսության կառավարում.** Անտառապատումը, անտառվերականգնումը և դեգրադացված հողերի վերականգնումը ուղղակիորեն նպաստում են ածխածնի կլանմանը և միաժամանակ բարձրացնում երաշտների և հողի էրոզիայի նկատմամբ կայունությունը: Կլիմայի նկատմամբ դիմակայուն անտառային միջոցառումները՝ անտառային հրդեհների կանխարգելում, վնասատուների վերահսկում և հարմարվողական ծառատեսակների ընտրությունը, կանխում են անտառների կորուստը և պահպանում ածխածնային պաշարները: Անտառային տարածքների վերականգնումը և էկոպարկերը ծառայում են որպես ածխածնի կլանիչներ և նպաստում կենսաբազմազանության պահպանմանը: **Քաղաքային և ենթակառուցվածքային կայունություն**. Քաղաքային կանաչ ենթակառուցվածքները նվազեցնում են քաղաքային ջերմային կղզու ազդեցությունը և հովացման էներգետիկ պահանջը՝ անուղղակիորեն կրճատելով արտանետումները: Հանրային ենթակառուցվածքների արդիականացումը, ներառյալ էներգախնայող հանրային շենքերը, նպաստում են մեղմմանը՝ նվազեցնելով էներգիայի սպառումը: Հանրային տրանսպորտի արդիականացումը, ցածրածխածնային շարժունակության պլանավորումը և կայուն ճանապարհային ենթակառուցվածքները կրճատում են տրանսպորտային ոլորտի արտանետումները: **Առողջապահության և զբոսաշրջության ոլորտներ**. Առողջապահական հաստատությունների կլիմայական անվտանգության բարձրացումը էներգախնայող նախագծերով և վերականգնվող էներգիայի համակարգերով կրճատում է էներգատար ծառայությունների արտանետումները: Զբոսաշրջության ոլորտում էկոզբոսաշրջության և կայուն ենթակառուցվածքների խթանումը նվազեցնում է ածխածնային հետքը և աջակցում տեղական տնտեսություններին: **Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ (ՏՀՏ) և նորարարություն՝ ուղղված հարմարվողականությանը.** Թվային կլիմայական գործիքները, վաղ նախազգուշացման համակարգերը և խելացի գյուղատնտեսության ու ենթակառուցվածքների մշտադիտարկումը բարձրացնում են հարմարվողականության արդյունավետությունը՝ նվազեցնելով ռեսուրսների վատնումն ու էներգիայի սպառումը: Սկսնակ ձեռնարկատերերի կողմից ՏՀՏ լուծումների զարգացումը խթանում է կանաչ նորարարությունը և տնտեսական բազմազանությունը տեղափոխում տեխնոլոգիատար և ցածր արտանետումներով ոլորտներ:
4. Պլանավորման գործընթացներ	

ա) Տեղեկատվություն պլանավորման այն գործընթացների վերաբերյալ, որոնք իրականացվել են ԱՍՀ-ի և դրա իրագործման պլանների մշակման նպատակով	Հայաստանը վերահաստատում է ԱՍՀ 3.0-ի մշակման գործընթացում ներառական, միասնական կառավարման մոտեցմանն իր հանձնառությունը: ԱՍՀ-ի հիմքում ռազմավարական պլանավորման գործընթացն է, որը համապատասխանում է երկրի զարգացման նպատակներին և կլիմայական ոլորտային առաջնահերթություններին: ԱՍՀ 3.0-ն մշակվել է համապատասխան պետական մարմինների համակարգված գործողությունների արդյունքում՝ արտացոլելով Հայաստանի ազգային առանձնահատկությունները, ինստիտուցիոնալ լիազորությունները և պլանավորման կարողությունները: Գործընթացը պահպանել է թափանցիկության, ներառականության և համահունչության սկզբունքները՝ հիմնվելով շարունակական ներգրավվածության վրա՝ ինչպես տեխնիկական, այնպես էլ՝ քաղաքական մակարդակներում: Կայացել են խորհրդակցություններ՝ խթանելու միջոլորտային գործակցությունը, մասնավորապես էներգետիկայի, գյուղատնտեսության, հողօգտագործման, թափոնների, ջրային ռեսուրսների և արդյունաբերության ոլորտներում: Այդ քննարկումները նպաստել են մեղմման և հարմարվողականության առաջնահերթությունների ձևավորմանը և հստակեցմանը: Միաժամանակ խնդիր է դրվել ապահովելու նպատակների և միջոցների իրատեսականությունը, իրագործելիությունը, հարմարեցվածությունն ու համապատասխանությունը գործող և պլանավորված քաղաքականություններին ու կարգավորող շրջանակներին: ԱՍՀ 3.0-ն հավակնոտ է, ունի ինստիտուցիոնալ համակարգվածություն և երկարաժամկետ ռազմավարական համապատասխանություն: Այն հանձնառու է ազգային և ինստիտուցիոնալ պատրաստվածությամբ իրականացնելու կլիմայական առաջնահերթությունները՝ ըստ Փարիզյան համաձայնագրի և Հայաստանի կայուն զարգացման օրակարգի:
Ի) Ներքին ինստիտուցիոնալ կարգավորումներ, հանրային մասնակցություն և տեղական համայնքների ու բնիկ ժողովուրդների ներգրավվածություն՝ գենդերապատասխանատու մոտեցմամբ	ԱՍՀ 3.0-ն մշակվել է «ամբողջական կառավարություն» և «ամբողջական հասարակություն» մոտեցմամբ՝ արտահայտելով Հայաստանի ինստիտուցիոնալ հանձնառությունը մասնակցային կլիմայական կառավարմանը: Համակարգումն ապահովվել է միջգերատեսչական համագործակցությամբ և համապատասխան պետական կառույցների մասնակցությամբ: Պլանավորման ողջ գործընթացում անցկացվել են ավելի քան 30 երկկողմ հանդիպումներ, միջգերատեսչական խորհրդակցություններ և մասնագիտացված տեխնիկական քննարկումներ: Գործընթացը առաջնորդել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը՝ ապահովելով ԱՍՀ ինտեգրումը և համապատասխանությունը Հայաստանի կլիմայական ռազմավարությանն ու հանձնառություններին: Առանձնացված խմբերի շրջանակներում անցկացվել են խորհրդակցություններ գյուղատնտեսության, էներգետիկայի, թափոնների, անտառային տնտեսության, ջրային ռեսուրսների և ֆտորացված գազերի (F-գազեր) թեմաներով: Քննարկումներին մասնակցել են տարբեր շահագրգիռ կողմեր՝ ի դեմս պետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, գիտակրթական հաստատությունների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների: Հասարակական մասնակցությունը խթանվել է քաղաքացիական հասարակության, գիտակրթական շրջանակների և համայնքների ներգրավմամբ կազմակերպված խորհրդակցությունների միջոցով: Շեշտը դրվել է գենդերային պատասխանատվությամբ պլանավորման ապահովման վրա՝ հատուկ ուշադրություն դարձնելով բարձր սոցիալական ազդեցություն ունեցող ոլորտներում ներկայացվածությանը և մասնակցությանը: Գենդերային հավասարության նկատառումներն ամբողջությամբ ներառվել են մշակման գործընթացում՝ համահունչ ներառական զարգացման հանձնառություններին: ԱՍՀ 3.0-ի պլանավորման գործընթացի առանցքային բաղադրիչ է երիտասարդության ներգրավվածությունը: Հայաստանի կողմից «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի ընդունումը (2025 թ.), «Երեխաների, երիտասարդների և կլիմայի

	գործողությունների մասին միջկառավարական հռչակագրի» վավերացումը (2023 թ.), ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի համանախագահությամբ կլիմայի փոփոխության հարցերով երիտասարդական խորհրդի ստեղծումը համարվում են կլիմայական որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության հիմնական ինստիտուցիոնալ հենասյուներ:	
II) Համատեքստային հարցեր, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, ազգային հանգամանքները՝ աշխարհագրությունը, կլիման, տնտեսությունը, կայուն զարգացումը և աղքատության վերացումը	ա) Ազգային պայմաններ՝ աշխարհագրություն, կլիմա, տնտեսություն, կայուն զարգացում և աղքատության վերացում	**Հայաստանը դեպի ծով ելք չունեցող, լեռնային երկիր է, որը բարձր խոցելիություն ունի կլիմայական վտանգների՝ օրինակ՝ երաշտների, ջրհեղեղների, սողանքների և շոգի նկատմամբ: Գյուղատնտեսությունն արտահայտված կլիմազգայուն ոլորտ է, որտեղ զբաղված է բնակչության ավելի քան 20%-ը:** Հայաստանի կլիմայական հավակնությունները համահունչ են կայուն զարգացման և աղքատության վերացման տեսլականին: **2019 թվականից ի վեր Հայաստանը դասվում է միջին-բարձր եկամուտ ունեցող երկրների շարքը:** Չնայած վերջին տարիներին զարգացման ներքաղաքական և արտաքին ցնցումների բարդ համադրությանը՝ երկրի տնտեսական հիմքերը հարաբերականորեն կայուն են մնացել: 2024թ.-ին Հայաստանի մշտական բնակչությունը կազմել է ավելի քան 3 միլիոն մարդ, իսկ կյանքի սպասվող միջին տևողությունը՝ 78.6 տարի: Սոցիալ-քաղաքական շոկերի կառավարման կարողությունը, միաժամանակ ապահովելով տնտեսական աճ, վկայում է տնտեսական կառավարման ինստիտուցիոնալ կարողության մասին: 2020 թվականին COVID-19 համավարակի բռնկումը հանգեցրեց ՀՆԱ 7.2% կրճատման: Աճի վերականգնման փուլն սկսվեց 2021 թվականին՝ 5.8% ՀՆԱ աճով, իսկ 2022-ին աճը հասավ 12.6%-ի՝ դառնալով տարածաշրջանի բարձր ցուցանիշներից մեկը: Այս աճը հիմնականում պայմանավորված է ներքին սպառման աճով, ներդրումային ակտիվության բարձրացմամբ, դրամական փոխանցումների ավելացմամբ, ինչպես նաև զբոսաշրջության, շինարարության և ֆինանսական ծառայությունների ոլորտների զգալի ընդլայնմամբ: 2024 թվականին Հայաստանի ՀՆԱ-ն աճել է 5.9%-ով՝ հասնելով 10.2 միլիոն դրամի: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2024 թվականին կազմել է 3.3 միլիոն դրամ (8600 ԱՄՆ դոլար): Այդուհանդերձ, 2023 թվականի փախստականների հետ կապված ճգնաժամի երկարաժամկետ ազդեցությունը սոցիալական համախմբվածության և հանրային ծառայությունների վրա շարունակում է մտահոգիչ մնալ: Հայաստանը առաջնահերթություն է տալիս տնտեսական աճին և աղքատության նվազեցմանը, բայց դեռևս բախվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների ցածր մակարդակի և առևտրային գործընկերների շրջանակի սահմանափակությանը: Դեպի ծով ելք չունենալը և կախվածությունը ներմուծվող էներգիայից խոչընդոտում են տնտեսության ցածրածխածնային զարգացման հեռանկարը: Հայաստանը չունի նավթի, բնական գազի կամ ածխի պաշարներ: 2023 թվականին Հայաստանի էներգետիկ ռեսուրսների 73.5%-ը ներմուծվել է: Բոլոր առաջնային ռեսուրսները՝ նավթ և նավթամթերքներ, շարժիչի վառելիք, բնական և հեղուկ գազ, ներմուծվում են խողովակաշարերով և ավտոմոբիլային տրանսպորտով, քանի որ երկաթուղային փոխադրումները շարունակում են մնալ սահմանափակ՝ շարունակվող տրանսպորտային շրջափակման պատճառով: Հայաստանի էլեկտրաէներգիայի արտադրությունը հիմնված է գազային ջերմակայանների, արևային

		էներգիայի, հիդրոէլեկտրակայանների և ատոմակայանի վրա: Բարձրավոլտ էլեկտրական ցանցի կապը Վրաստանի և Իրանի հետ թույլ է, իսկ Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերություններ կարգավորման փուլում են: Կլիմայի փոփոխությամբ պայմանավորված՝ Հայաստանի ջեռուցման և հովացման պահանջարկը կավելանա՝ հավելյալ ճնշում գործադրելով ներմուծումներից կախված էներգետիկ ենթակառուցվածքների վրա: Ցածր արտանետումներով տրանսպորտային այլընտրանքների (օրինակ՝ երկաթուղի, ծովային փոխադրում) սահմանափակ առկայությունը կրկին ընդգծում է ցածր ածխածնային տնտեսության անցնելու արդարացված և կենսական անհրաժեշտությունը՝ թե՛ ազգային անվտանգության, թե՛ էներգետիկ անվտանգության տեսանկյունից: Հայաստանի կախվածությունը ներմուծվող հանածո վառելիքից մեծ ռիսկ է ոչ միայն տնտեսության և ազգային անվտանգության, այլև բնակչության համար: Էներգետիկ կախվածությունը հանգեցրել է մատչելի ջեռուցման այլընտրանքների պակասի: 2023 թվականին աղքատության մակարդակը կազմել է 23.7%[5], իսկ Հայաստանի տարածքների մեծ մասը մինչ օրս չունի հարմարավետ ջերմաստիճան ապահովելու մատչելի տարբերակներ, և գյուղական բնակչությունը հիմնականում օգտագործում է վառելափայտ և գոմաղբ, ինչի հետևանքով հատկապես կանայք և երեխաները ենթարկվում են ներսենքային օդի աղտոտման վնասակար ազդեցությանը: Կլիմայի փոփոխությունը հետագայում էլ ավելի է խորացնելու աղքատությունն ու անհավասարությունը, քանի որ աղքատ տնային տնտեսությունները, հատկապես երեխաներով և խոցելի խմբերի ներկայացուցիչներով, ավելի հավանական է, որ ապրեն առավել խոցելի տարածաշրջաններում և ունենան սահմանափակ հարմարվողական կարողություններ: Մարդկանց գիտելիքների, հմտությունների և հարմարվողական կարողությունների ամրապնդումը՝ ներառյալ դպրոցական և համայնքային իրազեկման նախաձեռնությունների միջոցով, կարևոր է կայուն վարքագծի և կլիմակայուն կենսապահովման խթանման համար: Կլիմայական ռազմավարությունների մեջ երեխաների և ընտանիքների կարիքներին զգայուն սոցիալական պաշտպանության համակարգերի ներդրումը կարող է բարձրացնել տնային տնտեսությունների կարողությունը՝ նախապատրաստվելու, դիմակայելու և վերականգնվելու կլիմայական ցնցումներից: Նման մոտեցումները ոչ միայն պաշտպանում են երեխաների առողջությունը, կրթությունն ու բարեկեցությունը, այլև նպաստում են արդար անցմանը՝ օգնելով ընտանիքներին և երիտասարդներին ներգրավվել ավելի կանաչ և դիմակայուն տնտեսական հնարավորությունների մեջ: **ԱՍՀ 3.0-ն Հայաստանի համար կայուն զարգացման կարևոր գործիք է, որը հնարավորություն է տալիս իրականացնելու է շրջակա միջավայրի պաշտպանությունը, նվազեցնում է անհավասարությունները և բարձրացնում ազգային դիմակայունությունը:**

[5] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2024, Արմստատ, Համաշխարհային բանկ, https://armstat.am.

	բ) ԱՍՀ-ի նախապատրաստման լավագույն փորձերն ու փորձառությունը	ԱՍՀ 3.0-ն հիմնված է նախորդ ԱՍՀ պարբերաշրջանների ընթացքում ձեռք բերված փորձի և ազգային ռազմավարական փաստաթղթերի՝ այդ թվում ՋԳ-ՑԱՋԵՌ-ի վրա: ԱՍՀ 3.0-ի մշակումը տեղի է ունեցել ոլորտների միջգերատեսչական համադրմամբ և մասնակցային մոտեցումներով՝ պետական առանցքային մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության ներգրավմամբ: ԱՍՀ-ի իրագործումն ապահովելու նպատակով Հայաստանը ձևավորել է կլիմայական կառավարման ամուր համակարգեր՝ այդ թվում՝ միջգերատեսչական համակարգման մեխանիզմներ և ազգային ռազմավարություններ. օրինակ՝ ՀԱԾ և ոլորտային կլիմայական քաղաքականությունների համադրման գործընթացներ: Հայաստանի շարունակական հանձնառությունը Փարիզյան համաձայնագրին և գլոբալ կլիմայական բանակցություններում ակտիվ ներգրավվածությունը վկայում են երկրի քաղաքական համակարգում կայուն զարգացման սկզբունքների համապարփակ ինտեգրման մասին: Հայաստանը կիրառել է ԿՓՓՄԽ կողմից առաջարկված ուղեցույցները, օգտագործել է ՋԳ արտանետումների մեղմման մանրակրկիտ մոդել և ապահովել է ՉՀՀ համադրումը միջազգային չափանիշներին: Տեխնիկական աջակցությունը տրամադրվել է ՄԱՋԾ «Կլիմայական խոստում» նախաձեռնության շրջանակներում:
	գ) Համատեքստային այլ առաջնահերթություններ և ձգտումներ, որոնք բխում են Փարիզյան համաձայնագրի ընդունումից	Հայաստանը վերահաստատել է կլիմայական արդարության, ներառական զարգացման և տարածաշրջանային համագործակցության իր ձգտումը՝ ընդունելով, որ ԱՍՀ 3.0-ն նպաստում է ինչպես ազգային առաջնահերթություններին, այնպես էլ զուտ զրոյական գլոբալ նպատակներին: Հայաստանը 2024 թվականին միացել է Մեթանի գլոբալ պարտավորությանը, 2019 թվականին վավերացրել է Մոնրեալի արձանագրության՝ Կիգալիի փոփոխությունը և COP28-ի ընթացքում հայտնել է «Ատոմային էներգիայի եռապատկման հռչակագրի» առնչությամբ հանձնառության մասին:
բ) Հատուկ տեղեկատվություն այն Կողմերի վերաբերյալ (այդ թվում՝ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման կազմակերպություններ և դրանց անդամ պետություններ), որոնք համաձայնության են եկել հանդես գալ համատեղ՝ Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ներառյալ համատեղ գործողության վերաբերյալ համաձայնություն կնքած Կողմերը և այդ համաձայնության պայմանները՝ Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի 16-18-րդ կետերին համապատասխան:		
Կիրառելի չէ. Հայաստանը ներկայումս չի մասնակցում համատեղ ԱՍՀ ներկայացման՝ համաձայն Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի 16–18-րդ կետերի:		
գ) Ինչպես է Կողմը Գլոբալ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվել իր ԱՍՀ-ի նախապատրաստումը՝ ըստ Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի 9-րդ կետի:		

ԱՍՀ 3.0-ի մշակման հիմքում 2023 թ. Գլոբալ գնահատման արդյունքներն են, որոնցում ընդգծվում են հավակնությունների մեծացման, ՉՀՀ կայուն համակարգեր ունենալու և արդարացի անցման անհրաժեշտությունը: Օգտագործելով ՄԱԿ-ի ԿՓՇԿ 2024 թ. ԱՍՀ համադրական զեկույցը՝ Հայաստանը համադրել է իր վերանայված ԱՍՀ-ն միջազգային միտումների հետ՝ արտացոլելով հավակնությունների բարձրացման պարբերաշրջանը:	
դ) Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ ԱՍՀ ունեցող յուրաքանչյուր Կողմ, որը ներառում է հարմարվողականության գործողություններ տնտեսական դիվերսիֆիկացման ծրագրեր, որոնք հանգեցնում են մեղմման ուղեկցող օգուտների, ըստ Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի 7-րդ կետի՝ պետք է ներկայացնի տեղեկատվություն:	
I) Ինչպես են հաշվի առնվել արձագանքման միջոցառումների տնտեսական և սոցիալական հետևանքները ԱՍՀ մշակման ժամանակ	ԱՍՀ 3.0-ը մանրակրկիտ կերպով հաշվի է առել կլիմայական գործողությունների սոցիալական և տնտեսական չափերը, հատկապես համայնքներում և տարբեր կարիքներ ունեցող բնակչության խմբերում: ԱՍՀ-ն խթանում է արդար անցումը՝ ապահովելով, որ քաղաքականությունները նպաստեն ներառական «կանաչ» աշխատատեղերի ստեղծմանը, ընդլայնեն մատչելի և մաքուր էներգիայի հասանելիությունը և ուժեղացնեն դիմակայունությունը գյուղատնտեսությունից կախված շրջաններում: Այս ջանքերը ղեկավարվում են արդարության, տնտեսական հզորացման և ցածր արտանետումների անցման ընթացքում սոցիալական համախմբվածության պահպանման սկզբունքներով:
5. Ենթադրություններ և մեթոդաբանական մոտեցումներ ՋԳ արտանետումների (այդ թվում՝ մարդածին) և, եթե կիրառելի է, կլանումների գնահատման և հաշվառման համար	
ա) Ենթադրություններ և մեթոդաբանական մոտեցումներ, որոնք կիրառվել են ԱՍՀ-ին համապատասխան մարդածին ՋԳ արտանետումների և կլանումների հաշվառման համար՝ համաձայն 1/CP.21 որոշման 31-րդ կետի և CMA-ի կողմից ընդունված հաշվառման ուղեցույցների	Հայաստանը ՋԳ գույքագրման համար կիրառում է ԿՓՓՄԽ 2006 թ. ուղեցույցները՝ համապատասխան թարմացումներով՝ տարբեր ոլորտներում արտանետումների և կլանման հաշվարկի և հաշվառման նպատակով: Արտանետումների գնահատումները համապատասխանում են ՄԱԿ-ի ԿՓՇԿ շրջանակում ազգային հաշվետվություններին ներկայացվող պահանջներին:
բ) Ենթադրություններ և մեթոդաբանական մոտեցումներ, որոնք կիրառվել են ԱՍՀ-ում ընդգրկված քաղաքականությունների, միջոցառումների կամ ռազմավարությունների իրականացման	Ազգային միջոցառումները գնահատվում են արտանետումների գործակիցների, ոլորտային միտումների և տեխնոլոգիաների ներդրման սցենարների վերաբերյալ ստանդարտացված ենթադրությունների հիման վրա: Կիրառման ուղիները արտահայտում են ազգային ռազմավարություններն ու պլանավորման շրջանակները՝ համահունչ երկարաժամկետ զարգացման առաջնահերթություններին:

հաշվառման համար		
գ) Անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն այն մասին, թե Կողմն ինչպես է հաշվի առնելու ՄԱԿ-ի ԿՓՇԿ շրջանակում արդեն գոյություն ունեցող մեթոդներն ու ուղեցույցները՝ հաշվառելու մարդածին արտանետումները և կլանումները՝ ըստ Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի 14-րդ կետի		Հայաստանը օգտագործում է ԿՓՓՄԽ և ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի առկա ուղեցույցները (օրինակ՝ Ազգային հաղորդագրության, Թափանցիկության ընդլայնված շրջանակի, ԵԹՋ-ի և ՋԳ գույքագրման գործընթացներում)՝ ապահովելու համար ՋԳ արտանետումների և կլանման հետևողական հաշվետվությունը՝ ըստ Փարիզյան համաձայնագրի 4.14-րդ հոդվածի:
դ) ԿՓՓՄԽ կողմից մշակված մեթոդաբանություններ ու չափանիշները, որոնք կիրառվում են մարդածին ՋԳ արտանետումների և կլանումների գնահատման համար		ԳՏՊ արժեքների աղբյուրն է՝ ԿՓՓՄԽ Վեցերորդ գնահատման զեկույց, Առաջին աշխատանքային խումբ (IPCC AR6 WGI GWP-100):[6] Յուրաքանչյուր գազի համար ԳՏՊ արժեքները հետևյալն են՝ • CO_2 - 1 • CH_4 - 29.8 • N_2O – 273
ե) Այլ ենթադրություններ և մեթոդաբանական մոտեցումներ, որոնք կիրառվել են ԱՍՀ-ի	I) Հղման ցուցանիշների, ելակետ(եր)ի հղման մակարդակ(ներ)ի կազմման կարգը, ներառյալ՝ ըստ անհրաժեշտության՝ ոլորտային,	Բոլոր միջոցառումները և թիրախները, որոնք ներառված են ԱՍՀ 3.0-ում, հիմնված են 1990 թվականի ՋԳ արտանետումների (**26,014 Գգ CO_2 համարժեք**) վրա՝ որպես ելքային տարի: 2022 թվականից հետո ոլորտային կանխատեսվող արտանետումները մոդելավորվել են՝ օգտագործելով հետևյալ աղբյուրների տվյալները՝ ՋԳ արտանետումների 1990-2022 թթ. գույքագրում, Երկամյա առաջընթացի զեկույց, ՋԳ-ՑԱՋԵՌ, Արժույթի միջազգային հիմնադրամ, ԱՐՄՍՏԱՏ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը Հայաստանում, ինչպես նաև արտանետումների վերաբերյալ կառավարության ոչ իրավական փաստաթղթերը: **2035 թվականի** համար կանխատեսվող արտանետումները գործունեության սովորական սցենարի

[6] https://www.ipcc.ch/report/ar6/wg1/downloads/report/IPCC_AR6_WGI_Chapter07.pdf

բովանդակության ըմբռնման, և ըստ անհրաժեշտության՝ համապատասխան արտանետումների և կլանումների գնահատման համար, ներառյալ՝	ենթաբաժինների կամ գործունեության տեսակներին համապատասխան հղման մակար-դակները՝ ներկայացնելով օգտագործված հիմնական պարամետրերը, ենթադրությունները, սահմանումները, մեթոդաբանություն-ները, տվյալների աղբյուրները և մոդելները	(պահպանողական սցենար) դեպքում գնահատվում են մոտավորապես **24,740 Գգ CO_2 համարժեք**, ինչը գրեթե հավասար է 1990 թվականի արտանետումների մակարդակին՝ **26,014 Գգ CO_2 համարժեք**:
	II) Այն կողմերի համար, որոնց ԱՍՀ-ն ընդգրկում է ոչ ՋԳ բաղադրիչներ, տեղեկատվություն է ներկայացվում այդ բաղադրիչների վերաբերյալ օգտագործված ենթադրությունների և մեթոդաբանական մոտեցումների մասին՝ ըստ անհրաժեշտության	ԱՍՀ 3.0-ում ընդգրկվում են ոչ ՋԳ բաղադրիչներ՝ օրինակ՝ հարմարվողականությունն ու արդար անցումը, որոնք, համապատասխանաբար, հնարավորության դեպքում ներկայացվում են քանակական ցուցանիշներով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ որակական նկարագրություններով՝ արտացոլելով երկրի զարգացման առաջնահերթությունները:

	III) Տեղեկատվություն կլիմայական այն գործոնների գնահատման մեթոդաբանության վերաբերյալ, որոնք ընդգրկված են ԱՍՀ-ում, սակայն ներառված չեն ԿՓՓՄԽ ուղեցույցներում	ԿՓՓՄԽ ուղեցույցներից դուրս կլիմայական ազդակներ չեն ներառվել:
	IV) Լրացուցիչ տեխնիկական տեղեկատվություն՝ ըստ անհրաժեշտության	Տեխնիկական ենթադրությունները ներառում են՝ • ՀՆԱ աճի միջին տեմպ - 4%՝ 2031–2035 թթ. համար • ոլորտային էներգետիկ միտումներ • վերականգնվող էներգիայի դրվածքային հզորության գործակիցներ՝ արևային ֆոտովոլտային կայանների համար՝ 17%:
զ) Եթե կիրառելի է, կամավոր համագործակցություն իրականացնելու մտադրություն՝ համաձայն Փարիզյան համաձայնագրի 6-րդ հոդվածի		Հայաստանը հաստատում է իր մտադրությունը՝ մասնակցելու Փարիզյան համաձայնագրի 6-րդ հոդվածի ներքո միջազգային համագործակցության մեխանիզմներին: Ներգրավման առաջնահերթ ոլորտներն են՝ վերականգնվող էներգետիկան, արդյունաբերական գործընթացները, աղբահանությունը: Կառավարությունն աշխատում է անհրաժեշտ ինստիտուցիոնալ կառուցվածքների ստեղծման վրա, այդ թվում՝ ազգային ռեգիստրի և թույլտվությունների շրջանակի ձևավորմանը՝ համապատասխանեցնելով միջազգային ուղեցույցներին: Հայաստանը շարունակելու է ուսումնասիրել ինչպես շուկայական (6.2 և 6.4 հոդվածներ), այնպես էլ ոչ շուկայական (6.8 հոդված) մոտեցումները՝ աջակցելու ազգային կլիմայական նպատակների իրականացմանը:
6. Ինչպես է Կողմը գնահատում, որ իր ԱՍՀ-ն արդար և հավակնոտ է՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները		
ա) Ինչպես է Կողմը, հաշվի առնելով ազգային	ԱՍՀ 3.0-ը միաժամանակ հավակնոտ է և արդար՝ սահմանելով արտանետումների կրճատման ոչ պայմանական և պայմանական թիրախներ՝ համապատասխանաբար 44% և 52%՝ 1990 թվականի ՋԳ մակարդակի համեմատ: Թեև Հայաստանը գլոբալ արտանետումների ընդամենը 0.02%-ի աղբյուրն է, այդ նպատակները վկայում են երկրի վճռական հանձնառությունը կլիմայական փոփոխությունների և Փարիզյան համաձայնագրի շրջանակում գլոբալ համերաշխության նկատմամբ: Թիրախները սահմանված են	

առանձնահատկությունները, որոշում իր ԱՍՀ-ի արդար և հավակնոտ լինելը	զուտ արտահայտությամբ՝ համահունչ լինելով Հայաստանի ցածր արտանետումներով երկարաժամկետ զարգացման տեսլականին և հաշվի առնելով ոլորտային կլանիչները, ինչպիսին է ՀՕՀՕՓԱՏ-ը: 44% կազմող ոչ պայմանական թիրախն առաջընթաց է նախորդ ԱՍՀ-ի (40%) համեմատ, հատկապես երբ դիտարկվում է ՋԳ արտանետումների թարմացված գույքագրման համատեքստում ժամանակային շարքի հետընթաց վերանայման, բարելավված տվյալների որակի և նախորդ ԱՍՀ ներկայացումից հետո ձևավորված ազգային իրավիճակի համատեքստում: Հայաստանը բարելավել է ազգային ՋԳ գույքագրման հուսալիությունը՝ կիրառելով ճշգրիտ մեթոդաբանություններ և ընդգրկելով ավելի լայն ոլորտներ՝ նպատակների սահմանման և հետևողականության համար ապահովելով ավելի վստահելի ելակետ: Առանձնահատուկ է Հայաստանի կլիմայական քաղաքականության և ինստիտուցիոնալ համակարգերի զգալի հզորացումը: Նախորդ ԱՍՀ-ի ներկայացումից հետո կառավարությունն ընդունել է առանցքային ռազմավարական փաստաթղթեր և ոլորտային ապաածխայնացման ճանապարհային քարտեզներ՝ լավարկված կանոնակարգային գործիքներով և մշտադիտարկման համակարգերով, որոնք միասին բարձրացնում են Հայաստանի մեղմման միջոցառումների իրականացման և վերահսկման կարողությունները: Ավելին, ԱՍՀ 3.0-ում ընդգրկված են նոր և ընդլայնված մեղմման միջոցառումներ՝ ուղղված էներգախնայողությանը, վերականգնվող էներգիային, անտառային տնտեսությանը և տրանսպորտին: Դրանց թվում են հանրային շենքերում ենթակառուցվածքային վերափոխման ծրագրերը, էլեկտրական շարժունակության աջակցությունը և անտառների կայուն կառավարմանն ուղղված միջոցառումները: Այս նախաձեռնություններից շատերը նախորդ ԱՍՀ-ում փորձնական փուլում էին կամ ամբողջությամբ ներառված չէին: Այս միջոցառումների իրագործումը բարելավվել է նաև ընդլայնված միջազգային աջակցության հասանելիության շնորհիվ: Հայաստանը ակտիվորեն համագործակցում է միջազգային ֆինանսական հաստատությունների, կլիմայական ուղղահայաց հիմնադրամների և զարգացման գործընկերների հետ՝ տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացման նպատակով: Միջազգային աջակցության արդյունավետ մեխանիզմների առկայությունը ամրապնդում է ԱՍՀ թիրախների իրագործելիությունը: Հայաստանի համեմատական դիրքը ևս կարևոր է. որպես դեպի ծով ելք չունեցող և աշխարհաքաղաքական դժվարությունների բախվող երկիր, ներառյալ վերջերս Ղարաբաղից ավելի քան 100,000 մարդու տեղահանումը, Հայաստանը զգուշորեն հավասարակշռում է կլիմայական հավակնությունները սոցիալ-տնտեսական դիմակայունության հետ: Տնտեսությունը մնում է մեծապես կախված ներմուծվող հանածո վառելիքից և կենսական ապրանքներից, ուստի զգայուն է արտաքին ցնցումների նկատմամբ: Այնուամենայնիվ, կառավարությունը հանձնառու է կլիմայական գործողություններն իրականացնելիս խուսափել տնտեսական և սոցիալական բացասական ազդեցություններից, հատկապես խոցելի խմբերի համար: Կրթությունը և հմտությունների զարգացումը դիտվում են որպես այս անցման հիմնարար բաղադրիչներ: Կլիմայական գրագիտության, քննադատական մտածողության, նախագծային ուսուցման և իրազեկության բարձրացման խթանման միջոցով՝ սկսած նախնական կրթությունից մինչև մասնագիտական և բարձրագույն կրթության մակարդակները, Հայաստանը նպատակ ունի ապահովել, որ ապագա սերունդները ունենան այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք անհրաժեշտ են արդար և հավակնոտ կլիմայական նպատակների իրականացման համար:

	Ընդհանուր առմամբ՝ այս բոլոր գործոնները միասին համոզիչ, թափանցիկ և արդար հիմնավորում են արտանետումների կրճատման Հայաստանի թիրախների համար: ԱՍՀ 3.0-ի բարձր հավակնությունը արտացոլվում է ոչ միայն հիմնական ցուցանիշներում, այլև որդեգրած քաղաքականության հիմքում, բարելավված տվյալներում, պլանավորման գործընթացներում և կլիմայի մեղմման միջոցառումների լայն շրջանակում:
բ) Արդարության նկատառում-ներ՝ ներառյալ հավասարում-թյունը	**ԱՍՀ 3.0 թիրախներն արտացոլում են երկրի ներկայիս կարողությունների, ռազմավարական ուղղությունների և միջազգային աջակցության անհրաժեշտության միջև հավասարակշռությունը՝ գլոբալ կլիմայական նպատակների համատեքստում:** **ԱՍՀ 3.0 հիմնական սկզբունքներից է հավասարությունը ոչ միայն պատմական պատասխանատվության և ազգային կարողությունների տեսանկյունից, այլև կլիմայական արդարության տեսանկյունից՝ ապահովելով, որ կլիմայական գործողությունները սոցիալապես ներառական լինեն և արձագանքեն ամենախոցելի խմբերի կարիքներին:** Հայաստանը գիտակցում է, որ դեպի ցածրածխածնային տնտեսություն արդար անցումը կենսական կարևորություն ունի ոչ միայն տնտեսության մեջ բացասական ազդեցություններից խուսափելու, այլև կանանց, հաշմանդամների, երեխաների, երիտասարդների, գյուղական և ցածր եկամուտ ունեցող համայնքների վրա կլիմայական փոփոխությունների անհամաչափ ազդեցություններին արձագանքելու համար: Հայաստանի անցումը ցածրածխածնային տնտեսության ներառում է կանաչ աշխատատեղերի ստեղծումը՝ կենսապահովման արժանապատիվ վարձատրությամբ, անվտանգության պատշաճ պայմաններով և կլիմայի փոփոխության հարմարվողականության ու կայունության պլանավորման համակարգմամբ: Համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության արդար անցման ուղեցույցների՝ Հայաստանի ԱՍՀ 3.0-ն սոցիալական և զբաղվածության նկատառումները ներառում է ոլորտային մակարդակով: Կառավարությունը պարտավորվում է նվազագույնի հասցնել սոցիալ-տնտեսական բացասական ազդեցությունները և առավելագույնի հասցնել կլիմայական գործողությունների օգուտները՝ կանաչ աշխատատեղերի ստեղծման, սոցիալական ներառականության և խոցելի խմբերին աջակցության միջոցով: Հայաստանի արդար անցման շրջանակը կղեկավարվի նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով (UNCRC) և դրա 26-րդ ընդհանուր մեկնաբանությամբ՝ ապահովելով, որ կլիմայական քաղաքականությունները պաշտպանեն երեխաների իրավունքները, խթանեն նրանց մասնակցությունը և սերունդների միջև արդարությունը դիտարկեն որպես հիմնարար սկզբունք: **Հայաստանը ԱՍՀ 3.0 արդար անցումը դիտարկում է որպես իր կլիմայական ռազմավարության առանցքային բաղադրիչ՝ ուղղված դիմակայուն և ցածրածխածնային տնտեսության կառուցմանը, որն անմիջականորեն կապված է երկրի զարգացման ավելի լայն օրակարգի հետ:** Հայաստանը ճանաչում է կրթությունն ու ողջ կյանքի ընթացքում ուսուցումը որպես այս անցման կարևոր խթանիչներ: **Փարիզյան համաձայնագրի և ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի պահանջներին համահունչ՝ Հայաստանը հետևողականորեն աշխատում է կլիմայական և զբաղվածության իր ռազմավարությունները դարձնել ներառական, իրավունքների վրա հիմնված և մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան:** **ՀՀ Զբաղվածության 2025-2031 թթ. ռազմավարությունը ներկայացնում է համապարփակ տեսլական՝ Հայաստանում ներառական, ճկուն և ապագային ուղղված աշխատանքի շուկա կառուցելու համար:** Ռազմավարության հիմքում դրված է արժանապատիվ և կայուն աշխատատեղերի ստեղծումը, մարդկային կապիտալի զարգացումը և սոցիալական համախմբման խթանումը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում խոցելի խմբերին՝ երիտասարդներին, հաշմանդամություն ունեցող անձանց,

	կանանց, տեղահանվածներին և համայնքներին՝ նպատակային աշխատանքային ծրագրերի և հանրային ծառայությունների հասանելիության բարելավման միջոցով: Գենդերային հավասարությունը ռազմավարության միջոլորտային առաջնահերթություն է, որի նպատակն է վերացնել կառուցվածքային խոչընդոտները, որոնք սահմանափակում են կանանց մասնակցությունը աշխատաշուկային: Միջոցառումները ներառում են երեխաների խնամքի մատչելի ծառայությունների ընդլայնում, խնամքի տնտեսության աջակցություն, հավասար վարձատրության խթանում և աշխատավայրում խտրականության դեմ պայքարի ստանդարտների կիրառում: Այս ջանքերը զուգորդվում են աշխատաշուկայի ֆորմալացման նախաձեռնություններով, հատկապես այն ոլորտներում, որտեղ չգրանցված զբաղվածությունը անհամաչափորեն ազդում է կանանց և ծայրահեղ խոցելի խմբերի վրա: Կլիմայական հանձնառությունների համատեքստում **Կանաչ և կայուն տնտեսական զարգացման ռազմավարությունը** ներառում է կանաչ աշխատատեղերի և արդար անցման սկզբունքներ: Այն խթանում է աշխատանքային հնարավորությունները շրջակա միջավայրի համար կայուն ոլորտներում, ինչպիսիք են ԷԱ-ն, վերականգնվող էներգիան, կայուն գյուղատնտեսությունը և շրջանաձև տնտեսության մոդելները: Կանաչ աշխատատեղերի ստեղծումը խթանվում է նպատակային հմտությունների զարգացման, մասնագիտական ուսուցման բարեփոխումների և մաքուր տեխնոլոգիաների մեջ ներդրումներ կատարող բիզնեսներին աջակցման միջոցներով: Միևնույն ժամանակ ռազմավարությունն ընդունում է կանաչ անցման պոտենցիալ ռիսկերը աշխատաշուկայի որոշակի հատվածների համար, մասնավորապես՝ ավանդական էներգետիկայի և գյուղատնտեսության ոլորտներում, ուստի ներառում է վերապատրաստման, սոցիալական պաշտպանության և տարածաշրջանային զարգացման միջոցառումների դրույթներ՝ ապահովելու արդար և ներառական վերափոխումը: **Հայաստանը աջակցում է կայուն ձեռնարկությունների և արժանապատիվ աշխատանքի զարգացմանը**: Հայաստանը գիտակցում է միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների և կոոպերատիվների կենսական դերը անցումային արդար արդյունքների հասնելու գործում: Ռազմավարությունը նպաստում է կայուն ձեռնարկությունների համար նպաստավոր միջավայրի ձևավորմանը հատկապես գյուղատնտեսության և էներգետիկայի ոլորտներում՝ աջակցելով նորարարությանը, կանաչ բիզնեսին և աշխատուժի որակավորման բարձրացմանը: Այս ջանքերն ուղղված են նոր աշխատատեղերի ստեղծմանը, մրցունակության բարձրացմանը և տնտեսության դիվերսիֆիկացմանը: **Հայաստանը նպատակ ունի բարելավել ժողովրդագրական իրավիճակը՝ հիմնվելով ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թվականների որոշման վրա:** Ծրագրի ընդունումը պայմանավորված է ներկայիս ժողովրդագրական մարտահրավերներով՝ ծնելիության ցածր մակարդակ, վաղաժամ մահացություն, բնակչության ծերացում և միգրացիայի հետ կապված խնդիրներ: Ծրագրով առաջարկվող միջոցառումները նպատակ ունեն մեղմել նշված մարտահրավերները և դրական դինամիկա ապահովել նշված ցուցանիշների ուղղությամբ՝ միևնույն ժամանակ ապահովելով ծրագրով նախատեսված նպատակների իրականացումը: **Գենդերային զգայունությունը ներդրված է քաղաքականությունների և ծրագրերի իրականացման ամբողջ գործընթացում:** Կառավարությունն ընդունում է, որ կանայք և աղջիկները, հատկապես գյուղական և ցածր եկամուտ ունեցող համայնքներում, առավել խոցելի են կլիմայական փոփոխությունների ռիսկերի նկատմամբ՝ առկա անհավասարությունների պատճառով: Հայաստանը նպատակ ունի ներառել երեխաների վրա կենտրոնացած, կլիմայական ցնցումներին արձագանքող սոցիալական պաշտպանության միջոցառումներ իր կլիմայական քաղաքականության մեջ՝ ապահովելու համար, որ երեխաներն ու ընտանիքները

	կլիմայական ճգնաժամերի ժամանակ ստանան ժամանակին աջակցություն (այսինքն՝ «ցնցումներին արձագանքող» կամ «հարմարվողական սոցիալական պաշտպանություն»՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության լուծումներին և նպատակներին աջակցելու նպատակով): Հայաստանը կուժեղացնի հիմնական սոցիալական պաշտպանության համակարգերը և կզարգացնի նպատակային սոցիալական աջակցության ծրագրեր՝ օրինակ՝ «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» օրենքների միջոցով, որոնք կանդրադառնան երեխաների և խոցելի ընտանիքների հատուկ կարիքներին՝ նպաստելով աղքատության նվազեցմանը և կլիմայական ցնցումներին դիմակայունության բարձրացմանը: Կանայք, աղջիկներն ու երիտասարդները, հատկապես գյուղատնտեսության ոլորտում, ունեն ֆինանսական ռեսուրսների, կրթության և վերապատրաստման հասանելիության բարձրացման կարիք, այդ առումով կին ֆերմերները կլիմայի փոփոխության նկատմամբ ամենախոցելի խումբն են՝ հարմարվողականության նվազագույն կարողություններով: Միևնույն ժամանակ կանայք կարևոր դերակատարներ են գյուղատնտեսության, էներգիայի օգտագործման և բնական ռեսուրսների կառավարման ոլորտներում, որոնք Հայաստանի կլիմայական ռազմավարության գլխավոր ուղղություններն են: Այդ պատճառով, Հայաստանը ամրապնդում է կանանց դերը կլիմայի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում, բարելավում է կլիմայադիմակայուն տեխնոլոգիաների և ծառայությունների հասանելիությունը և ինտեգրում է գենդերային մոտեցումները կլիմայական բյուջետավորման և պլանավորման գործընթացներում: Այս ջանքերը միահյուսված են ազգային գենդերային քաղաքականություններին, ինչպիսին ՀՀ 2025-2028 թթ. գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունն է, որը խթանում է կանանց հավասար տնտեսական մասնակցությունը, աշխատանքի իրավունքների պաշտպանությունը և առաջնորդության հնարավորությունները տարբեր ոլորտներում: Բացի դրանից, ռազմավարությունը նպատակ ունի զարգացնել գենդերային զգայուն և արձագանքող մոտեցումներ կլիմայական փոփոխությունների նկատմամբ՝ ապահովելով ներառական սկզբունքներ և բարձրացնելով իրազեկվածությունը: Այս ջանքերը նպատակ ունեն բացահայտել կլիմայական փոփոխություններից բխող գենդերային և սոցիալական ազդեցությունների խնդիրները և ներդնել դրանց արձագանքող մոտեցումներ: Այս մոտեցումը համահունչ է ՀԸԳՀ-ին և նպաստում է Հայաստանի կայուն և ներառական վերափոխումներին՝ ուղղված կլիմայական չեզոքությանը, ինչպես նաև հանձնառություն ունի ապահովելու, որ սոցիալ-ժողովրդագրական խմբերը՝ անկախ սեռից, տարիքից, տեղակայությունից, սոցիալ-տնտեսական վիճակից կամ կարողությունից, հավասարապես օգտվեն կլիմայական քաղաքականություններից և ձայն ունենան դրանց ձևավորման գործընթացում:
գ) Ինչպես է Կողմը անդրադարձել Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետին	Թեև պատմականորեն Հայաստանը ՋԳ խոշոր արտանետող չէ, ԱՍՀ 3.0-ն ակնհայտ առաջընթաց է նախորդ՝ ԱՍԳ 2-ի համեմատ (40%՝ մինչև 2030 թ.)՝ սահմանելով ՋԳ արտանետումների կրճատման ավելի մեծ թիրախ՝ 44-52% մինչև 2035 թվականը:
դ) Ինչպես է Կողմը անդրադարձել Փարիզյան համաձայնագրի 4-րդ հոդվածի 4-րդ կետին	Որպես զարգացող երկիր՝ Հայաստանը նախաձեռնողականություն է ցուցաբերում՝ կամավոր կերպով ստանձնելով տնտեսության ամբողջ ծավալով ՋԳ արտանետումների բացարձակ նվազեցման թիրախներ՝ այդպիսով գերազանցելով իր նկատմամբ կիրառելի նվազագույն պահանջները:
7. Ինչպես է ԱՍՀ-ն նպաստում Կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված նպատակին հասնելուն	

ա) Ինչպես է ԱՍՀ-ն նպաստում Կոնվենցիայի 2-րդ հոդվածում սահմանված նպատակի իրականացմանը	Հայաստանի ԱՍՀ 3.0, ստանձնելով տնտեսության ամբողջ ծավալով արտանետումների կրճատման հանձնառություններ, նպաստում է ՋԳ խտության կայունացմանը: ԱՍՀ 3.0 թիրախները համահունչ են աշխարհում ՋԳ կուտակման կայունացմանն ու միջին գլոբալ ջերմաստիճանի աճը 1.5°C-ով սահմանափակելուն ուղղված համաշխարհային ջանքերին՝ Փարիզյան համաձայնագրի երկարաժամկետ ու Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի ԿՓՇԿ ընդհանուր նպատակի հետ համապատասխան: Շրջակա միջավայրի պահպանության, հարմարվողականության և արդար անցման ինտեգրումը լրացուցիչ աջակցություն է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համար՝ հաշվի առնելով այս ռազմավարությունների փոխկապվածությունը: Սա ամրապնդում է Հայաստանի կլիմայական կայունությունը՝ միևնույն ժամանակ սահմանելով արտանետումների կրճատման հավակնոտ թիրախներ: Հայաստանի ԱՍՀ 3.0-ն ներառում նաև արդար անցման շրջանակ, որն արձագանքում է սոցիալական և տարածաշրջանային անհավասարություններին, գենդերային անհավասարությանը և խոցելի խմբերի հատուկ կարիքներին: Այս ջանքերը լիովին համահունչ են երկրի կայուն զարգացման առաջնահերթություններին և ապահովում են, որ մեղմման միջոցառումները ոչ թե խոչընդոտեն, այլ խթանեն ընդգրկուն սոցիալ-տնտեսական առաջընթացը:
բ) Ինչպես է ԱՍՀ-ն նպաստում Փարիզի համաձայնագրի 2-րդ հոդվածի 2(ա) կետի և 4-րդ հոդվածի 1-ին կետի կատարմանը	Հայաստանի՝ գիտության վրա հիմնված մեղմման նպատակները համահունչ են գլոբալ միջին ջերմաստիճանի աճը 1.5°C-ից ցածր պահելուն ուղղված միջազգային ջանքերին: ԱՍՀ 3.0-ն ներառում է խորքային քանակական և որակական միջոցառումներ՝ համահունչ 2(ա) կետի պահանջներին: Համապատասխան 4.1 հոդվածի՝ Հայաստանը ներկայացրել է հավակնոտ նպատակներ, իրականացրել հանրային ներգրավվածություն և ստանձնել է թափանցիկության և պարբերական հաշվետվողականության պարտավորություն՝ ՉՀՀ ու Երկամյա թափանցիկության զեկույցի միջոցով:
գ) Աջակցության կարիքներ և իրագործմանն ուղղված միջազգային համագործակցություն	Հայաստանը, ինչպես բազմաթիվ զարգացող երկրներ, լուրջ խնդիրների է հանդիպում կլիմայական մեղմման իր ռազմավարությունն իրականացնելիս, մասնավորապես կրթության, առողջապահության, արդարադատության, սոցիալական պաշտպանության և զբաղվածության ոլորտներում առաջնահերթ զարգացման կարիքներին վերաբերող ներդրումների հետ մրցակցության պայմաններում: Չնայած գլոբալ արտանետումներում ունեցած համեմատաբար փոքր մասնաբաժնին՝ երկիրը խոցելի է կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ, և Փարիզյան համաձայնագրի շրջանակում հանձնառու է աջակցել գլոբալ մեղմման ջանքերին: Այս հանձնառությունները ֆինանսական, տեխնիկական և ինստիտուցիոնալ լուրջ խոչընդոտների հաղթահարում են պահանջում: **Ֆինանսական աջակցության կարիքներ** Հայաստանում կլիմայի փոփոխության մեղմման նպատակների իրականացումը զգալի ֆինանսական ռեսուրսներ է պահանջում: Ծրագրի իրականացման ընդհանուր արժեքը 2026–2035թթ. համար գնահատվում է շուրջ **2 տրիլիոն ՀՀ դրամ**, որի մեջ մեղմման միջոցառումների համար՝ **1.5 տրիլիոն ՀՀ դրամ** (≈ 3.8 միլիարդ ԱՄՆ դոլար), իսկ հարմարվողականության միջոցառումների համար՝ **498 միլիարդ ՀՀ դրամ**

	(≈1.3 միլիարդ ԱՄՆ դոլար): 22 ոչ պայմանական մեղմման միջոցառումները կիրականացվեն ներքին և միջազգային ֆինանսական ռեսուրսների, ինչպես նաև քաղաքականության բարեփոխումների համադրությամբ՝ կազմելով շուրջ **748 միլիարդ ՀՀ դրամ**: Էական արտաքին աջակցության լրացուցիչ կարիք կա մեղմման պայմանական 13 միջոցառումների համար, որոնց ընդհանուր գնահատված արժեքը կազմում է շուրջ **710 տրիլիոն ՀՀ դրամ**: Չնայած պայմանական մեղմման միջոցառումներն ընդհանուր փաթեթի մեջ հիմնականում ծախսարդյունավետ են և ապահովում են կլիմայական և սոցիալ-տնտեսական կարևոր արդյունքներ, դրանց իրականացումը խոչընդոտում են բարձր նախնական ծախսերը, երկարատև ներդրումային հեռանկարները, սահմանափակ հասանելիությունը մաքուր տեխնոլոգիաներին և մի շարք ոլորտներում դրանց առևտրային ցածր կիրառելիությունը: Առանց նպատակային ֆինանսական աջակցման մեխանիզմների՝ արտոնյալ վարկերի, դրամաշնորհների և ռիսկերի կիսման գործիքների, այդ միջոցառումների մեծ մասը տնտեսական առումով կենսունակ չեն լինի: 2018-2024 թթ. Հայաստանը որոշակի առաջընթաց է գրանցել կլիմայական ֆինանսների ներգրավման ուղղությամբ, սակայն ֆինանսավորման առկա մակարդակները դեռևս չեն համապատասխանում ԱՍՀ 3.0-ում հայտարարված հավակնոտ նպատակներին: Փարիզյան համաձայնագրի 6-րդ հոդվածի համատեքստում Հայաստանը նպատակ ունի ներգրավել արտոնյալ ֆինանսավորում, համակցված ֆինանսական գործիքներ, ինչպես նաև կիրառել ածխածնային շուկայի հնարավորությունները՝ մեծ ազդեցություն ունեցող պայմանական միջոցառումները տնտեսապես արդարացված և ներդրումային տեսանկյունից պատրաստ դարձնելու համար: **Ֆինանսական մեխանիզմներ ԱՍՀ 3.0-ի համար** Հայաստանի ԱՍՀ 3.0-ն ֆինանսական բազմաբնույթ և բազմամակարդակ կառուցվածք է, որը միավորում է ազգային, միջազգային, հանրային և մասնավոր աղբյուրներ: Սա ներառում է պետական բյուջետային հատկացումները թե՛ ազգային, թե՛ համայնքային մակարդակներում, որոնք համաֆինանսավորում են հիմնական ենթակառուցվածքային և կլիմայական կայունության ծրագրերը: Հայաստանը կշարունակի բազմակողմ ֆինանսական և տեխնիկական համագործակցությունը զարգացման բանկերի և երկկողմ գործընկերների հետ: Կլիմայական ֆինանսավորման գործիքները, այդ թվում՝ համագործակցությունը ուղղահայաց կլիմայական ֆոնդերի հետ, կենսական նշանակություն կունենան մեղմման, հարմարվողականության, կարողությունների զարգացման և տեխնոլոգիաների փոխանցման համար: Արտանետումների կրճատումները ֆինանսավորելու նպատակով Հայաստանը կքննարկի Փարիզյան համաձայնագրի 6-րդ հոդվածի շրջանակում ածխածնային շուկայի մեխանիզմների կիրառումը: Ուսումնասիրվում են նաև պարտքի փոխանակման մեխանիզմների կիրառման հնարավորությունները:

	Մասնավոր հատվածի ներգրավվածությունն ակնկալվում է ինչպես մեղմման, այնպես էլ հարմարվողականության ոլորտներում՝ պետություն-մասնավոր գործընկերություն (ՊՄԳ), բաժնետիրական ներդրումների և այլն: Համակցված ֆինանսավորման մեխանիզմները, կանաչ պարտատոմսերը և արդյունքահեն ֆինանսավորումը կօգնեն նվազեցնել ներդրումային ռիսկերը, մասնավորապես՝ վերականգնվող էներգետիկայի, զբոսաշրջության և քաղաքային հարմարվողականության ոլորտներում: Աղետի ռիսկի ֆինանսավորումը, ինչպես օրինակ Cat-DDO-ները, պահուստային վարկային գծերը և կլիմայական ու աղետային ապահովագրական գործիքները կարևոր կլինեն սեյսմիկ և կլիմայական ցնցումներին արձագանքելու համար: Հայաստանը հետագայում կարող է նաև դիմել ՄԱԿ-ի ԿՓՇԿ կից Կորուստների և վնասների հիմնադրամին՝ ծայրահեղ երևույթներից հետո վերականգնման աջակցություն և օգնություն ստանալու նպատակով: **Միջազգային գործընկերների հանձնառությունն ու դերը** Հայաստանը վճռականորեն հանձնառու է իրականացնել իր ոչ պայմանական մեղմման նպատակները և նպաստել գլոբալ կլիմայական կայունությանը: Սակայն պայմանական միջոցառումները, բարձր արդյունավետություն ունենալով հանդերձ, չեն կարող իրագործվել առանց համապատասխան միջազգային աջակցության՝ ներառյալ ֆինանսական աջակցությունը, տեխնոլոգիաների հասանելիության ապահովումը և կարողությունների զարգացումը՝ համահունչ երկրի զարգացման առաջնահերթություններին և իրականացման ժամանակացույցին: Բազմակողմ զարգացման բանկերը, ոլորտային կլիմայական հիմնադրամները, ՄԱԿ-ի գործակալությունները, երկկողմ դոնորները և Հոդված 6-ի հնարավոր գործընկերները կարևոր դեր ունեն Հայաստանի՝ մեղմման հավակնությունների ընդլայնման գործում՝ ֆինանսական գործիքների տրամադրման, տեխնոլոգիաների հասանելիության և գիտելիքների փոխանակման միջոցով:

8. Հարմարվողականության հաղորդակցումը՝ ՀՀ 2026-2035 թվականների արդիականացված ԱՍՀ-ի մաս (Որոշում 9/CMA.1)

ա) Ազգային հանգամանք-ներ, ինստիտու-ցիոնալ կառուցակար-գեր և իրավական	Հայաստանը բնութագրվում է տեղագրության բազմազանությամբ և ցամաքային կլիմայով: Տարածքի ավելի քան 77%-ը տեղակայված է ծովի մակերևույթից 1000 մետր և ավելի բարձրության վրա: Լեռնային տեղանքը և աշխարհագրական դիրքը երկիրը խիստ խոցելի են դարձնում կլիմայական վտանգների նկատմամբ: Մայրաքաղաք Երևանում ամառները տաք են (30°C-33°C), իսկ ձմեռները՝ ցուրտ (1°C-3°C): Տարեկան տեղումները զգալիորեն տարբերվում են ըստ եղանակների և վայրերի՝ սկսած Արարատյան դաշտի 200 մմ-ից մինչև լեռնային շրջանների ավելի քան 1000 մմ-ը: 1929-2016 թթ. ընթացքում Հայաստանում գրանցվել է ջերմաստիճանի միջինում 1.23°C-ով բարձրացում, և կանխատեսվում է, որ մինչև 2050-ական թվականները այն կարող է աճել ևս 2.8°C-ով, իսկ մինչև 2100 թ.՝ հասնել 5.8°C-ի:[7] Ջերմաստիճանի բարձրացմանը զուգընթաց դարավերջին կանխատեսվում է նաև տեղումների քանակի մինչև 8.3%-

[7] Նշված կլիմայական կանխատեսումները ստացվել են ՀԲ Կլիմայի փոփոխության գիտելիքների պորտալի հասանելի տվյալներից: Այս տվյալներն ընդհանուր շրջանառության մոդելների (ԸՇՄ) բազմակի կիրառման արդյունքում կատարված մոդելավորումների մշակված արդյունքներ են:

շրջանակ	ով նվազում: Այս միտումներն արդեն իսկ հանգեցնում են ավելի հաճախակի երաշտների, ջերմային ալիքների և ծայրահեղ եղանակային երևույթների, ինչպիսիք են առատ տեղումները և կարկտահարությունները, որոնք զգալի ռիսկեր են Հայաստանի բնակչության և տնտեսության համար: Կլիմայական աղետները Հայաստանում հանգեցրել են զգալի և շարունակական կորուստների հատկապես հիմնական՝ գյուղատնտեսության, ջրային ռեսուրսների, ենթակառուցվածքների և առողջապահություն ոլորտներում: Վերջին 25 տարիների ընթացքում կլիմայական փոփոխությունների պատճառով երկիրը կրել է ավելի քան 1.5 միլիարդ դոլարի ընդհանուր վնաս, որը երկրի տարեկան ՀՆԱ-ի մոտ 0.6%-ն է:[8] Կլիմայական գործոններն զգալիորեն ազդել են գյուղատնտեսության արտադրողականության վրա. կրկնվող երաշտները, կարկտահարությունները, ցրտահարությունները և ջերմային ալիքները նվազեցրել են բերքատվությունը, լուրջ վնասներ պատճառել գյուղատնտեսական հողերին և ազդել պարենային անվտանգության վրա: Օրինակ՝ 2013-2018 թթ. ժամանակահատվածում միայն կարկտահարության պատճառած վնասը կազմել է գյուղատնտեսական կորուստների մոտ 80%-ը, որը համարժեք է ավելի քան 275 միլիոն ԱՄՆ դոլարի: Սա խոսուն փաստ է Հայաստանի կարևորագույն ոլորտի՝ գյուղատնտեսության խոցելիության մասին: Շարունակական կորուստներն ընդգծում են Հայաստանում կլիմայական պայմաններին հարմարվողականության ավելի լուրջ ռազմավարությունների անհրաժեշտությունը: Դիմակայունությունն ամրապնդելու համար անհրաժեշտ է հիմնական ոլորտներում առաջնահերթությունը տալ հարմարվողականության միջոցառումներին: Վաղ նախազգուշացման համակարգերի բարելավումը, աղետներին պատրաստվածության մեծացումը, կլիմայական առումով խելացի տեխնոլոգիաների և բնության վրա հիմնված լուծումների ներդրումը կարևորագույն նշանակություն ունեն սպասվող ռիսկերն ու վնասները նվազագույնի հասցնելու գործում: Այդ նպատակով Հարմարվողականության ազգային ծրագրի շրջանակներում Հայաստանը մշակել է համապարփակ հարմարվողականության ռազմավարություններ գյուղատնտեսության, ջրային ռեսուրսների, առողջապահության, ենթակառուցվածքների և էներգետիկայի ոլորտներում: Այս միջոցառումները նախատեսված են խոցելիությունը նվազեցնելու, դիմակայունությունը բարձրացնելու և կլիմայական պայմաններին հարմարվողականությունը ազգային և ոլորտային զարգացման պլանավորման մեջ ներառելու համար: **ՀԱԾ 2021-2025 թթ.** Հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2021թ. մայիսին՝ սահմանելով կլիմայական ռիսկերի և խոցելիության նվազեցման ռազմավարական շրջանակը: Այն ընդգրկում է տարածաշրջանային և ոլորտային միջոցառումներ՝ ընդգծելով ազգային զարգացման առաջնահերթությունների մեջ կլիմայական կայունության նկատառումների ներառման կարևորությունը: **Ոլորտային հարմարվողականության ծրագրեր (ՈՀԾ)**. Մշակվել են տնտեսության ամենախոցելի ոլորտների համար՝ ջրային ռեսուրսներ, գյուղատնտեսություն, առողջապահություն, էներգետիկա և զբոսաշրջություն: ՈՀԾ-երը պարզում են յուրաքանչյուրի համար բնորոշ կլիմայական ռիսկերը և առաջարկում գործնական միջոցառումներ՝ խոցելիության նվազեցման և դիմակայունության բարձրացման նպատակով: ՀՀ կառավարության որոշմամբ ՈՀԾ-ները ներառվում են որոլտային ռազմավարական փաստաթղթերի մեջ: **Մարզային և քաղաքային հարմարվողականության ծրագրեր (ՄՀԾ).** Սրանք վերաբերում են առանձին մարզերի, օրինակ՝ Տավուշի,

[8] ՅԲ, «Հայաստան. երկրի կլիմայի և զարգացման զեկույց»(CCDR), 2024 թ.:

	Գեղարքունիքի, Սյունիքի և Շիրակի կլիմայական ռիսկերին և ապահովում են տեղայնացված հարմարվողականություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարզի բնապահպանական և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները: Դրանք նաև խթանում են համայնքների մասնակցությունը և ապահովում հարմարվողականության միջոցառումների տեղային համարժեքությունն ու արդյունավետությունը: **ՀՀ օրենքը էկոպարեկային ծառայության մասին.** Սահմանում է պետական լիազորված մարմնի ենթակայությամբ գործող մասնագիտացված էկոպարեկային ծառայության դերը և գործառույթները: Ծառայությունը հանդիսանում է պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության և անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության կիրառման նկատմամբ պետական հսկողության գործառույթներ իրականացնող պետական լիազոր մարմին: Այն գործում է պետական վերահսկողության ներքո և ամրապնդում Հայաստանի Հանրապետության պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության իրավական դաշտը: **ՀՀ օրենքը սեյսմիկ պաշտպանության մասին.** Ներկայացնում է Հայաստանի սեյսմիկ ռիսկերի կառավարման առաջնահերթությունները՝ ռիսկերի գնահատում, մշտադիտարկման համակարգեր և սեյսմակայուն շինարարության չափանիշներ: Ուսուցումների և վարժանքների միջոցով այն բարձրացնում է հանրային իրազեկվածությունը և սահմանում է հետաղետային վերականգնողական համակարգված մեխանիզմներ: Թեև օրենքն ուղղակիորեն չի վերաբերում կլիմային, սակայն նպաստում է խաչվող ռիսկերի, այդ թվում՝ կլիմայի փոփոխությունից առաջացող ռիսկերի նկատմամբ դիմակայունության բարձրացմանը: **ՀՀ օրենքը աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին.** Ներկայացնում է բնական և տեխնածին աղետների, ներառյալ՝ կլիմայական ռիսկերի կառավարման համապարփակ համակարգ: Այն կլիմայական բաղադրիչներն ինտեգրում է ռիսկերի գնահատման, նախազգուշացման համակարգերի, ենթակառուցվածքների դիմակայունության և համայնքային պատրաստվածության մեջ: Օրենքը սահմանում է հաստատությունների պատասխանատվությունը և առաջնահերթություն տալիս հանրային իրազեկվածությանը, կարողությունների զարգացմանը և ֆինանսավորմանը՝ աջակցելու կլիմայի փոփոխության հարմարվողականությանը, ինչպես նաև աղետների ռիսկի նվազեցումը ներառելու ազգային զարգացման քաղաքականություններում: **Աղետների ռիսկերի կառավարման (ԱՌԿ) 2023-2030 թվականների ռազմավարություն և 2023-2026 թվականների գործողությունների ծրագիր.** Սենդայի շրջանակին համահունչ՝ ռազմավարությունը նպատակ ունի նվազեցնել աղետների ռիսկերը կանխարգելման, պատրաստվածության և վերականգնման միջոցով: Գործողությունների ծրագիրը սահմանում է մի շարք առաջնահերթություններ՝ համակարգի բարեփոխում, տեխնոլոգիական ինտեգրում, մարդկային ռեսուրսների զարգացում, անվտանգության մշակույթի ձևավորում և պետական-մասնավոր համագործակցություն: Այն ներառում է նաև 384 բնակավայրի գնահատում: Այդուհանդերձ, ծրագիրը դեռևս չունի համապարփակ միջոցներ կլիմայական կորուստների և վնասների վերացման ուղղությամբ, որոնք կարևոր են երկարաժամկետ հարմարվողականության համար:
բ) Ազդեցություն-ներ, ռիսկեր և խոցելիություն՝ ըստ	Հայաստանը դիմակայում է կլիմայական զգալի փոփոխությունների. աճող ջերմաստիճանը և ծայրահեղ կլիմայական երևույթների հաճախացումը սպառնալիք են երկրի բնական և մարդկային համակարգերի համար: Այս փոփոխություններն արդեն իսկ ազդում են հիմնական ոլորտների՝ գյուղատնտեսության, ջրային ռեսուրսների, առողջապահություն, ենթակառուցվածքների, էներգետիկայի և էկոհամակարգերի վրա՝ մեծացնելով երկրի խոցելիությունը:

նպատակահար մարության	***Ոլորտային խոցելիություն*** **Գյուղատնտեսություն**. Հայաստանում ամենախոցելի ոլորտներից է՝ հաշվի առնելով նրա կախվածությունը եղանակային պայմաններից և ջրային ռեսուրսներից: Ջերմաստիճանի ծայրահեղության աճը, տեղումների քանակի փոփոխությունները և ավելի հաճախ կրկնվող երաշտներն սպառնում են բերքատվությանը, այդ թվում՝ հիմնական մշակաբույսերի՝ ցորենի, կարտոֆիլի և խաղողի: Ըստ կանխատեսումների՝ մինչև 2070-ականները կարտոֆիլի բերքատվությունը կարող է նվազել մինչև 21%-ով, իսկ խաղողի բերքատվությունն Արարատյան դաշտում՝ 20%-ով: Բացի դրանից, ջերմաստիճանի բարձրացմամբ պայմանավորված, բերքի աճեցման սեզոնների փոփոխությունը, վնասատուների և հիվանդությունների տարածումը կարող են էլ ավելի նվազեցնել գյուղատնտեսության արտադրողականությունը: Այս ոլորտը, որն աշխատատեղերի և եկամտի հիմնական աղբյուր է համայնքների համար, արդեն իսկ ենթարկվում է տնտեսական ճնշումների, իսկ կլիմայի փոփոխությունը, ամենայն հավանականությամբ, կխորացնի այդ մարտահրավերները: **Ջրային ռեսուրսներ.** Այս ոլորտը Հայաստանում զգալի ճնշման տակ է՝ պայմանավորված տեղումների եղանակաժամանակային նորմաների օրինաչափությունների և գետային հոսքերի փոփոխությամբ: Կանխատեսվում է, որ մինչև դարավերջ գետերի հոսքը կնվազի 39%-ով՝ խորացնելով ջրի պակասը հատկապես Արարատյան դաշտում, որտեղ գյուղատնտեսությունը մեծ կախում ունի ոռոգումից: Բացասական ազդեցություններն զգացվում են նաև Սևանա լճի՝ Հայաստանի և ողջ Կովկասի ամենամեծ քաղցրահամ ջրային ավազանի վրա: Կլիմայի փոփոխությունը կհանգեցնի լճի ջրի ջերմաստիճանի բարձրացման, երկարատև շերտավորման և ամռանը կապտականաչ ջրիմուռների հաճախակի ծաղկման՝ լրջորեն վատթարացնելով Սևանի ջրի որակը: Առանց նպատակային կառավարման միջոցառումների Սևանա լիճն անխուսափելիորեն կտուժի՝ ջրի որակի՝ կլիմայի փոփոխություններով պայմանավորված վատթարացմամբ: Ակնկալվում է, որ կխորանա սեզոնային ջրային պակասը՝ հատկապես ամռանը, երբ ջրի պահանջարկը բարձր է, և Սևանա լճից ու այլ ջրամբարներից լրացուցիչ ջրառ է իրականացվում: Այս մարտահրավերներն էլ ավելի են բարդանում բնակչության աճի և գյուղատնտեսական կարիքների մեծացման պայմաններում՝ արդյունավետ ջրային կառավարումը դարձնելով կենսական՝ պահպանելու ապրուստի միջոցներն ու տնտեսությունը: **Ենթակառուցվածքներ.** Հայաստանի ենթակառուցվածքները խիստ խոցելի են ծայրահեղ եղանակային պայմանների հաճախացման նկատմամբ՝ ներառյալ ջրհեղեղներ, սողանքներ, կարկուտ և ուժգին քամիներ: Այս երևույթները զգալի վնաս են պատճառում տրանսպորտային ցանցերին, շինություններին և կոմունալ ծառայություններին: Բազմաթիվ ենթակառուցվածքներ (կրթություն, առողջապահություն, ջրամատակարարում, էներգետիկա, տրանսպորտ և այլն) կառուցվել են մինչև 1990 թ.՝ հնացած նորմերով, և խիստ խոցելի են կլիմայական աղետների նկատմամբ: 2024 թ. մի շարք շրջաններում, այդ թվում՝ Դեբեդ, Աղստև և Տաշիր գետերի շրջանում տեղի ունեցած ջրհեղեղները մեծ վնաս պատճառեցին ճանապարհներին, երկաթուղուն, տներին և դպրոցներին. ընդհանուր վնասի ծավալը գնահատվել է շուրջ 49.43 միլիոն ԱՄՆ դոլար:[9] Սողանքները և ցեխահոսքերը նույնպես զգալի վնաս են պատճառում բնակավայրերին և տրանսպորտային ենթակառուցվածքներին՝ հատկապես հյուսիսարևելյան շրջաններում, որտեղ միայն սողանքներից տարեկան վնասը գնահատվում է շուրջ 10 միլիոն դոլար:[10] Այս երևույթներն էլ ավելի են խորացնում սոցիալ-տնտեսական հետևանքները հատկապես խոցելի խմբերի համար: Վերջին տասնամյակներում հիմնական ճանապարհների վրա

[9] ՄԱԶԾ Հայաստան, Ջրհեղեղներ Հայաստանում– Հետաղետային կարիքների գնահատում, 2024 թ., https://www.undp.org/sites/g/files/zskgke326/files/2024-11/pdna_armenia_eng_final.pdf
[10] Ասիական աղետների նվազեցման խորհուրդ, 2022 թ.:

	սողանքներից տուժել է ավելի քան 200 համայնք և 600 բնակավայր: Բացի դրանից քաղաքներում, օրինակ՝ Երևանում, էներգետիկ և ջրամատակարարման ենթակառուցվածքների վրա լրացուցիչ բեռ է նաև քաղաքային ջերմային կղզու էֆեկտը և դրա աճը: **Էներգետիկա**. Հիդրոէներգետիկան Հայաստանի էներգետիկ համակարգի կարևոր բաղադրիչն է, որը խոցելի է տեղումների և ջրային ռեսուրսների հասանելիության փոփոխությունների նկատմամբ: Օրինակ՝ երկրի խոշորագույն հիդրոէլեկտրակայանային համալիրներից մեկը՝ Սևան-Հրազդան կասկադը (Հայաստանի էներգետիկ արտադրության 5%-ը), մեծապես կախված է Հրազդան գետի հոսքից և Սևանա լճից (Հրազդան գետի հոսքի 60%-ը պայմանավորված է ձնհալքով, տեղումներով, վտակներով և գրունտային ջրերով): Հատկապես ամառվա ամիսներին գետի հոսքի նվազումը կարող է զգալիորեն ազդել հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության վրա: Բացի դրանից, Հայաստանի ատոմակայանը ևս կախված է կայուն և անխափան ջրային հոսքից: Սա սպառնալիք է էներգետիկ անվտանգության համար: Սառցադաշտերի հալոցքի և տեղումների ակնկալվող կրճատման պայմաններում էներգիայի արտադրությունը բարդանում է՝ ընդգծելով արևային և քամու էներգիայի զարգացման անհրաժեշտությունը՝ դիվերսիֆիկացնելու համակարգը: **Առողջապահություն**. Հայաստանում առողջապահական ռիսկերը գնալով դառնում են ավելի կլիմայազգայուն: Ջերմաստիճանի բարձրացումը և ջերմային ալիքների հաճախակիացումը կբերեն ջերմային հարվածների և սրտանոթային հիվանդությունների աճի: Հանրային առողջապահական համակարգը կհայտնվի ճնշման տակ՝ հատկապես խոցելի խմբերի՝ տարեցների և բացօթյա աշխատողների վրա բացասական ազդեցության պատճառով: Բացի դրանից վեկտորային հիվանդությունների, օրինակ՝ մալարիայի տարածման հավանականությունը կմեծանա, քանի որ ջերմաստիճանի բարձրացման հետևանքով կընդլայնվեն միջատների տարածման գոտիները: 2001 թ. երաշտը, որն ազդեց ավելի քան 297,000 մարդու վրա և հասցրեց շուրջ 143 միլիոն դոլարի տնտեսական կորուստ, հստակ հիշեցնում է, թե ինչպես կլիմայի փոփոխությունը կարող է խաթարել առողջությունն ու կենսապահովման միջոցները՝ հատկապես գյուղական շրջաններում: Թեև օդի աղտոտվածությունն անմիջականորեն կապված չէ կլիմայի փոփոխության հետ, սակայն խորանում է եղանակային օրինաչափությունների փոփոխության արդյունքում՝ վերածվելով լրացուցիչ ռիսկի հանրային առողջության համար: Առանց լուրջ միջամտությունների օդի աղտոտվածության հետ կապված հիվանդությունների և մահվան դեպքերի թիվը, ամենայն հավանականությամբ, կաճի: Կլիմայի փոփոխությունները սրում են առողջապահական այլ ռիսկեր ևս, օրինակ՝ պարենային անապահովությունը՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրության վրա բացասական ազդեցությամբ: Ջերմաստիճանի բարձրացումն ու տեղումների անկանխատեսելիությունը կարող են հանգեցնել բերքատվության նվազման՝ ազդելով սննդի հասանելիության և որակի վրա: Տեղումների օրինաչափության խախտումը և ծայրահեղ եղանակային երևույթները ազդում են նաև մաքուր ջրի որակի և մատչելիության վրա: Հատկապես ջրհեղեղներից կարող են ծանրաբեռնվել ջրի մաքրման համակարգերը՝ մեծացնելով ջրով փոխանցվող հիվանդությունների՝ խոլերայի և փորլուծության առաջացման ու տարածման վտանգները[11]: **Բնական էկոհամակարգեր**. Հայաստանի լեռնային էկոհամակարգերն աստիճանաբար ավելի շատ են ենթարկվում կլիմայի փոփոխության բացասական ազդեցություններին: Հատկապես խոցելի են անտառային էկոհամակարգերը. ըստ Համաշխարհային բանկի և ԱԶԲ-ի վերլուծության կանխատեսվում է, որ մինչև 2030 թ. կվերանա 14,000-17,500 հեկտար անտառային տարածք՝

[11] ԱՀԿ, Հայաստան, Առողջապահության և շրջակա միջավայրի գնահատման աղյուսակ, https://cdn.who.int/media/docs/default-source/country-profiles/environmental-health/environmental-health-arm-2022.pdf?sfvrsn=8f23bfe7_4&download=true

	երաշտների, անտառային հրդեհների և վնասատուների համակցված ազդեցության պատճառով: Կենսաբազմազանությունը նույնպես կտուժի, քանի որ տեսակները դժվարանում են հարմարվել փոփոխվող կենսակլիմայական գոտիներին և բնակմիջավայրերի կրճատմանը: Հայաստանի լեռնային և կիսաանապատային լանդշաֆտները հատկապես զգայուն են կլիմայի փոփոխությունների նկատմամբ, և այդ էկոհամակարգերի խաթարումները կարող են հանգեցնել հողի էրոզիայի, ջրային ռեսուրսների սպառման, ածխածնի կլանման նվազման և կարևոր տեսակների ու բնակմիջավայրերի կորստի:
գ) Ազգային հարմարվողա-կանության առաջնահերթու թյուններ, ռազմավարու-թյուններ, քաղաքականու թյուններ, ծրագրեր, նպատակներ և գործողություն-ներ	Հայաստանի ազգային հարմարվողականության առաջնահերթությունները նպատակ ունեն դիմակայելու կլիմայի փոփոխությանը ջրային, գյուղատնտեսության, հողերի կառավարման, ենթակառուցվածքների և հանրային առողջապահության ոլորտներում: Հիմնական միջոցառումները վերաբերում են ոռոգման համակարգերի արդիականացմանը, կլիմայակայուն խելացի գյուղատնտեսության խթանմանը, ջրային ռեսուրսների պաշտպանությանը, կլիմայական կայունության ինտեգրմանը քաղաքաշինության և հեղեղներից պաշտպանության մեջ, ինչպես նաև վաղ նախազգուշացման համակարգերի կատարելագործմանը: Հողի էրոզիայի դեմ պայքարի և էկոհամակարգերի պահպանման համար կարևորվում են նաև հողերի վերականգնումը, անտառածածկույթի ընդլայնումը և կայուն հողօգտագործումը: Այս նպատակների իրականացման համար էական նշանակություն ունեն կառավարումը, ինստիտուցիոնալ համակարգումը և կլիմայական ֆինանսավորման մեխանիզմների ամրապնդումը: Հայաստանի զարգացած տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս նորարարական լուծումներ ներդնել հարմարվողականության ոլորտում, ներառյալ՝ վաղ նախազգուշացման համակարգեր, տվյալների վերլուծություն և թվային կլիմայական գործիքներ: Այս առաջնահերթությունների նպատակն է ամրապնդել Հայաստանի դիմակայունությունը կլիմայական ազդեցությունների նկատմամբ և խթանել երկարաժամկետ զարգացումը: Հարմարվողականության շրջանակն ընդգծում է կլիմայական խոցելիության հաղթահարման հրատապությունը՝ պահպանելու տնտեսական կայունությունը, էկոհամակարգերը և հանրային բարեկեցությունը: Այն առաջնահերթություն է տալիս վաղ նախազգուշացման համակարգերի ներդրմանը, ջրային ռեսուրսների կառավարման բարելավմանը, գյուղատնտեսական կայունությանը, էկոհամակարգերի վերականգնմանը և կլիմայադիմակայուն ենթակառուցվածքների ձևավորմանը: Այս քայլերը հիմնված են ինստիտուցիոնալ բարեփոխումների, ՀԱԾ-երի, տարածաշրջանային համագործակցության և ֆինանսական գործիքների վրա: Հաջորդ բաժիններում ներկայացված են Հայաստանի ռազմավարական նպատակները և կլիմայական դիմակայունության ապահովման անհրաժեշտ գործողությունները: **1. Կառավարում և ներդրումներ՝ կլիմայական հարմարվողականության համար** Հայաստանը բարելավել է կլիմայական կառավարումն ինչպես ազգային, այնպես էլ՝ տեղական մակարդակներում, և ամրապնդել ինստիտուցիոնալ համակարգման մեխանիզմները՝ հարմարվողականության արդյունավետ իրականացում ապահովելու նպատակով: Սա ներառում է «ՄԱԿ-ի ԿՓՇԿ և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի» և դրա ենթակայությամբ գործող աշխատանքային խմբերի գործունեությունը: Հարմարվողականության հարցերի համակարգված վերանայման և լուծման գործում վերջիններիս դերի ամրապնդումը կբարելավի հարմարվողականության առաջնահերթությունների համակարգումը և ինտեգրումն ազգային կլիմայական քաղաքականության շրջանակներում:

	Հայաստանը նախատեսում է մշակել և իրականացնել ՀԱԾ՝ 2026-2030 թթ. ժամանակահատվածի համար՝ շարունակելով ոլորտային հարմարվողականության ծրագրերի և ռազմավարությունների զարգացումը, կարևորելով կորուստների և վնասների նվազեցումը: Այս ծրագրերը ոչ միայն կմշակվեն, այլև պարբերաբար կգնահատվեն երկամյա մշտադիտարկման և գնահատման գործընթացների միջոցով: Հայաստանի բոլոր մարզերի համար նախատեսվում է ունենալ համապարփակ տարածաշրջանային հարմարվողականության ծրագրեր: Մարզային ծրագրերը սերտորեն կապված կլինեն համայնքային մակարդակի հարմարվողականության պլանավորման հետ՝ ինտեգրելով ռիսկերի գնահատումները և տեղական կարողությունների զարգացման ծրագրերը, որպեսզի հարմարվողականությունը ներառված լինի տեղական որոշումների կայացման գործընթացներում: Հայաստանը նպատակ ունի նաև զարգացնելու հարմարվողականության վերաբերյալ իր գիտահետազոտական կարողությունները՝ ամրապնդելով գործող հաստատությունները և ցանցերը: Նախատեսվում է իրականացնել կլիմայական ռիսկերին առնչվող տվյալների հավաքագրում, ոլորտային հարմարվողականության լուծումների մշակում և ավանդական գիտելիքի համադրում ժամանակակից կլիմայական գիտության հետ: Աշխատանքի հիմքում կլինի աղետների և կլիմայական ռիսկերի կառավարումը, ինչպես նաև կլիմայի և աղետների նշագրման կիրառումը բյուջետավորման և ֆինանսական գործընթացներում՝ ապահովելով հարմարվողականության ռազմավարությունների համաձայնեցում ռիսկերի նվազեցման բոլոր ոլորտների հետ: Կառավարության պաշտոնյաների, ոլորտային փորձագետների և տեղական շահառուների համար կստեղծվեն կարողությունների զարգացման ծրագրեր, որպեսզի Հայաստանը լիովին պատրաստ լինի դիմակայելու կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող ռիսկերին: **Թիրախներ** • ՀԱԾ-ի ընդունում և իրականացում 2026-2030 թթ. համար՝ մինչև 2030 թ. անցկացնելով մշտադիտարկման և գնահատման երկու ամբողջական փուլ (գենդերային, տարիքային և հաշմանդամությանն արձագանքող նպատակների ներառումով): • Մարզային հարմարվողականության ծրագրերի մշակում և հաստատում այն մարզերում, որտեղ դեռևս բացակայում է տեղական հարմարվողականության պլանավորումը: • Վերապատրաստումների միջոցով տարեկան նվազագույնը 30 պետական պաշտոնյայի, ոլորտային փորձագետների և տեղական շահառուների կարողությունների զարգացում՝ կլիմայական ռիսկերի կառավարման և հարմարվողականության պլանավորման ոլորտներում: • ՀԱԾ ներդրումային ծրագրի մշակում և ընդունում 2026-2030 թթ. համար՝ համահունչ ազգային զարգացման ռազմավարություններին և կլիմայի ֆինանսավորման մեխանիզմներին: • Սեյսմիկ անվտանգության և կլիմայական փոփոխությունների բյուջետային նշագրման համակարգի մշակում և ներդնում՝ ապահովելու թափանցիկություն և հանրային ծախսերի ավելի լավ համադրություն կլիմայական կայունության նպատակների հետ: • Կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիությունների և հարմարվողականության ՉՀՀ համակարգի մշակում և ներդնում: Ազգային ածխածնային ռեգիստրի մշակում և ներդրում: • ԱՍՀ 3.0 Ֆինանսավորման ռազմավարական փաստաթղթի մշակում և հաստատում:

	2. Ջրային անվտանգություն և հեղեղների նկատմամբ դիմակայունություն Ջրային անվտանգությունը Հայաստանի համար առաջնային խնդիր է՝ հաշվի առնելով ջրային ոլորտի խոցելիությունը կլիմայի փոփոխության հանդեպ: Երկիրը նախատեսում է կատարելագործել ջրային կառավարման համակարգը՝ կլիմայական հարմարվողականությունը ներառելով ազգային և մարզային ջրային կառավարման շրջանակներում: Հայաստանն արդեն մշակել և հաստատել է Արարատյան, Հարավային, Ախուրյանի, Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանները: Ներկա դրությամբ աշխատանքներ են տարվում Արարատյան, Հարավային, ջրավազանային կառավարման նոր պլանների մշակման ուղղությամբ, քանի որ այդ պլաններով հաստատված կառավարման առաջին ժամանակահատվածը լրացել է: Կլիմայական հարմարվողականության ներառումը ջրային կառավարման շրջանակում ենթադրում է ջրավազանային կառավարման պլանների և ջրային կառավարման համապարփակ ռազմավարության հետագա զարգացում: Հայաստանը նպատակ ունի զգալիորեն նվազեցնել ջրային կորուստները՝ ներդնելով կաթիլային ոռոգման համակարգ, մաքրված կեղտաջրերի վերաօգտագործում և անձրևաջրերի կուտակման համակարգեր: Առաջնահերթություն է նաև ջրային ենթակառուցվածքների արդիականացումը՝ նվազեցնելու զգալի կորուստները թե՛ խմելու ջրի մատակարարման, թե՛ ոռոգման համակարգերում: Սրա մեջ մտնում են՝ բաշխման ցանցերի արդիականացումը, ջրանցքների վերականգնումը, տնտեսական գործիքների կիրառումը, ինչպիսիք են սակագները և խթանները՝ արդյունավետ ջրօգտագործումը խրախուսելու համար: Այս բարելավումները կբարձրացնեն գյուղատնտեսական ջրի օգտագործման արդյունավետությունը և կապահովեն մաքուր ջրի հասանելիություն ինչպես քաղաքային, այնպես էլ համայնքների համար, հատկապես սեզոնային պակասուրդների և երկարատև երաշտների ժամանակ: Հայաստանն առաջնահերթություն է տալիս ջրամբարների կառուցմանը՝ փուլ առ փուլ ավելացնելով երկրի մակերևութային ջրային պաշարները մոտ 7 տոկոսով (մոտ 99 միլիոն մ^3) և տարվա ընթացքում առավել կայուն ջրամատակարարում ապահովել կլիմայական առումով ավելի խոցելի գյուղատնտեսական մարզերի համար (օրինակ՝ Արարատ, Կոտայք, Վայոց ձոր)՝ այդ կերպ նվազեցնելով բերքի կորստի ռիսկերը երկարատև երաշտի պայմաններում:[12] Հայաստանն առաջնահերթ է համարում կեղտաջրերի մաքրման համակարգերի զարգացումը, հատկապես՝ Սևանի ավազանում, որպեսզի կանխվի Սևանա լճի աղտոտումը, և հնարավոր լինի ապահովել մաքրված ջրի անվտանգ օգտագործումը ոռոգման և այլ, ոչ խմելու նպատակներով: Հայաստանը նաև նախատեսում է ընդլայնել իր հակահեղեղային ենթակառուցվածքները՝ ներառելով և՛ ինժեներական լուծումներ, և՛ բնության վրա հիմնված միջոցառումներ, ինչպիսիք են խոնավ տարածքների վերականգնումը և գետափերի ամրացումը: Այս մոտեցումները կբարձրացնեն հեղեղների նկատմամբ դիմակայունությունը, կնվազեցնեն գյուղատնտեսական հողերի և ենթակառուցվածքների վնասման ռիսկերը, կբարելավեն ընդհանուր ջրային կառավարումը: Բացի դրանից Հայաստանը ներդրումներ է կատարում ջրամբարների և ջրային պաշարների համար նախատեսված կառույցների զարգացման մեջ՝ նշանակալի առաջընթաց գրանցելով Կապսի և Վեդիի ջրամբարների կառուցման գործում, որոնք իրականացվում է միջազգային գործընկերների

[12] Համաշխարհային բանկի 2024 թ. Երկրի կլիմայի և զարգացման զեկույցը (Country Climate and Development Report)

	աջակցությամբ: Այս ենթակառուցվածքները կուժեղացնեն ջրային ռեսուրսների կառավարման՝ երկրի կարողությունները և հեղեղների նկատմամբ դիմակայունությունը: Կլիմայական հարմարվողականության ռազմավարության շրջանակում Հայաստանը կիրականացնի Սևանա լճի էկոհամակարգի վերականգնում՝ ջրախնայող և խելացի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրմամբ, ջրի և նստվածքների որակի մշտադիտարկման բարելավմամբ և խոնավ տարածքների վերականգնմամբ: Այս միջոցառումները ուղղված են ջրային ռեսուրսների պահպանմանը և Սևանա լճի՝ որպես կենսական քաղցրահամ ջրային ռեսուրսի դիմակայունության ապահովմանը կլիմայի փոփոխության պայմաններում: **Թիրախներ** • Հակահեղեղային ենթակառուցվածքների ընդլայնում առաջնահերթ գետավազանների 50%-ում՝ համադրելով ջրհեղեղների մեղմման ուղղված կանաչ և ինժեներական լուծումներին: • Ոռոգման ենթակառուցվածքների արդիականացում՝ առաջնահերթություն տալով կլիմայական խելացի համակարգերին՝ ջրօգտագործումը օպտիմալացնելու և ջրառը Սևանա լճից նվազեցնելու նպատակով: • Ջրի վերամշակման բարելավում բոլոր ձկնաբուծական տնտեսություններում՝ ապահովելով ջրի արդյունավետ կառավարում և վերաօգտագործում քաղաքային, արդյունաբերական և գյուղատնտեսական նպատակներով: • 17 ջրամբարների, այդ թվում՝ Քասախ, Ելփին, Լիճք, Աստղաձոր, Արթիկ ջրամբարների կառուցում: • Հյուսիսային ջրավազանային կառավարման պլանի նախագծի մշակում՝ հարմարվողականության և ռիսկերի նվազեցման միջոցառումների ներառմամբ: • Վաղ նախազգուշացման համակարգերի զարգացում (օգտագործելով արհեստական բանականությունը)՝ մինչև 2030 թվականը՝ 4 մարզերում, և մինչև 2035 թվականը՝ մնացած բոլոր մարզերում՝ ընդհանուր 50 մլն ԱՄՆ դոլարի ներդրմամբ: Սա կիրականացվի հիդրոօդերևութաբանական դիտարկումների ցանցի արդիականացման և կանխատեսման հնարավորությունների բարելավման միջոցով՝ համաձայն Կլիմայական ծառայությունների գլոբալ շրջանակի: Նույն ժամանակահատվածում կուժեղացվեն վաղ նախազգուշացման հաղորդակցության համակարգերը՝ ապահովելու խոցելի համայնքների ժամանակին և ճշգրիտ իրազեկումը: Սա ներառելու է բջջային ծանուցումներ, ռադիոհաղորդումներ և տեղական հաղորդակցության հարթակներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների և տարեցների անվտանգության ապահովման նպատակով, տարհանման հատուկ ընթացակարգեր և համընդհանուր մատչելի արտակարգ ապաստարաններ: Համակցված այս աշխատանքներն զգալիորեն կբարելավեն Հայաստանի պատրաստվածությունն ու դիմակայունությունը կլիմայական վտանգների հանդեպ: • Դպրոցների անձնակազմերի կարողությունների զարգացում և յուրաքանչյուր դպրոցում պատասխանատու հրահանգողի նշանակում՝ սովորողների՝ աղետներին պատրաստվածությունը բարձրացնելու համար (ներառյալ հեղեղներից պաշտպանության միջոցառումները): • Հայաստանի առաջնահերթ ջրաճահճային տարածքների վերականգնում:

	3. Կլիմայակայուն խելացի գյուղատնտեսություն և պարենային անվտանգություն Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության և գյուղական զբաղվածության հիմնական ոլորտներից մեկն է, ուստի դրա կայունությունը կենսական անհրաժեշտություն է՝ կլիմայի փոփոխության պայմաններում պարենային անվտանգությունը պահպանելու համար: Հայաստանը պատրաստ է զարգացնել կլիմայակայուն գյուղատնտեսություն՝ ներդնելով կլիմայական տեսանկյունից խելացի մեթոդներ՝ երաշտադիմացկուն մշակաբույսերի կիրառում, հողի պահպանություն և ճիշտ ոռոգում: Այս միջոցառումները կբարձրացնեն գյուղատնտեսական արտադրողականությունը՝ միաժամանակ խնայելով ռեսուրսները փոփոխվող կլիմայական պայմաններում: Բացի դրանից կընդլայնվեն խորհրդատվական և գյուղատնտեսական ծառայությունների ծրագրերը, որպեսզի փոքր ֆերմերները կարողանան օգտվել բարելավված սերմերից և հարմարվողական գյուղատնտեսական տեխնիկայից, ժամանակին ստանան կլիմայական տեղեկատվությունը: **Կլիմայի փոփոխության հարմարվողականության առաջնահերթությունների շրջանակներում Հայաստանը պարտավորվում է բարձրացնել գյուղատնտեսական ոլորտի դիմակայունությունն ու հարմարվողական կարողությունները:** Հաշվի առնելով կլիմայական վտանգների, ինչպիսիք են կարկտահարությունը և երաշտը, աճող հաճախականությունը և ազդեցությունը, կառավարությունը բարեփոխում է իր գյուղատնտեսական ապահովագրության համակարգը՝ փոքր ֆերմերներին ավելի լավ պաշտպանելու համար: Ներկայումս գյուղատնտեսական ապահովագրական ապրանքները մնում են սահմանափակ և թերօգտագործված՝ շուկայի ցածր իրազեկվածության, ենթադրվող բարձր ռիսկի և ապահովագրողների համար շահութաբերության պակասի պատճառով: Այս խնդիրը լուծելու համար Հայաստանը համագործակցում է զարգացման գործընկերների և մասնավոր ապահովագրողների հետ՝ մշակելու ժամանակակից, շուկայական կողմնորոշմամբ ապահովագրական մոդել, որը ներառում է նորարարական տեխնոլոգիաներ՝ ներառյալ ավտոմատացված ապահովագրությունը և հեռավար պահանջների կարգավորումը: Ապահովագրությունից զատ երկիրը որդեգրում է հարմարվողականության համակարգային մոտեցում՝ կլիմայական խելացի գործելակերպերը ինտեգրելով խորհրդատվական ծառայություններում, մշակելով վաղ նախազգուշացման համակարգեր և օգտագործելով երաշտադիմացկուն մշակաբույսերի տեսակներ: Հատուկ ուշադրություն է դարձվում կանխատեսման և պլանավորման գործիքների բարելավմանը, կլիմայական զգայուն արժեշղթաների և աշխարհագրական խոցելի տարածքների առաջնահերթությանը, ինչպես նաև հարմարվողականության ռազմավարությունների ներառումը կառավարության ծրագրերում, օրինակ՝ ոռոգման արդիականացումը: Ֆիզիկական կորուստները նվազեցնելու և Հայաստանի գյուղատնտեսական համայնքների դիմակայունությունը ամրապնդելու համար կշարունակվեն նաև համապարփակ միջոցառումներ՝ ներառյալ կարկտահարության կանխարգելման համակարգի արդիականացումը և բարձրորակ կարկտապաշտպան ցանցերի ներդրման աջակցությունը: **Պարենային անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ կառավարությունն իրականացնում է մի շարք պետական աջակցության ծրագրեր և համագործակցում է միջազգային և մասնավոր կազմակերպությունների հետ՝ պարենամթերքի ինքնաբավության մակարդակի բարձրացման, գյուղմթերքի պահեստավորման ենթակառուցվածքների և մատակարարման շղթաների զարգացման, ներքին և արտաքին շուկայի անբարենպաստ փոփոխություններին և հնարավոր արտակարգ իրավիճակների բացասական հետևանքներին դիմակայմանն ուղղված նախադրյալների ստեղծման, հետբերքահավաքային կորուստների նվազեցման, մատակարարման շղթաների արդյունավետության, աղետներին դիմակայունության մակարդակի բարձրացման և այլ նպատակով:** Հայաստանը գիտակցում է, որ պարենային անվտանգության համակարգի դիմակայունության ամրապնդումը կլիմայական հարմարվողականության ազգային օրակարգի առանցքային բաղադրիչ

	է, որի նպատակով 2023 թվականի հունիսի 29-ի N 1083-Լ որոշմամբ հաստատվել է Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը: Գործողությունների ծրագիրն արտացոլում է պարենային անվտանգության 4 բաղադրիչների (հասանելիություն, մատչելիություն, որակ և անվտանգություն, կայունություն և հարմարվողականություն) մասով 50 միջոցառում, որոնք նպատակաուղղված են նաև ապահովելու բոլոր սոցիալական խմբերի համար նվազագույն պարենային զամբյուղի հասանելիությունը, ապահովելու սննդամթերքի անվտանգության մակարդակը, դիվերսիֆիկացնելու թողարկվող արտադրանքի տեսականու, արտահանման և ներմուծման շուկաները, աջակցելու տեղական սերմնաբուծական և տնկարանային տնտեսությունների, տոհմային անասնաբուծության զարգացմանը: **Թիրախներ** • Գյուղատնտեսական ապահովագրության համակարգի կատարելագործում և արդիականացում՝ պետական-մասնավոր համագործակցությամբ և նոր տեխնոլոգիաներով՝ ավտոմատացված ապահովագրություն և հեռավար մշտադիտարկում: Գյուղատնտեսական ապահովագրական ծածկույթի ընդլայնում մինչև ֆերմերների 30%-ը՝ նվազեցնելով կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող ֆինանսական կորուստները: • Դիմակայունության համալիր և երկարաժամկետ մոտեցման մշակում՝ ինտեգրելով կլիմայական խելացի գյուղատնտեսական գործելակերպեր, կանխատեսման և վաղ նախազգուշացման համակարգեր, երաշտադիմացկուն մշակաբույսերի օգտագործում: • Բարձր ռիսկային համայնքների հարմարվողական կարողությունների մեծացում՝ տարածաշրջանային հատուկ միջոցառումներով: • Կլիմայակայուն մշակաբույսերի տեսակների հասանելիության կրկնապատկում՝ նպաստելով ազգային սննդային անվտանգությանը: • Հիմնական սննդամթերքի ինքնաբավության մակարդակի բարձրացում մինչև 70% (էներգետիկ արժեքով հաշվարկված)՝ ներկայիս 46,7%-ի փոխարեն: • Բնական ռեսուրսների և դիմակայունության ուժեղացում՝ հասնելով «ՊԱԳԻ-ի բնական ռեսուրսներ և դիմադրողականություն» բաղադրիչով 1.4 ինդեքսային միավորի: • Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերում լոգիստիկ կենտրոնների իրագործելիության ուսումնասիրությունների մշակում և իրականացում: • 50 մլն ԱՄՆ դոլարի ներդրում գյուղատնտեսական հարմարվողականության ծրագրերում՝ ուղղված հետազոտությունների, խորհրդատվական ծառայությունների և ենթակառուցվածքների բարելավմանը: **4. Քաղաքային և ենթակառուցվածքային դիմակայունություն** Հայաստանի քաղաքները և համայնքները, մասնավորապես մայրաքաղաք Երևանը, աստիճանաբար ավելի են ենթարկվում ջերմային ալիքների և ծայրահեղ եղանակային երևույթների աճող ազդեցությանը: Երևանը հատկապես խոցելի է քաղաքային ջերմային կղզու էֆեկտի նկատմամբ, երբ խիտ կառուցապատված տարածքներում բարձր ջերմաստիճանը սրում է առողջապահական ռիսկերը և

	էներգիայի սպառումը: Ջերմային կղզու էֆեկտի հաղթահարումը և քաղաքային դիմադրողականության բարելավումը կարևոր նշանակություն ունեն հանրային առողջության պահպանության, էներգիայի պահանջարկի կրճատման և կայուն քաղաքաշինության ապահովման համար: Երկիրը նպատակ ունի կլիմայական հարմարվողականությունը ինտեգրել քաղաքաշինության քաղաքականության մեջ՝ բնակմիջավայրերի պլանավորման համար մշակելով կլիմայական ռիսկերի գնահատման չափանիշներ: Սա կապահովի, որ նոր ենթակառուցվածքային նախագծերը, ներառյալ բնակարանային, տրանսպորտային և ջրային համակարգերը, իրականացվեն կլիմայական դիմակայունության չափանիշներով՝ պաշտպանված ջրհեղեղներից, ջերմային ալիքներից և ծայրահեղ եղանակային երևույթներից: Հայաստանը քաղաքներում և համայնքներում կխթանի նաև բնության վրա հիմնված լուծումները՝ ջրաթափանց մայթեր և քաղաքային անտառներ՝ քաղաքային ջերմային կղզու էֆեկտը մեղմելու և անձրևաջրերի կառավարումը բարելավելու նպատակով: Հայաստանը ներդրումներ կկատարի նաև կլիմայադիմացկուն ենթակառուցվածքներում՝ արդիականացնելով տրանսպորտային ցանցերը, էներգամատակարարումը և ջրային ռեսուրսների կառավարումը: Կլիմայադիմացկուն ենթակառուցվածքները գործունակ կլինեն կլիմայական անբարենպաստ պայմաններում՝ պաշտպանելով հանրային անվտանգությունը և տնտեսական կայունությունը: **Թիրախներ** • Մինչև 2035 թվականը ազգային ենթակառուցվածքային նախագծերի 100%-ը կներառեն կլիմայակայուն պլանավորում՝ բոլոր նոր հանրային ենթակառուցվածքներում կիրառելով դիմադրողականության չափանիշները: Նախագծումը պետք է լինի մասնակցային գործընթաց՝ քաղաքային զարգացման պլանավորման մեջ ներգրավելով երիտասարդներին և հաշմանդամություն ունեցող անձանց: • Կլիմայադիմացկուն կրթական հաստատությունների վերանորոգում, արդիականացում և կառուցում՝ ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների (WASH) ենթակառուցվածքներով: Տարերային աղետների ժամանակ դպրոցները պիտի ծառայեն համայնքներին՝ որպես արտակարգ իրավիճակների համար նախատեսված ապաստարաններ՝ հասանելիության պայմաններով, երեխաների և երիտասարդների առանձնահատուկ կարիքների արտակարգ արձագանքման մեխանիզմներով: • Կլիմայական ռիսկերի գնահատման միջոցառումների մշակում Հայաստանի խոշոր քաղաքների համար՝ ապահովելով երկարաժամկետ կայունության պլանավորում: • 100 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում քաղաքային կլիմայական հարմարվողականության նախագծերում՝ էներգաարդյունավետ բնակարանաշինության, ցածրածխածնային տրանսպորտի, ինչպես նաև ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի համար: • «Ճանապարհային հատվածի կայուն և ներառական բարելավման նախագծում» նշված հիմնական միջոցառումների և դրանց համապատասխան քայլերի իրականացում:[13] • Ազգային շինարարական կանոնակարգերում և ներդրումային ծրագրերում ներառական կլիմայական ենթակառուցվածքների

[13] Ասիական զարգացման բանկ, Ճանապարհային հատվածի կայուն և ներառական բարելավման նախագիծ (56317-001), https://www.adb.org/projects/56317-001/main

	չափորոշիչների ընդունում և կիրառում՝ համապատասխանեցնելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային և ՄԱԿ-ի՝ երեխաների իրավունքների և շրջակա միջավայրի վերաբերյալ թիվ 26 ընդհանուր մեկնաբանությանը: **5. Հողերի, անտառների և կենսաբազմազանության պահպանության կառավարում** Հայաստանը կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարության շրջանակներում առաջնահերթություն է տալիս հողերի և անտառային տնտեսության կայուն կառավարմանը: Նախատեսվում է ընդլայնել անտառապատման աշխատանքները, վերականգնել դեգրադացված գյուղատնտեսական նշանակության հողերը, գետերի ափերը և լեռնալանջերը՝ կանխելու հողի էրոզիան, խթանելու կենսաբազմազանությունը և ավելացնելու ածխածնի կլանումը: Կլիմայակայուն անտառային համակարգը կներառի անտառային հրդեհների կանխարգելումը, վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարը և վաղ նախազգուշացման համակարգերի ներդրումը՝ երաշտի ու ծայրահեղ տաքացման պայմաններին դիմակայելու համար: Նախկինում կատարված անտառահատումների բացասական հետևանքները վերացնելու համար Հայաստանը կիրականացնի թիրախային վերականգնում, այդ թվում՝ տնկարկների ցանցի ընդլայնմամբ՝ անտառների որակի և դիմադրողականության բարելավման նպատակով: Նախատեսվում է նաև ընդլայնել պահպանվող անտառային տարածքները և կենսաբազմազանության պահպանությունը ներառել հարմարվողականության պլանավորման մեջ՝ ընդգրկելով նաև ոչ անտառային տարածքներ՝ ալպյան և ենթալպյան մարգագետիններ և ճահիճներ: Բնության վրա հիմնված լուծումները, ներառյալ ագրոանտառաբուծությունը և անտառապատումը, կխթանվեն ֆինանսական միջոցներով և շահառուների լայն ներգրավմամբ՝ սկսած համայնքներից մինչև մասնավոր հատված: Էկոհամակարգերի պահպանման և կենսաբազմազանության խթանման գործում Հայաստանը կարևորում է էկոպարկերի դերը: Երբ դրանք ինտեգրվում են լանդշաֆտային կառավարման մեջ, կարող են ծառայել որպես կենսամիջանցքներ՝ նվազեցնելով բնակմիջավայրերի մասնատումը և աջակցելով տեսակների միգրացիային կլիմայական ճնշումների պայմաններում: Ի վերջո ջրային ավազանի կառավարումը կծառայի վերին հատվածների անտառապատման ուղղորդման հիմք՝ նվազեցնելու ստորին հատվածներում առաջացող հեղեղների ռիսկերը և աջակցելու ստորերկրյա ջրերի վերականգնմանը՝ նպաստելով թե՛ կլիմայական հարմարվողականությանը և թե՛ աղետների ռիսկի նվազեցմանը: **Թիրախներ** • Ընդլայնել անտառային ենթակառուցվածքները՝ ստեղծելով սերմերի պահոցներ և տնկարաններ բոլոր մարզերում: Ներդնել «բակային տնկարանների» գաղափարը, որը կնպաստի էնդեմիկ տնկիների մատակարարմանը և անտառապատման ու անտառվերականգնման նպատակների իրագործմանը: • Ապահովել էկոհամակարգի հարմարվողականությունը՝ համադրելով հողերի վերականգնումը կայուն հողօգտագործման պլանավորման և ագրոանտառտնտեսության նախաձեռնությունների հետ՝ օգտագործելով կլիմային ու կենսաբազմազանությանը հարմարված տեղական մշակաբույսերի տեսակներ: • Մշակել և ընդունել լանդշաֆտի վերականգնման ռազմավարություն, կարևորել համայնքների դերը և կայունության ու

ծախսարդյունավետության նպատակով ներգրավել նրանց վերականգնման աշխատանքերում:

- Ընդլայնել կլիմայական պայմաններին դիմակայուն անտառային տնտեսության կառավարումը՝ ներառելով անտառային հրդեհների կանխարգելումը, վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարը և կլիմայակայուն ծառատեսակների ընտրությունը: Մշակել և հաստատել կենսաբազմազանության ռազմավարության գործողությունների ծրագիրը: Հողերի վերականգնման, ագրոանտառային տնտեսության և անտառապատման ծրագրերում ներգրավված համայնքներին տրամադրել ուղղակի ֆինանսական խթաններ՝ ապահովելով համայնքային հարմարվողականության ջանքերը:

6. Կլիմայական խելացի զբոսաշրջության կառավարում

Հայաստանի զբոսաշրջության ոլորտը ևս ավելի խոցելի է դառնում կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ: Վտանգվում են ոչ միայն ենթակառուցվածքները, այլև զբոսաշրջիկները, որոնք ոլորտի զարգացման կարևոր դերակատարներն են: Ջերմաստիճանի բարձրացումը, ջրային ռեսուրսների նվազումը և ծայրահեղ եղանակային երևույթների հաճախացումը փոխում են Հայաստանի զբոսաշրջային դաշտը՝ ազդելով հատկապես ձմեռային զբոսաշրջության սեզոնայնության վրա: Կլիմայի փոփոխությունների ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա նույնպես անդրադառնում է զբոսաշրջության վրա: Ձյան ծածկույթի նվազումը և գետերի հոսքերի կրճատումը վտանգում են ջրից և ձյունից կախված զբաղմունքները՝ դահուկասահքը, ռաֆթինգը, ձկնորսությունը և հանգստյան գոտիների գործունեությունը, որոնք էական գրավչություն են ներկայացնում այցելուների համար: Ջրային ռեսուրսների անբավարարության պայմաններում այս զբաղմունքները կարող են զգալիորեն սահմանափակվել՝ հանգեցնելով զբոսաշրջության եկամուտների կրճատման:

Կլիմայի փոփոխությունը սպառնում է նաև Հայաստանի կենսաբազմազանությանը: Էկոհամակարգերի և բնակմիջավայրերի փոփոխությունները կարող են ազդել կենսաբազմազանության և երկրի բնական գեղեցկության վրա, որոնք Հայաստանի զբոսաշրջային գրավչության հիմնական մասն են: Տեսակների տարածման փոփոխությունները և եզակի կենսավայրերի հնարավոր կորուստը կթուլացնեն վայրի բնությունը դիտելու հնարավորությունները և կնվազեցնեն երկրի բնապատկերների գրավչությունը ինչպես տեղացի, այնպես էլ օտարերկրացի զբոսաշրջիկների համար:

Այս ռիսկերը մեղմելու և զբոսաշրջության ոլորտի երկարաժամկետ կայունությունը ապահովելու համար Հայաստանը կարևորում է կլիմայական կայունության ինտեգրումը զբոսաշրջության զարգացման ռազմավարությունների մեջ: Այդ շրջանակներում խթանվում է էկոզբոսաշրջությունը, ապահովվում է մշակութային և բնական ժառանգության օբյեկտների պահպանությունը, ինչպես նաև զարգացվում են կլիմայադիմացկուն ենթակառուցվածքներ: Այս մարտահրավերներին արձագանքելով՝ Հայաստանը նպատակ ունի պաշտպանել իր զբոսաշրջային կարևոր ռեսուրսները՝ դրանք հասանելի պահելով ապագա սերունդների համար և շարունակելով խթանել տնտեսական աճը:

Թիրախներ

- Մինչև 2035 թվականը արդիականացնել առկա զբոսաշրջային ենթակառուցվածքների՝ համապատասխանեցնելով կլիմայակայուն չափանիշներին՝ էներգաարդյունավետ տեխնոլոգիաների և կայուն շինարարական լուծումների միջոցով:
- Ավելացնել էկոզբոսաշրջության ուղղությունները՝ կենտրոնանալով Հայաստանի եզակի կենսաբազմազանության և բնական լանդշաֆտների վրա, ստեղծելով նոր հնարավորություններ խթանել էկոզբոսաշրջության այն նախաձեռնությունները, որոնք

	հանգեցնում են էկոզբոսաշրջության այցելուների թվի աճի՝ նպաստելով կայուն զբոսաշրջության զարգացմանը և Հայաստանի բնական ժառանգության պահպանությանը: • Զբոսաշրջության պլանավորման և զարգացման նախագծերում ապահովել տեղական համայնքների ներգրավվածությունը՝ կանոնակարգելով օգուտների արդարացի բաշխումը, ավանդական գիտելիքների պահպանումը, և մինչև 2035 թվականը հիմնական զբոսաշրջային կենտրոններում ստեղծել համայնքային 20 զբոսաշրջային կենտրոնների կառավարման պլաններ ՝ խթանելով տեղական կայուն ներգրավվածությունը կլիմայի հարմարվողականության և զբոսաշրջության զարգացման գործում: • Ազգային զբոսաշրջության զարգացման ծրագրերի 100%-ը համապատասխանեցնել Հայաստանի կլիմայական հարմարվողականության ռազմավարություններին՝ ոլորտում կլիմայական մարտահրավերներին համախմբված և արդյունավետ արձագանքելու համար, և ապահովել, որ նոր զբոսաշրջային նախագծերը պլանավորման բոլոր փուլերում ներառեն կլիմայական ռիսկերի գնահատումներ և հարմարվողականության միջոցառումներ: **7. Կլիմայակայուն առողջապահական ոլորտ** Հայաստանի առողջապահության ոլորտը ևս ենթարկվում կլիմայի փոփոխության շարունակական ազդեցությանը: Ավելանում են ջերմության հետ կապված, ջրային և վեկտորային ճանապարհներով փոխանցվող, ինչպես նաև օդի աղտոտվածության հետևանքով առաջացող շնչառական հիվանդությունները: Գիտակցելով կլիմայակայուն առողջապահական համակարգի անհրաժեշտությունը՝ Հայաստանը հանձնառու է ամրապնդել առողջապահական ենթակառուցվածքները՝ ապահովելու ծայրահեղ եղանակային երևույթների և կլիմայական պայմանների պատճառով առաջացած խափանումների նկատմամբ դիմակայունությունը: Երկրի առաջնահերթություններից է առողջության առաջնային պահպանման կենտրոնների և բժշկական կենտրոնների արդիականացումը՝ ապահովելով, որ մինչև 2035 թվականը առնվազն 50-ը համապատասխանեն կլիմայակայուն և սեյսմիկ անվտանգության չափանիշներին: Այս հաստատությունները կներառեն էներգաարդյունավետ, կլիմայակայուն նախագծեր և կապահովեն համընդհանուր հասանելիություն, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հայաստանի առջև ծառացած առողջապահական ռիսկերը, որոնց պատճառը շրջակա միջավայրն է, մնում են զգալի և բազմաշերտ, ինչպես ընդգծված է ՀՀ առողջապահության համակարգի 2023-2026 թթ. զարգացման ռազմավարության և դրանից բխող միջոցառումների ծրագրում: Կլիմայի փոփոխությունը սրում է կլիմայազգայուն թե՛ վարակիչ, թե՛ ոչ վարակիչ հիվանդությունների բեռը՝ պայմանավորված ջերմաստիճանի բարձրացմամբ, տեղումների տատանումներով և ծայրահեղ եղանակային երևույթների հաճախականությամբ: Անվտանգ խմելու ջրի, վատ որակի և անհավասար հասանելիության, հնացած ջրային ենթակառուցվածքների և անբավարար սանիտարահիգիենիկ ծառայությունների խնդիրները շարունակում են ազդել հանրային առողջության վրա՝ ջրով փոխանցվող հիվանդությունների պարբերական բռնկումներով: Քաղաքային օդի աղտոտվածությունը, մասնավորապես քաղաքներում փոշու բարձր մակարդակը, հանքարդյունաբերական տարածքներում ծանր մետաղներով և այլ թունավոր նյութերով աղտոտման ռիսկերն ավելի են սպառնում շրջակա միջավայրի անվտանգությանը և մարդու առողջությանը: Բացի դրանից բնակարանային վատ պայմանները, անբավարար ջեռուցումը նպաստում են անառողջ կենսապայմանների ձևավորմանը: Այս մարտահրավերները հաղթահարելու համար Հայաստանն իր ազգային առողջապահական ռազմավարություններում կներառի

	կլիմայական զգայուն առողջապահական ծրագրեր՝ կենտրոնանալով ջերմային հարվածների, շնչառական հիվանդությունների, ջրային և վեկտորային ճանապարհներով փոխանցվող հիվանդությունների կանխարգելման վրա: Կուժեղացվեն համաճարակաբանական հսկողության և վաղ նախազգուշացման համակարգերը: Հատուկ ուշադրություն կդարձվի մանկական առողջության ցուցանիշներին, հատկապես մինչև 5 տարեկան երեխաների մահացության և մտավոր զարգացման ռիսկերին, որոնք կապված են անբավարար WASH պայմանների հետ: Այս աշխատանքները կիրականացվեն բազմաշահառու համագործակցությունների միջոցով՝ մասնավոր հատվածի և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ: Հայաստանը մշակել է առողջության համապարփակ ապահովագրության համակարգ, որը հաշվի է առնում կլիմայական ռիսկերը և դրանց ազդեցությունը: Կընդլայնվեն հանրային առողջապահության կրթական արշավները՝ բարձրացնելու կլիմայի հետ կապված առողջական ռիսկերի վերաբերյալ իրազեկվածությունը: Կթիրախավորվեն խոցելի խմբերը՝ երեխաները, կանայք, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք և ցածր եկամուտ ունեցող համայնքները: Այս կրթական արշավները կհարմարեցվեն տարբեր լսարանների՝ դպրոցների, երիտասարդական հարթակների և համայնքային իրազեկման գործիքների միջոցով: Գիտակցելով կլիմայական ազդեցությունների հոգեբանական և սոցիալական հետևանքները, երկիրը մտադիր է կլիմայական հարմարվողականության ծրագրերում ինտեգրել հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության ծառայություններ: Սա կներառի դպրոցական խորհրդատվության ընդլայնում, հոգեկան առողջության շարժական ծառայություններ և համայնքային անվտանգ գոտիների ստեղծում՝ հատկապես կենտրոնանալով կլիմայական սթրեսից՝ տեղահանությունից կամ ապրուստի կորստից տուժած երեխաների և երիտասարդների վրա: **Թիրախներ** • Առողջապահական հաստատությունների խոցելիության գնահատումների իրականացում՝ պարզելու կլիմայական ռիսկերին դրանց ենթարկվածության չափը և սահմանելու համապատասխան կառուցվածքային և գործառնական հարմարվողականության միջոցառումներ: • Մինչև 2035 թվականը 50 առողջապահական հաստատությունների արդիականացման ապահովում՝ համապատասխանեցնելով կլիմայակայուն և սեյսմիկ անվտանգության ենթակառուցվածքների չափանիշներին՝ կենտրոնանալով էներգաարդյունավետության և կլիմայակայուն նյութերի վրա: • Մինչև 2035 թվականը առողջության ապահովագրության հասանելիության ընդլայնում բնակչության 100%-ի համար՝ ընգրկելով կլիմայական պայմանների հետ կապված առողջապահական ռիսկերը: • Կլիմայական զգայուն հիվանդությունների կլինիկական ուղեցույցների ու գործելակարգերի վերանայում և թարմացում՝ ապահովելով ավելի արդյունավետ արձագանք ծայրահեղ եղանակային իրադարձություններին ՝ հաշվի առնելով երեխաներին և տարեցներին: • Արտակարգ իրավիճակներին արձագանքման և աղետների ռիսկերի նվազեցման կլինիկական գործելակարգերի ներառում առողջապահական հաստատությունների գործունեության մեջ՝ ներառյալ ջերմային ալիքների և ջրհեղեղների արձագանքման ծրագրերը:

- Վաղ նախազգուշացման և առողջապահական արձագանքման համակարգերի ներդրում (օգտագործելով արհեստական բանականությունը)՝ նախատեսված ջերմային ալիքների, ջրհեղեղների և հիվանդությունների բռնկումների դեպքերի համար՝ երեխաների և երիտասարդների համար նախատեսված արձագանքման կանոնակարգերով և ներառական հաղորդակցման ռազմավարություններով:
- Օդի աղտոտվածության հետ կապված շնչառական հիվանդությունների հաճախականության նվազեցում՝ բարելավելով տարիքային և հաշմանդամության խմբերով տարանջատված համաճարակաբանական հսկողությունը, հատկապես 5 տարեկանից փոքր երեխաների և տարեցների:
- Շրջակա միջավայրի աղտոտվածությունից բխող վնասակար ազդեցությունների բացահայտում, նպատակային կրթական և իրազեկման միջոցառումների իրականացում բնապահպանական անվտանգության և առողջ ապրելակերպի վերաբերյալ՝ թիրախավորելով երիտասարդությանը:
- Շրջակա միջավայրի և աշխատանքային անբարենպաստ պայմանների վնասակար ազդեցության նվազեցում հանրային առողջության վրա՝ անընդհատ թարմացնելով հիգիենիկ կարգավորումները և համապատասխան չափորոշիչների կիրառումը:
- Կլիմայի փոփոխությունից մարդու առողջության խոցելիության գնահատում և այդ ազդեցության նվազեցում՝ մշակելով և իրականացնելով առողջապահական հարմարվողականության գործողությունների ծրագրեր:

8. Միջոլորտային առաջնահերթություններ

Հայաստանում կլիմայական պայմաններին արդյունավետ հարմարվողականությունը պահանջում է միջոլորտային մոտեցում, որը ինտեգրում է գործողություններ տարբեր ոլորտների և կառավարման մակարդակների միջև: Օրինակ՝ կլիմայական առումով խելացի ոռոգման ներդրումը և ջրի պահեստավորման բարելավումը կարող են պաշտպանել գյուղատնտեսությունը երաշտից, մինչդեռ ջրային ռեսուրսների համալիր կառավարումը (ՋՌՀԿ) օպտիմալացնում է ջրի օգտագործումը տարբեր ոլորտներում՝ բարձրացնելով գյուղատնտեսության, ենթակառուցվածքների և առողջապահության դիմադրողականությունը:

Քաղաքներում, ինչպիսին Երևանն է, հարմարվողականության ներդրումը քաղաքաշինության պլանավորման մեջ՝ գոտիավորման, շինարարական կանոնակարգերի և հողօգտագործման միջոցով, օգնում է հաղթահարել ջերմային ալիքները, քաղաքային ջերմային կղզիները և ջրհեղեղների ռիսկերը: Ենթակառուցվածքային համակարգերի (տրանսպորտ, էներգիա, ջուր) ամրապնդումը ապահովում է ծառայությունների շարունակական մատուցումը կլիմայական ծանրաբեռնվածության պայմաններում:

ՏՏ և բարձր տեխնոլոգիաների ոլորտները կարող են արագացնել հարմարվողականությունը՝ հնարավորություն տալով իրական ժամանակում տվյալների հավաքագրման, մշտադիտարկման և որոշումների կայացման: Տեխնոլոգիական ստարտափները կարող են նորարարական լուծումներ առաջարկել քաղաքային և ոլորտային կլիմայական մարտահրավերների համար:

Միևնույն ժամանակ, արդյունավետ կլիմայական հարմարվողականությունը պահանջում է սոցիալական և հավասարության չափորոշիչների ներառում: Ցնցումներին արձագանքող սոցիալական պաշտպանության համակարգերի և հարմարվողականության ռեսուրսների հավասար հասանելիության ապահովումը թույլ է տալիս խոցելի խմբերին՝ ներառյալ կանանց, երեխաներին, հաշմանդամություն ունեցող անձանց և ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններին, ավելի լավ պատրաստվել, դիմակայել և

	վերականգնվել կլիմայական ցնցումներից: Համայնքային մակարդակում մասնակցային որոշումների կայացման, իրազեկության բարձրացման և ներառականության խթանումը ևս նպաստում է վարքագծային փոփոխություններին, սոցիալական համախմբմանն ու երկարաժամկետ դիմակայունության ամրապնդմանը բոլոր ոլորտներում: Այս առաջնահերթությունների ինտեգրումը ապահովում է, որ Հայաստանի հարմարվողականության ջանքերը լինեն համապարփակ, արդյունավետ և համապատասխան կայուն զարգացմանը: **Թիրախներ** • Կլիմայական տվյալների և ԱՍՀ-ի ներդրման համար ազգային հարթակի ստեղծում բոլոր ոլորտներում՝ ապահովելով, որ իրական ժամանակի կլիմայական տվյալները հիմք հանդիսանան ազգային և տարածաշրջանային մակարդակներում որոշումների կայացման համար: • Մինչև 2035 թվականը 150 միլիոն դոլարի միջոլորտային ֆինանսավորման մոբիլիզացում՝ մասնավոր հատվածի ներգրավմամբ՝ աջակցելու բազմաթիվ ոլորտներում հարմարվողականության միջոցառումներ ինտեգրող նախագծերին (օրինակ՝ ջրարդյունավետ գյուղատնտեսական գործելակերպեր՝ զուգորդված ջրային ենթակառուցվածքների արդիականացման հետ): • Մինչև 2035 թվականը ֆինանսավորման ներգրավում՝ մասնավոր հատվածի ներդրումների մեջ թվային կլիմայական հարմարվողականության լուծումների համար (օրինակ՝ կլիմայական ռիսկի գնահատման գործիքներ, գյուղատնտեսական մշտադիտարկման համակարգեր)՝ ապահովելով, որ մասնավոր հատվածը զգալիորեն նպաստի միջոլորտային հարմարվողականության համար SS լուծումների մշակմանը: • Մինչև 2035 թվականը աջակցում ստարտափների ստեղծմանը, որոնք կառաջարկեն քաղաքային հարմարվողականության դիմակայունության նորարարական լուծումներ: Այս ստարտափներն աջակցություն կստանան բիզնեսի աքսելերացիայի և ինկուբացիայի մեխանիզմների միջոցով՝ նպատակ ունենալով զարգացնելու նոր տեխնոլոգիաներ և բիզնես մոդելներ՝ քաղաքային տարածքներում առկա կլիմայական մարտահրավերներին դիմակայելու համար, մասնավորապես՝ ենթակառուցվածքների, էներգետիկայի և ջրային ռեսուրսների կառավարման ոլորտներում: • Լքված/չշահագործվող հանքերի ռեկուլտիվացիա: • Երևանի քաղաքապետարանի «Էներգիայի շաբաթ», «Մոդել Երևան» քաղաքային ակադեմիայի, «Բաց կառավարման շաբաթ» տարեկան միջոցառումների շրջանակներում կլիմայական բաղադրիչի գործարկում:
դ) Կիրառման և աջակցության կարիքներ, ինչպես նաև աջակցության մեխանիզմներ զարգացող	Հայաստանը, ինչպես շատ զարգացող երկրներ, կլիմայական հարմարվողականության ռազմավարությունների իրականացման հարցում կանգնած է էական մարտահրավերների առաջ, ներառյալ՝ սահմանափակ ֆինանսական միջոցները, տեխնիկական կարողությունները և տեխնոլոգիական առաջընթացի անհրաժեշտությունը: Այս մարտահրավերներն արդյունավետ հաղթահարելու համար անհրաժեշտ է նպատակային աջակցություն միջազգային գործընկերներից, այդ թվում՝ ֆինանսական աջակցություն, տեխնոլոգիաների հասանելիության ապահովում և կարողությունների զարգացման նախաձեռնություններ: ***Հարմարվողականությանն ուղղված աջակցության կարիքները***

երկիր համարվող Կողմերին	Հայաստանը նպատակ ունի ձևավորել իր հարմարվողականության պորտֆելը՝ ըստ գնահատված ֆինանսական պահանջարկի, որը կազմում է մոտավորապես **1.3 միլիարդ ԱՄՆ դոլար մինչև 2035 թվականը**՝ ապահովելով, որ ծրագրերի նախագծումն ու առաջնահերթությունների սահմանումը համահունչ լինեն թե՛ կլիմայական ռիսկերի ծավալին, թե՛ ռեսուրսների ռազմավարական բաշխմանը: Հայաստանը նպատակ ունի ապահովել այդ ֆինանսավորումը՝ այդ թվում ավելացնելով հասանելիությունը միջազգային կլիմայական ֆինանսավորման աղբյուրներին, մասնավորապես՝ նպատակային կլիմայական հիմնադրամներին և այլ բազմակողմ աղբյուրների: Հայաստանը նախատեսում է գործարկել Կլիմայի փոփոխության հարմարվողականության ֆինանսավորման մեխանիզմ (ԿՓՀՖ), որն ուղղված կլինի առաջնահերթ ոլորտներում հարմարվողականության համար միջոցների մոբիլիզացիային և համակարգմանը, և մասնավոր հատվածի ներգրավմանը՝ արտոնյալ ֆինանսավորման և ռիսկերի նվազեցման մեխանիզմների միջոցով: Հայաստանի հարմարվողականության առաջնահերթությունները պահանջում են միջազգային զգալի աջակցություն՝ գյուղատնտեսության, ջրի, առողջապահության, ենթակառուցվածքների, էներգետիկայի, էկոհամակարգերի և խոցելի համայնքների առջև ծառացած կլիմայական ռիսկերի ծավալն ու անհետաձգելիությունը հաղթահարելու համար: 41 հարմարվողականության միջոցառումների լիարժեք իրագործման համար անհրաժեշտ է ոչ միայն **498 միլիարդ ՀՀ դրամի** ֆինանսավորում (մոտավորապես 1.3 միլիարդ ԱՄՆ դոլար), այլև շարունակական տեխնիկական աջակցություն, տեխնոլոգիաների հասանելիություն և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ապահովում: ՄՀՋ (մոնիթորինգի, հաշվետվության և վավերացման) համակարգում կներառվեն գենդերային զգայուն ցուցանիշներ՝ կլիմայական խոցելիության և դիմակայունության առաջընթացը հետևելու համար՝ կանանց կազմակերպություններին ներգրավելով մոնիթորինգի գործընթացում: Սա կլրացվի կառավարման և թափանցիկության ամուր մեխանիզմներով՝ նպաստելու համար ԱՍՀ 3.0-ի ընդհանուր նպատակների իրականացմանը: Հարմարվողականության ֆինանսավորման և աջակցության հիմնական առաջնահերթ ոլորտներն են. • Հողերի և արոտավայրերի կայուն կառավարում՝ մինչև 2040 թ. հողերի դեգրադացիայի չեզոքության հասնելու նպատակով • Ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում և ոռոգման համակարգերի արդիականացում • Անտառապատում և անտառվերականգնում՝ որպես բնության վրա հիմնված լուծումներ • Կլիմայակայուն քաղաքային ենթակառուցվածքներ և առողջապահական համակարգեր • Առողջապահության, գյուղատնտեսության և վնասների ու կորուստների ապահովագրական սխեմաների ներդրում Ֆինանսավորումից բացի Հայաստանին անհրաժեշտ է տեխնիկական աջակցություն, տեխնոլոգիաների հասանելիություն և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում՝ հարմարվողականության երկրորդական ծրագրերը իրականացնելու, հարմարվողականությունը տեղական զարգացման պլանավորման մեջ ինտեգրելու, ինչպես նաև վաղ նախազգուշացման և կլիմայական տեղեկատվական համակարգերն ամրապնդելու համար: **Պատշաճ միջազգային աջակցության պայմաններում Հայաստանը հանձնառու է ամբողջությամբ իրականացնել հարմարվողականության իր առաջնահերթությունները՝ սահմանված ԱՍՀ 3.0-ում:**

ե) Կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների և ծրագրերի իրականացում, ներառյալ՝ I) Առաջընթացը և արդյունքներ II) Զարգացող երկրների հարմարվողականության ջանքերի ճանաչումը III) Համագործակցություն հարմարվողականության խթանման ուղղությամբ՝ ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում, ըստ անհրաժեշտության IV)Հարմարվողականության միջոցառումների իրականացման խոչընդոտներ, մարտահրավերներ և բացեր V) Լավագույն փորձ, քաղված դասեր և տեղեկատվության փոխանակում VI) Մշտադիտարկում և գնահատում	Հայաստանը կլիմայական հարմարվողականության համար համադրում է ոլորտային և միջոլորտային մոտեցումներ՝ ներառելով այն ազգային և տեղական զարգացման ծրագրերի մեջ: Արդեն իսկ զգալի արդյունքներ են արձանագրվել ջրային ռեսուրսների կառավարման, գյուղատնտեսության և ենթակառուցվածքների դիմակայունության ոլորտներում՝ ներառյալ ՀԱԾ-ը և ոլորտային ռազմավարությունների մշակումը: Սակայն իրականացման ընթացքում առերեսվում է խոչընդոտների, որոնցից են՝ տեխնիկական կարողությունների պակասը, սահմանափակ ֆինանսական ռեսուրսները և թույլ ինստիտուցիոնալ համակարգումը: Բացեր կան հետազոտությունների և քաղաքականության ինտեգրման, հարմարվողականության ազդեցության մշտադիտարկման և կորուստների ու վնասների հաշվառման հարցերում: Հայաստանը նպատակ ունի ընդլայնել ներդրումները և ուժեղացնել ինստիտուցիոնալ կարողություններն ու համակարգումը: Կլիմայի հարմարվողականությունը ներառվում է ազգային ռազմավարություններում՝ դիմակայուն ենթակառուցվածքների ծրագրերի, առողջապահության ոլորտի բարեփոխումների և վաղ նախազգուշացման համակարգերի միջոցով՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերին: Հայաստանի ջանքերը համահունչ են Փարիզյան համաձայնագրի և ՄԱԿ-ի ԿՓՇԿ հարմարվողականության համաշխարհային նպատակին: Երկիրը մասնակցում է միջազգային համագործակցությունների (օրինակ՝ ԱՍՀ գործընկերություն, ԿԿՀ, Ադապտացիոն հիմնադրամ, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ)՝ նախապատրաստական աջակցություն և տեխնիկական համագործակցություն ստանալու համար: Մասնավոր հատվածը ևս աճող դեր ունի ծրագրերի ձևավորման և քաղաքականության քննարկումներում: Հիմնական խոչընդոտներ մնում են՝ հարմարվողականության ֆինանսավորման պակասը, ինստիտուցիոնալ և մասնավոր հատվածի կարողությունների սահմանափակումները, տեղական մակարդակում ոչ համաչափ իրագործումը և դիմակայունության ներդրումների համար խթանների բացակայությունը: Այս մարտահրավերները հաղթահարելու համար Հայաստանը նախատեսում է ուժեղացնել տեղական կարողությունները, բարելավել միջոլորտային համագործակցությունը և իրականացնել ՀԱԾ-ը: Հայաստանի ձեռքբերումներից կարելի է նշել Հարմարվողականության հիմնադրամին ուղղակի հասանելիությունը և ԿՓՀՀՖ ստեղծումը, որոնք հնարավորություն են տալիս հարմարվողականության ծրագրերն իրականացնել համայնքային մակարդակում: Փորձի փոխանակումները և թվային կրթական մոդուլները օգնել են բարձրացնել իրազեկվածությունը և փորձով կիսվել այլ երկրների հետ: Մասնավոր հատվածի ներգրավվածությունը ԿԿՀ-Հայաստան ծրագրում ևս մատնանշում է կլիմայական համագործակցությունների համար ընդլայնելի մոդելի առկայությունը: Հայաստանը ստեղծում է մշտադիտարկման ու գնահատման ամուր համակարգ՝ առաջընթացին հետևելու համար, որն ապահովվում է ՄԱԶԾ-ի ԱՍՀ վերահսկման գործիքի միջոցով: Այս համակարգը թույլ կտա պարբերաբար և թափանցիկ կերպով վերանայել և ճշգրտել հարմարվողականության ռազմավարությունները՝ ապահովելու դրանց արդյունավետությունն ու համապատասխանությունը նոր սպառնալիքներին և կլիմայական տվյալներին:
զ) Հարմարվողականության գործողություններ և	Հայաստանի ԱՍՀ 3.0-ն ներկայացնում է հարմարվողականության միջոցառումներ, որոնք նվազեցնում են կլիմայական խոցելիությունը՝ միաժամանակ նպաստում են անցմանն առավել դիվերսիֆիկացված և կլիմայակայուն տնտեսության:

տնտեսական դիվերսիֆիկացման ծրագրեր, այդ թվում՝ մեղմմանն ուղեկցող օգուտներ բերող	Այս միջոցառումներն ընդգրկում են հիմնական ոլորտները՝ գյուղատնտեսություն, ջրային ռեսուրսներ, ենթակառուցվածք, անտառտնտեսություն, քաղաքային զարգացում, և ավելի շատ ուղղված են մեղմմանն ուղեկցող օգուտների ապահովմանը՝ համաձայն Հայաստանի ցածր արտանետումներով ռազմավարության:
է) Ինչպես են հարմարվողականության գործողությունները նպաստում միջազգային այլ շրջանակների և կոնվենցիաներին	Հայաստանի կլիմայական հարմարվողականության գործողությունները համապատասխանեցված են հիմնական միջազգային շրջանակներին՝ ամրապնդելով ազգային կլիմայական կայունությունը և նպաստելով գլոբալ նպատակներին: **Կայուն զարգացման նպատակներ** Հարմարվողականության միջոցառումներն ուղղակիորեն աջակցում են ԿԶՆ 13-ին (Կլիմայական գործողություններ) և նպաստում մի շարք ԿԶՆ-երի իրականացմանը, մասնավորապես. • ԿԶՆ 2՝ Զրոյական սով՝ կայուն գյուղատնտեսության և պարենային անվտանգության միջոցով: • ԿԶՆ 6՝ Մաքուր ջուր՝ ջրային ռեսուրսների կառավարման և հեղեղների վերահսկման բարելավման միջոցով: • ԿԶՆ 11՝ Կայուն քաղաքներ՝ կայուն ենթակառուցվածքների և քաղաքային պլանավորման միջոցով: • ԿԶՆ 15՝ Կյանքը ցամաքի վրա՝ անտառապատման և կենսաբազմազանության պահպանման միջոցով Այս միջոցառումները ներառված են Հայաստանի ՀԱԾ-ում, ոլորտային ռազմավարություններում և միջազգային պարտավորություններում: **Կոնվենցիա կենսաբանական բազմազանության մասին.** Հայաստանը խթանում է էկոհամակարգային մոտեցումը՝ կենտրոնանալով հողերի վերականգնման, անտառապատման և կենսաբազմազանության պահպանման վրա, նպաստելով Կոնվենցիայի նպատակներին՝ էկոհամակարգերը և էկոհամակարգային ծառայությունները պահպանելու ուղղությամբ: **ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա).** Հայաստանը աջակցում է UNCCD-ի նպատակներին իր հողերի դեգրադացիայի չեզոքացման թիրախների միջոցով՝ ուղղված արոտավայրերի վերականգնմանը, դեգրադացված հողերի անտառապատմանը և հողի արտադրողականության բարձրացմանը: Այս միջոցները նաև նպաստում են ածխածնի կլանմանը և կայունությանը: **Ռամսարի կոնվենցիա.** Ջրաճահճային տարածքների վերականգնումը, մասնավորապես Սևանա լճի ավազանում, համահունչ է Ռամսարի կոնվենցիայի նպատակներին: Ջրաճահճային տարածքները ածխածնի կարևոր կլանողներն են և հեղեղների դեմ պաշտպանիչ բուֆերների դեր են կատարում: Հայաստանը բնության վրա հիմնված լուծումների ինտեգրմամբ ուժեղացնում է կլիմայական կայունությունը և կենսաբազմազանությունը: **Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի շրջանակ.** Հայաստանի հարմարվողականության ռազմավարությունը ներառում է պաշտպանություն հեղեղներից, վաղ նախազգուշացման համակարգեր և աղետների պատրաստվածություն՝ համահունչ Սենդայի առաջնահերթություններին: Այս գործողությունները նվազեցնում են կլիմայական ռիսկերը և բարձրացնում համայնքների

	կայունությունը:
ը) Գենդերային մոտեցումների և ավանդական/բնիկ/տեղական գիտելիքների ներառումը հարմարվողականության ռազմավարություններում	Կլիմայի հարմարվողականության ռազմավարությունների մեջ գենդերային հարցերի և ավանդական գիտելիքի ներառումը էական է կայունության բարձրացնելու և ներառական զարգացում ապահովելու համար: Հայաստանում այս մոտեցումն աստիճանաբար ամրապնդվում է տարբեր նախաձեռնությունների և քաղաքականությունների միջոցով: ***Հայաստանի նախաձեռնությունները*** ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարությունը[14] սահմանում է կառավարության առաջնահերթությունները՝ կանանց հավասար մասնակցության ապահովում որոշումների կայացման գործընթացներին և գենդերային հավասարություն սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներում: Կանանց հարցերով խորհուրդը, որի ղեկավարը փոխվարչապետն է, պատասխանատու է այս քաղաքականության իրականացումը համակարգելու համար՝ ապահովելով, որ գենդերային հարցերը ներառված լինեն Հայաստանի կլիմայական գործողություններում և հարմարվողականության ծրագրերում: Հայաստանի կլիմայական քաղաքականության մոտեցումը ղեկավարվում է նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և դրա 26-րդ ընդհանուր մեկնաբանությամբ՝ ապահովելով, որ երեխաների իրավունքները, բարեկեցությունն ու մասնակցությունը լինեն կլիմայական հարմարվողականության և որոշումների կայացման գործընթացների կենտրոնում: Հայաստանում մեկնարկել են տարբեր հարմարվողականության նախագծեր՝ հատկապես համայնքներում՝ ուղղված տեղական հարմարվողական կարողությունների բարձրացմանը: Այս նախագծերը հաճախ ներառում են ավանդական գիտելիք և փորձ, ինչը թույլ է տալիս մշակութային առումով համահունչ և արդյունավետ լուծումներ մշակել համայնքային կայունությունը բարելավելու գործում: ***Ներառական և կայուն զարգացում Հայաստանում*** **Գենդերային պատասխանատու, երեխաների և երիտասարդների մասնակցությամբ քաղաքականությունների ամրապնդում.** Հայաստանը կշարունակի ամրապնդել իր գործող համակարգերը՝ ապահովելով, որ գենդերային վերլուծությունները ներառվեն կլիմայական հարմարվողականության բոլոր նախագծերում: Կանանց ակտիվ մասնակցության խթանումը որոշումների կայացման գործընթացներին հնարավորություն կտա, որ հարմարվողականության ռազմավարությունները արդյունավետորեն անդրադառնան կանանց կարիքներին՝ նպաստելով առավել ներառական կլիմայական գործողություններին: **Կլիմայակայուն ծառայությունների առաջնահերթություն կանանց և աղջիկների համար.** Նախատեսվում է հարմարվողականության ներդրումների նախագծում ջրամատակարարման, առողջապահության և կրթության ոլորտներում՝ ուղղված գենդերային հատուկ կլիմայական խոցելիություններին, հիգիենային, մայրական առողջությանը ջերմային ճնշումների ներքո կամ դպրոցների հասանելիությանը՝ կլիմայից տուժած տարածքներում: **Գենդերային զգայուն կանաչ աշխատատեղերի և տնտեսական դիվերսիֆիկացիայի խթանում.** Կանանց համար նախատեսվում

[14] ՀՀ կառավարություն, ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը, https://www.e-draft.am/projects/6821

	են վերապատրաստումներ և ձեռնարկատիրական ծրագրերում ներառման հնարավորություն վերականգնվող էներգետիկայի, անտառապատման, անտառվերականգնման և էկոզբոսաշրջության ոլորտներում՝ միաժամանակ վերացնելով կառուցվածքային խոչընդոտները զբաղվածության համար: **Ավանդական գիտելիքների պահպանություն և ինտեգրում.** Հայաստանը հանձն է առնում ազգային և տեղական հարմարվողականության ռազմավարություններում ներառել տեղայնացված գիտելիքները: Պաշտոնական մեխանիզմների ստեղծումը ավանդական էկոլոգիական փորձի պահպանման և ներառման համար կապահովի տվյալ տեղանքին բնորոշ լուծումներ՝ ամրապնդելու Հայաստանի համայնքների կայունությունը: Հայաստանը հարմարվողականության պլանավորման մեջ կներառի նաև երեխաների նկատմամբ զգայուն ռիսկերի գնահատումը՝ հայտնաբերելու, թե ինչպես են ջերմային ալիքները, երաշտները և աղետները ազդում սննդի, կրթության, առողջության և հոգե-սոցիալական բարեկեցության վրա: **Համայնքների կարողությունների զարգացում.** համայնքների, հատկապես երեխաների, երիտասարդների և կանանց հզորացում գիտելիքով և գործիքներով՝ մասնակցելու կլիմայական հարմարվողականության պլանավորմանը և իրականացմանը, ինչպես նաև կլիմայական կրթության և կանաչ հմտությունների զարգացման խթանում՝ դպրոցական ծրագրերի և ոչ ֆորմալ կրթության միջոցով՝ կենտրոնանալով կայունության, հարմարվողականության և կայուն փորձի վրա: Հիմնվելով ազգային ուսումնական ծրագրի պարտադիր նախագծային ուսուցման մոտեցման վրա՝ Հայաստանը կնպաստի միջառարկայական կլիմայական կրթության զարգացմանը, որը կկապի դասարանային ուսուցումը համայնքային ծրագրերի հետ՝ հնարավորություն տալով աշակերտներին և երիտասարդներին կիրառել հարմարվողականության և էկոհամակարգերի դիմակայունության գործնական լուծումներ: **Գենդերային և տարիքային զգայուն և հավասարության կենտրոնացմամբ մշտադիտարկման և գնահատման համակարգերի մշակում.** Հայաստանը գիտակցում է, որ անհրաժեշտ է մշակել գենդերային և տարիքային զգայուն մշտադիտարկման և գնահատման համակարգեր՝ հարմարվողականության ռազմավարությունների արդյունավետությունն ու առաջընթացը գնահատելու համար: Այս համակարգերը կապահովեն, որ հարմարվողականության ջանքերը հասնեն համայնքի բոլոր անդամներին: **Հաշմանդամություն ունեցող անձանց ներառում հարմարվողականության բոլոր ոլորտներում.** Կիրառել ունիվերսալ նախագծման սկզբունքներ՝ ֆիզիկական և տեղեկատվական մատչելիությունն ապահովելու համար՝ հատկապես ծայրահեղ եղանակային իրադարձությունների և տեղահանման ժամանակ: **Վաղ նախազգուշացման համակարգերի, ապաստարանների և առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովում.** Հաշմանդամություն ունեցող անձանց ներառել արտակարգ իրավիճակների պլանավորման մեջ և հարմարեցնել հարմարվողականության ծառայությունները՝ ելնելով նրանց շարժունակության, զգայական և աջակցության կարիքներից:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՊԱՕ	Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում
ԱՍՀ	Ազգային մակարդակով սահմանված գործողություններ
ԱՐՄՍՏԱՏ	ՀՀ վիճակագրական կոմիտե
Գգ	Գիգագրամ
ԳՏՊ	Գլոբալ տաքացման պոտենցիալ
ԵԱԶ	Երկամյա առաջընթացի զեկույց
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ԵԹԶ	երկամյա թափանցիկության զեկույց
ԷԱ	Էներգաարդյունավետություն
ԷՄ	էլեկտրական մեքենաների
ԹԸՇ	Թափանցիկության ընդլայնված շրջանակ
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակների
ԿԿՀ	Կանաչ կլիմայի հիմնադրամ
ԿՄԿ	Կեղտաջրերի մաքրման կայան
կՎտժ	Կիլովատտ-ժամ
տ ն .հ.	տոննա նավթային համարժեք
ԿՓՀՖ	Կլիմայի փոփոխության հարմարվողականության ֆինանսավորման մեխանիզմ
ԿՓՇԿ	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա
ԿՓՓՄԽ	Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խումբ
ՀԱԾ	Հարմարվողականության ազգային ծրագիր
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԸԳՀ	ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՀԾԿՀ	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՕՀՕՓԱՏ	Հողօգտագործում, հողօգտագործման փոփոխություն և անտառտնտեսություն
ՀՖԱ	Հիդրոֆտորածխածիններ
ՉՀՀ	Չափումներ, հաշվետվողականություն և հավաստագրում
ՋԳ	Ջերմոցային գազեր
ՋԳ-ՑԱԶԵՌ	ՀՀ ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարություն

ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ՏՀՏ	Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
CH_4	Մեթան
CO_2	Ածխաթթու գազ
COP28	ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության կողմերի համաժողով (28-րդ նստաշրջան)
PM2.5	Մանր կոշտ մասնիկներ, որոնց տրամագիծը ≤2.5 միկրոմետր է
WASH	Ջուր, սանիտարիա և հիգիենա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ